

Ն.Ռ. ԹՈՎԱՍՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՄԻՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
XV-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЭКОНОМИКИ

Н. Р. ТОВМАСЯН

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКАЯ  
МЫСЛЬ В АРМЕНИИ  
В XV-XVIII ВЕКАХ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1982

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ն. Ռ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՄԻՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
XV-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

1706



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1982

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ տնտեսագիտության քեկնածու  
Ռ. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել զբախստներ՝  
պատմ. գիտ. դոկտոր Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆԸ և տնտեսա-  
գիտության քեկնածու Լ. Զ. ԱՆԱՆՅԱՆԸ

Թրվմասյան Ն. Ռ.

№ 794 Սոցիալ-տնտեսագիտական միտքը Հայաստանում  
XV—XVIII դարերում /Պատ. խմբ. Ռ. Ն. Սարինյան  
Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 150 էջ:

Աշխատության մեջ XV—XVIII դարերի հայ պատմագիտական,  
իրավագիտական, հրապարակախոսական գրականության ուսումնա-  
սիրության հիման վրա լուսաբանվում են տարբեր հեղինակների  
կատարած տնտեսական երևույթների վերլուծություններ, գիտակա-  
նորեն արժեքավորվում և ցույց են տրվում նրանց դերն ու տեղը  
հայ տնտեսագիտական մտքի պատմության մեջ:

Նախատեսված է տնտեսագետների, պատմաբանների և սոցիո-  
լոգների համար:

0602000000

ԳՄԿ 65 . 02 (2 Հ)

----- 11—82

33 . 049 (C 43)

703 (02)—82

### ՊԱՏՄԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

XV—XVIII դարերը հայ ժողովրդի պատմության ողբեր-  
գական այն ժամանակներն են, երբ մոնղոլական իշխանու-  
թյուններին հաջորդեցին Լենկթեմուրի արշավանքները, իսկ  
այնուհետև հաստատվեց Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուր-  
քիայի բռնապետությունը: Այս ժամանակաշրջանում Հայաս-  
տանը գրեթե անընդհատ մղվող պատերազմների թատերաբեմ  
դարձավ թաթարական ցեղախմբերի և թուրքական ու պարս-  
կական կայսրությունների միջև: Բազմիցս ավերվեց և կո-  
ղոպտվեց երկիրը, խոշտանգված ժողովրդի զգալի մասը  
լքեց հայրենիքը և զանազան երկրներում ստեղծեց գաղթ-  
օջախներ:

Բնակչության պարբերաբար կրկնվող բռնի տեղահա-  
նումն ու գերեվարումը ամայացնում էին երկիրը, ոչնչացնում  
աշխատունի ու արտադրության միջոցները: Թուրքական և  
պարսկական իշխանությունները, ասիական բռնակալությա-  
նը հատուկ քաղաքականության համաձայն, նվաճած երկրը-  
ներում կատարած ավերածությունները իրենց ապահով տի-  
րապետության հիմնական պայմանն էին համարում: Հանդա-  
մանք, որը Մարքսի բառերով ասած. «Ֆեոդալիզմի ամենա-  
ցածրագույն և բարբարոսական աստիճանի վրա գտնվող»<sup>1</sup>  
նվաճողների բնորոշ առանձնահատկություններից մեկն էր:

Հայ ազնվականությունը, որ դարեր շարունակ ժողովրդի  
ռազմական կարողությունների կազմակերպիչն էր եղել, XIV  
դարից սկսած աստիճանաբար կազմալուծվում և կորցնում  
էր իր հասարակական դեմքը: Աշխատավոր ժողովրդի հետ  
անպատիժ կողոպտվում էին նաև վանական կալվածքներն ու

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 9, М., 1957, с. 6.

եկեղեցական հարստութիւնները: Բազմաթիւ բնակավայրեր ամայանում էին, իսկ այնուհետև բնակեցվում բուրդ և թուրք քոչվոր ցեղախմբերի կողմից:

Ռազմական արշավանքները հսկայական միջոցներ էին կլանում, որոնք բամբվում էին աշխատավոր ժողովրդից: Շուրջ երեք տասնյակ հարկերից բացի, հայ աշխատավորները գանձույթներ էին վճարում նաև վանքերին, հայ մելիքներին ու խոջաներին: Այդ մասին ուշագրավ հաղորդումներ կան մեր պատմիչների աշխատութիւններում:

Կարճատև և փոքրիշատե տևական զինադադարների ժամանակամիջոցում աշխատավոր ժողովուրդը նորից կառուցում էր, զարգացնում գյուղատնտեսութիւնը, ծաղկում էին արհեստները, աշխուժանում էր ներքին ու արտաքին առևտուրը: Մեր պատմիչները գրում են, որ առևտրական քարավանները հայկական գավառներից գնում էին մետաքս, բամբակ, բրինձ, գինի, յուղ, պանիր, մորթիներ և այլ ապրանքներ: Միջազգային շուկաներում հայտնի էին հայկական գորգերը, գործվածքները, ոսկերչական իրերն ու արդուզարդի առարկաները: Թուրքիայի և Պարսկաստանի խոշոր քաղաքներում, ինչպես նաև հայ գաղթօջախներում, իրենց արվեստով աչքի էին ընկնում հայ արհեստավորները, իսկ գործունեութիւն մասշտաբներով ու հարստութիւնամբ՝ հայ առևտրականները: Նրանք ստեղծում էին իրենց համաքարութիւններն ու առևտրական ընկերութիւնները, որոնք պաշտպանում էին նրանց իրավունքներն ու պայմաններ ստեղծում գործունեութիւն ընդլայնման համար: Հատկապես մեծ էր առևտրական ընկերութիւնների դերը, որոնցից մի քանիսը պայմանագրային հարաբերութիւնների մեջ էին նույնիսկ առանձին պետութիւնների հետ: Հատկանշական է այն իրողութիւնը, որ XVII դարի վերջին տասնամյակում Արևելքի վաճառականներից Ռուսաստանի վրայով եվրոպական երկրների հետ առևտուր անելու իրավունք ունեին միայն Նոր Զուլայի հայ առևտրական ընկերութիւն անդամները:

XVIII դարից սկսած աստիճանաբար թուլանում են հայ առևտրական կապիտալի տնտեսական կապերը թուրք-իրանական ֆեոդալական շրջանների հետ: Հայ առևտրականներն

իրենց հարստութիւններն սկսում են շրջանառութիւն մեջ դնել եվրոպական երկրներում ու հայկական գաղթօջախներում: Հայ խոջաների առաջավոր ներկայացուցիչները միաժամանակ լինելով նշանավոր քաղաքական դեմքեր, կարևոր դեր էին խաղում հատկապես ռուս-իրանական և ռուս-թուրքական դիվանագիտական աշխարհում և իրենց գործունեութիւնամբ նպաստում հայերի ռուսական կողմնորոշման գործին: Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի զարթոնքը որոշակի հունի մեջ է մտնում ռուսական պետութիւն ուժեղացման, Արևելքում և հատկապես Անդրկովկասում նրա ակտիվ քաղաքականութիւն ծավալման ընթացքում: Ռուսական գործերի հաղթարշավները և ցարական կառավարական շրջանների խոստումները բորբոքում էին հայ աշխատավորների սրտում դարերով ծխացող ազատագրական պայքարի կայծերը, որոնք XVIII դարի 20-ական թվականներին բռնկվեցին հանձինս սղնախների և Գավիթ-Բեկի դիտավորած զինված ապստամբութիւնների:

Ազգային-ազատագրական շարժումը բեկում է առաջացնում հայ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառներում: Երկրի ներքում հասունացող տարերային խմորումները տեսական ու գործնական կաղապարումների կարիք ունեին: Հայ իրակա-նութիւն մեջ երկրորդ հազարամյակի սկզբներից ծավալվող տնտեսական ու քաղաքական կյանքի աշխուժացումը, որն ընդհատվեց այլազգի բռնապետութիւնների բարբարոսական արշավանքներով, XVII—XVIII դարերում աստիճանաբար վերսկսվում էր՝ թեպետ թույլ արտահայտութիւններով: Այս գործում նշանակալից դեր էին խաղում հայկական շատ շրջաններում գոյատևող դպրոցները, որոնք աշխարհիկ բազմաթիւ գիտութիւնների գծով տալիս էին ականավոր գիտնականներ: Հատկապես նշանակալից էր Սյունիքի, Նոր Զուլայի, էջմիածնի, Մխիթարյան դպրոցների գործունեութիւնը, որոնց սաները գրական ինքնուրույն և թարգմանական հարուստ ժառանգութիւն են թողել: Միջազգային ապրանքաշրջանառութիւն ոլորտներում հայ առևտրականների գործունեութիւնն էլ ավելի ընդլայնելու համար պահանջվում էին համապատասխան գիտելիքներ աշխարհագրութիւն, շափուկը-

շիռների ու գրամաշրջանառության կանոնների, թվաբանության, երկրաչափության և կիրառական այլ գիտությունների վերաբերյալ: Գաղթօջախներում գործող տպարաններում հրատարակվում էին գիտության տարբեր ճյուղերի վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ: Բնորոշ է նաև այն, որ ինչպես մյուս երկրներում, Հայաստանում նույնպես տարածվում է ալքիմիան: Ոսկի ստանալու մարմաշը վաղուց հանգիստ չէր տալիս նաև գիտնականներին: Հայ ալքիմիկոսները, սակայն, իրենց որոնումների ընթացքում նպաստեցին արժեքավոր մի շարք ներկերի, դեղանյութերի, մագաղաթների արտադրությանը, արհեստագործության զարգացմանը:

Տնտեսական և քաղաքական կյանքի բնորոշ առանձնահատկություններից մեկն այն էր, որ աշխարհիկ գիտությունները ճանապարհ էին հարթում նաև կրոնավորների շրջանում: Վարդապետ քարոզիչների աշխատությունները հարուստ են կյանքի երևույթների բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, փիլիսոփայական վերլուծություններով: Առանձնապես ուշագրավ են Առաքել Դավրիժեցու աշխատության էջերը՝ նվիրված Բարսեղ վարդապետի գործունեությանը<sup>2</sup>: Այս ժամանակներում է, որ կրոնական խավարամուլությունը հակադրվում է մի նոր նշանաբան, ըստ որի «լավ է շատագետ մեղաւոր, քան անգետ արդար»:

Ազգային-ազատագրական շարժումների անմիջական արգասիքն էր քաղաքական-հրապարակախոսական այն գրականությունը, որի ստեղծման առաջամարտիկը Շահամիրյանի խմբակն էր Մադրաս քաղաքում: XVIII դարի առաջին տասնամյակներից սկսած հայ մտավորականության գրեթե բոլոր խավերը հայերի ազատագրության հարցը կապում էին Ռուսաստանի ռազմական գործողությունների հետ: Ազատագրական սլաքարի ինչպես տեսական, նույնպես և գործնական: Խնդիրների լուծումը օրակարգի հարց էր դառնում: Դարի

երկրորդ կեսում արդեն ստեղծվեցին ազատագրական շարժման տեսության այնպիսի գոհարներ, ինչպիսիք էին Շահամիր Շահամիրյանի և Մովսես Բաղրամյանի աշխատությունները, կազմվում են ցարական կառավարության և ապագահայկական պետության միջև կնքվելիք պայմանագրերի տեքստեր: Հովսեփի էմինը Անդրկովկաս էր գալիս կամավորական խմբեր ստեղծելու, ռուսական ու վրացական զորքերի ռազմական գործողությունները ղեկավարելու իր ընդարձակ ծրագրերով: Էջմիածինը, որ հազարամյա ընդմիջումից հետո XV դարի կեսերից կրկին հայերի միասնական հոգևոր կենտրոնն էր դարձել, նպաստավոր պայմաններ էր ընձեռում ազատագրական շարժումների ծավալման՝ ու խորացման համար:

Քուրբական ու պարսկական լծից հայ ժողովրդի ազատագրման անհրաժեշտությունը որպես հասունացած հարց էր ընդունվում հայ մտավորականության բոլոր խավերի կողմից: Սակայն, ինչպես և պետք էր սպասել, հասարակական տարբեր հոսանքների միջև տարաձայնությունները ծավալվում էին, մի կողմից, ազատագրական պայքարի մեթոդների և ժամկետների, մյուս կողմից, ապագա Հայաստանի հասարակական-քաղաքական կառուցվածքին վերաբերող հարցերի շուրջը: Գոյություն ուներ երկու ուղղություն՝ կղերաֆեոդալական և բուրժուալուսավորական: Առաջին հոսանքի ներկայացուցիչները հայերի ազատագրումը հիմնականում կապում էին ռուսական զորքերի արշավանքների հետ և զգուշանում տեղերում վճռական միջոցների դիմելու ծրագրերից: Այս հողի վրա տարաձայնությունները ծավալվեցին Շահամիրյանի խմբի և էջմիածնի կաթողիկոսների միջև, որոնք մերժում էին առաջինների դիմված ապստամբություններ կազմակերպելու առաջարկները և հալածում այդ գործի իրականացման համար Հայաստան ժամանած Հովսեփի էմինին: Ապագա Հայաստանի քաղաքական կառուցվածքի վերաբերյալ կա Ռուսաստանի հետ կնքվելիք դաշնագրի երկու տարբերակ: Ըստ ռուսահայերի հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղունյանի, ազատագրված Հայաստանը պետք է լիներ Ռուսաստանից վասալական կախման մեջ գտնվող, սակայն ճորտատիրական իրա-

<sup>2</sup> Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, ի Վաղարշապատ, 1884, գլ. 29. Թվարկելով հին աշխարհի իմաստունների աշխատությունները, Բարսեղ վարդապետը իր աշակերտներին ասում էր, որ դրանք բոլոր տեսակի գիտությունների յուրացման համար սկզբնաղբյուրներ են:

վունքից դերժ ֆեոդալական միապետություն, իսկ Շահամիր-  
յանը առաջա Հայաստանը ներկայացնում էր որպես «ազա-  
տության, հավասարության և եղբայրության» հայտնի սկզբ-  
բունքների վրա խառնված բուրժուական հանրապետություն:  
Իր առաջադիմական բովանդակությամբ հանդերձ, Շահամիր-  
յանի խմբակի նախագիծը, անշուշտ, ուտոպիական բնույթ  
ունենր, քանի որ Ռուսաստանի ֆեոդալական միապետությունը  
բուրժուական հանրապետություն ստեղծելու ծրագիր ընդու-  
նել չէր կարող<sup>3</sup>:

<sup>3</sup> Սովետահայ պատմագրության մեջ հիշյալ ժամանակաշրջանի ազա-  
տագրական շարժումների ընթացքի, դրանց խնդիրների բնութագրման շուրջը  
ստեղծվել է հարուստ գրականություն: Դրանցից մեր ուսումնասիրության  
հետ առավել անմիջականորեն առնչվում են՝ А. Р. Иоаннисян, Россия и  
армянское освободительное движение в 80-их годах XVIII столетия. Ереван, 1947. նույնի՝ Иосиф Эмин, Ереван, 1945, Ա. Գ. Հավ-  
հանիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք  
երկրորդ, Երևան, 1959, Գ. Զ. Գրիգորյան, Հայ առաջավոր հասարակա-  
կան ջաղաքական մտքի պատմությունից, Երևան, 1957, Լ. Ս. Անասյան,  
Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում XVIII դարում,  
Երևան, 1961, Арутюнян П. Т., Освободительное движение армян-  
ского народа в первой четверти XVIII века. М., 1954.

ԱՌԱՋԻՆ ԳՆՈՒՅ

## ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՄԱՏԹԵՈՍ ՋՈՒՂԱՅՆՑՈՒ ՋԵՌԱԳԻՐԵՐՈՒՄ

### 1. ՄԱՏԹԵՈՍ ՋՈՒՂԱՅՆՑՈՒ ԱՇԽԱՐՀԱՅՑՔԸ

Մատթեոս Ջուղայեցին հայ միջնադարյան այն ականա-  
վոր մատենագիրներից է, որի ձեռագիր աշխատությունները  
քիչ են ուսումնասիրված, և հեղինակը երկար տարիներ գրե-  
թե անհայտ էր մնացել մեր ժողովրդի մտավոր մշակույթի  
պատմության անդաստանում: Մատթեոս Ջուղայեցու կյանքի  
և գրական ժառանգության լուսաբանությամբ առաջին անգամ  
հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ Լ. Ս. Խաչիկյանը<sup>1</sup>,  
որով և հնարավորություն ստեղծվեց այդ նշանավոր հեղի-  
նակի գրական հարուստ ժառանգության ուսումնասիրության  
համար:

Մատթեոս Ջուղայեցին կրոնական մտավորականությանը  
հայտնի է դառնում XIV դարի 90-ական թվականներից: Նրա  
գրական գործունեությունը ծավալվում է հիմնականում Տա-  
թևի վանքում, որի նշանավոր վարդապետներից էր նա:

Մատթեոս Ջուղայեցին շուրջ երկու տասնամյա ստեղծա-  
գործական կյանքի ընթացքում թողել է վեց ավետարանա-  
կան մեկնություններ և ուսումնասիրություններ, շուրջ 50 քա-  
րոզ, որոնք հատկապես արժեքավոր են սոցիալ-տնտեսագի-  
տական մտքի պատմության համար:

Նրա կրոնափղեալիստական պատմափիլիսոփայության

<sup>1</sup> Լ. Ս. Խաչիկյան, Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությու-  
նը, «Բանբեր մատենագրանի», № 3, Երևան, 1956: Այս գլխում Մատթեոս  
Ջուղայեցու մասին կենսագրական և մատենագրական տեղեկությունները  
վերցված են Լ. Ս. Խաչիկյանի սույն աշխատությունից:

հիմքն ու ելակետը եղել է աստվածային արարչագործությունը, որի էությունը, «ոչ էր արժան մեզ ի մահկանացու բնութիւնս իմանալ ինչպէս և զամենայն ոչ գիտեմք, բայց միայն հաւատով ըմբռնեմք»<sup>2</sup>: Ինչպես և իր ուսուցիչ Գրիգոր Տաթևացին, Մատթեոս Զուղայեցին սահմանափակում է գիտութեան շրջանակները՝ հավատի սահմաններն ընդլայնելու նպատակով: Ըստ ավետարանական կոսմոգոնիայի աստված աշխարհն ստեղծել է «յոշնչէ»<sup>3</sup>, որը մենք «հաւատով ճանաչեմք, այլ ոչ կարեմք մտօք քննել զնա»<sup>4</sup>: Բայց երբ հեղինակը այս ավետարանական գոգմաներից անցնում է կոնկրետ ուսումնասիրությունների բնագավառը, պարզվում է, որ այդ «յոշնչէ» ստեղծված աշխարհը կազմված է շորս նյութական տարրերից՝ հող, ջուր, օդ և հուր, որոնք կենդանական աշխարհի գոյության պայմաններն են և նյութական բարիքների աղբյուրը: Այդ տարրերի օգտակար հատկությունների հանգամանորեն նկարագրությունն անհրաժեշտ է եղել հեղինակին ցույց տալու համար, որ դրանց ճանաչումն ու օգտագործումը կազմում է հասարակության զարգացման բուն բովանդակությունը: Եվ ահա այստեղ հավատը իր տեղը զիջում է իմացությանը. Աստվածաշնչի առեղծվածային աշխարհը դառնում է «իմանալի և զգալի»<sup>5</sup>: Ըստ որում, իմացությունը երկաստիճան է՝ իմաստության տեսակներին համապատասխան: Բնական իմաստությունը, «որ ըստ ստեղծանել լինի ամենայնի»<sup>6</sup> անզոր է թափանցել երևույթների էության խորքը, «քանզի ի վեր երևոյթն հայի», ուստի և մարդիկ հաճախ թյուրիմացության մեջ են ընկնում<sup>7</sup>: Իմաստության մյուս տեսակն է «կերթական զոր առնումք աշխատանօք»<sup>8</sup>, «յորժամ ուսանիմք.

2 ՉՍՄ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ՝ «Մատենադարան» (այսուհետև՝ Մատենադարան), ձեռագիր 2229, էջ 264 բ:

3 Մատենադարան, ձեռագիր 2114, էջ 103ա:

4 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 265բ:

5 Նույն տեղում, էջ 264բ:

6 Նույն տեղում, ձեռագիր 2157, էջ 174բ:

7 Նույն տեղում, (ընդգծումը մերն է— Ն. Ք.):

8 Նույն տեղում, ձեռագիր 2157, էջ 174բ:

զամենայն ինչ արուեստ զբան»<sup>9</sup>: Այս իմացությունն արդեն երևույթների էության գիտական ճանաչման ուղին է, քանի որ բնական իմաստությունն հարստանում է տեսական ու գործնական գիտելիքներով, որը և հնարավորություն է տալիս երևույթների մակերեսից թափանցել դրանց էության խորքը:

Երկիրը կազմող այս շորս տարրերը սերտորեն կապված են միմյանց հետ, և դրանց անքակտելի շաղախը աշխարհի օրինաչափ զարգացման նյութական պատվանդանն է: «Երկիր ասելով զշորս տարրս նշանակէ... և աստուած արար շորս տարրերքս զի անխախտ լիցի տարրերքտ»<sup>10</sup>: Աշխարհի նյութականության կարևորությունն այնքան է կլանում հեղինակին, որ «տարի» բառի ստուգաբանությամբ ընդգծում է ժամանակի նյութական բնույթը. «տարր ասել զնիւթ նշանակէ, զի ոչ լինի նիւթոյն ոչ գոյ ժամանակ, վասն որոյ տարի, նոյնպէս ստուգաբանի տարրի, այսինքն նիւթականց ժամանակն, քանզի ոչ գոյ նիւթոյն ոչ գոյն տարիքն»<sup>11</sup>:

Ավելի քան ուշագրավ է, որ Զուղայեցին աստծու աշխարհաշինությունը նմանեցնում է արհեստավորի գործունեությանը. «Շրջի աստուածային հոգին, ինչպես միտք արուեստաւորի վերայ նիւթոց»<sup>12</sup>: Աստված երկիրն ստեղծեց շորս տարրերից, քանի որ «նախ զի արհեստաւորք շորեք անկյունի կազմեն զամենայն քարինս, զի ունի վեց երես, որ ամենայն կողմանց միաբանքն... երկրորդ, զի շինութիւն ամենայն շինուածոյ շորս ինչ պիտանա. հող և քար, փայտ և ջուր»<sup>13</sup>: Նյութական բնությունը անընդհատ շարժվում և փոփոխվում է: Աստված առաջին օրն ստեղծեց երկինքը, որ «անհասանելի բարձր է, ոչ գիտել սկիզբն և վախճան... մշտաշարժ է, և ոչ երբեք դադարի»<sup>14</sup>: Այս տողերում, անսահմանության գաղափարի բնութագրման հետ միաժամանակ,

9 Նույն տեղում, էջ 158բ:

10 Նույն տեղում, էջ 266ա:

11 Նույն տեղում, էջ 271ա:

12 Նույն տեղում:

13 Նույն տեղում, էջ 266ա:

14 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 265ա—265բ:



ասված է այն մեծիմաստ ճշմարտությունը, որ շարժումը բնության անբաժան հատկությունն է: Ըստ որում, հեղինակը տարբերում է շարժման երկու տեսակ. «նիւթական բնութիւնս մեր կրկին փոփոխումն ունի: Մինն նման փոփոխումն է, և միւսն հակառակն»: Նման փոփոխման դեպքում տեղի են ունենում միայն քանակական տեղաշարժեր «ի նման փոխելով էությունը մնա»: «Իսկ հակառակն է լոյս ի գիշեր փոխի և գիշերն ի ցերեկ: Եւ զայս նախախնամութիւն զաստուածային արար. զի հակառակն փոխելով հաճախ մարմինն»<sup>15</sup> (ընդգծումը մերն է—Ն. Թ.): Միանգամայն որոշակի է, որ հակառակ փոփոխումը դիալեկտիկական զարգացումն է, նորն առաջանում է հնի բացասման հիման վրա, երբ նախկինը «հանգչում» է, և դրա շնորհիվ է, որ տեղի են ունենում էական փոփոխություններ: Այս միտքը ավելի ցայտուն է արտահայտված սերմի ծլման կոնկրետ օրինակով: «Սերմն նախ զարմատն ի ներքոյ տարածէ ի սիրտ երկրի և ապա զլուխն արտաքս բերէ... զի թեպէտ մի է հատ սերմանն որ անկանի յերկիր, այլ ունի զօրութիւն ծխօտս և ծունկս հանել և անտի զհասկն... զի նախ ծաղկի և ասպ հետոյ կատարի պտղով... զի մի անհատն բազում ճիւղք առաջ բերեն»: Որակական փոփոխությունների այս շղթան տեղի է ունենում սերմած հատիկի բացասման պայմաններում «զի նախ մեռանի սերմն և ապա աճէ»<sup>16</sup>:

Տեսական և գործնական իմացությունների փոխհարաբերությունը միջնադարյան փիլիսոփայության կարևոր հարցերից մեկն է եղել: Մեր իդեալիստ վարդապետը խոսքով ընդգծում է տեսականի առաջնությունը գործնականի նկատմամբ. «Պարտ է իմանալ զի ամենայն շափող ժամանակաց գործոց մտաց տեսութիւն է, և կամք յորդորիչ սոցա վասն որոյ նախ պարտ է զմիտս հնազանդեցուցանել ի ձեռն որոյ գործի ամենայն ինչ, և զայս ուսանիլն առնէ... եւ դարձեալ, զի նախ տեսականն է, և ապա գործնականն, և յայսմանէ յայտ է, թէ ուսանելն առաջինն է պատուական քան զգործ-

<sup>15</sup> Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 111բ:

<sup>16</sup> Նույն տեղում, ձեռագիր 1357, էջ 159ա:

նական»<sup>17</sup>: Ինչպես պարզվում է, տեսականի առաջնության ընդգծումը Զուղայեցու մոտ սոսկ հայտարարության բնույթով է: Ասված է այն, ինչ պետք է ասվեր ի պաշտոնն, իսկ փաստարկումներն ու հիմնավորումները գրեթե բացակայում են: Այս տեսակետից առավել ուշագրավ են գործնական իմացության վերաբերյալ նրա դատողությունները. «բայց այդ թէպէտ զուսանիլն առաջ ասացաք. բայց գործնացանէ զուսումն, զի առանց գործոյ ոչինչ են: Զորօրինակ. արհեստաւոր ինչ յորժամ զարհեստն գործէ յայն ժամ շահի ի նմանէ, քան թե ի մտի ունիցի: Այսպես և ամենայն ուսումն գիտութեան և առաքինութեան, թե գործէ ապա առնու զշահաւորանաց ուսման, իսկ թե ոչ առնու ոչ ունի վարձս. նա թէ տանջանս մեծ առնու՝ գիտօղն և ոչ առնօղն»<sup>18</sup>: Գործնականի կարևորությունն այստեղ հիմնավորված է անառարկելի փաստարկումներով: Առանց գործնական կիրառությունների տեսությունը «ոչինչ» է, մտքի ապարդյուն մարզանք միայն: Արհեստավորի գործունեության բուն բովանդակությունը նյութական բարիքների արտադրությունն է, իսկ նրա գիտելիքները դրա համար սոսկ միջոց, նախադրյալներ են միայն: Այս նույն միտքը Զուղայեցին զարգացնում է նաև մի այլ առիթով: «Գիտելի է փիլիսոփայութիւն բաժանէ զիմաստութիւն յերկուս ի տեսականն և ի գործնականն»<sup>19</sup>, գրում է նա և ավելացնում «բազում պակասութիւն է առանց գործելոյ ուսուցանելն»<sup>20</sup>: Այս մեջբերումներում միաժամանակ ընդգրծված է տեսական և գործնական իմաստասիրությունների միասնության անհրաժեշտությունը, որն ավելի հանգամանորեն է հիմնավորվում հոգու և մարմնի միասնության հարցին նվիրված քարոզում: Այդ առթիվ իր բաղմամբիվ դատողությունները հեղինակն ամփոփում է հետևյալ տողերում. «մասն մարդոյն և մարմնոյն, այսինքն հոգին և միտքն, մարմինն և զլուխն, ձեռն, ոտն և ամենայն մասն մարմնոյն,

<sup>17</sup> Նույն տեղում, ձեռագիր 1345, էջ 25բ:

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Նույն տեղում, ձեռագիր 6607, էջ 67բ:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 69բ:

որպես զբոլոր մարդն և մարմին բոլոր և կատարեալ աստուած»<sup>21</sup>:

Իսկ քարոզներից մեկում պարզվում է, որ մարմնի և հոգու այս աստվածային կատարելության հիմքը մարդու նյութական պահանջմունքների բավարարումն է. «Առանց հացի ոչ գոյ կենդանութիւն մարմնոյ», որով և պայմանավորված է հոգու կենդանութիւնը<sup>22</sup>: Ակնհայտ է, որ կրոնական իդեալիզմը անզոր է գտնվել խեղդելու առողջ բանականության ձայնը, որը իրական կյանքի երկաթյա տրամաբանության ուժով ուղի է հարթում զիտական ընդհանրացումների համար:

Գասակարգային հասարակության մեջ տիրող դասակարգի գաղափարախոսները տվյալ հասարակական տնտեսական ֆորմացիան համարել են աստվածային արարչագործություն, հետևաբար և անփոփոխ հավերժական կարգ: Ֆեոդալական հասարակարգում այդ դոգման փորձում էին գերազանցապես ավետարանական մեկնություններով պատճառաբանել:

Գասակարգային հասարակության ամենամեծ և աչքի զարնող արատը դասակարգերի տնտեսական և քաղաքացիական դրության ահավոր հակադրությունն է: Մի կողմից, բազմամիլիոն հարստահարվածներ, որոնք ծանր աշխատանքի բեռի տակ կրված մի կերպ քարշ են տալիս իրենց կիսաբազմ գոյությունը, իսկ մյուս կողմից հարուստներ ու իշխանավորներ, որոնք վայելում են աշխատավորների ստեղծած բարիքները և ապրում ցուփ ու հղիացած կյանքով: Գոյություն ունեցող այլանդակությունները անհանգստացնում էին նաև ֆեոդալիզմի գաղափարախոսներին, որոնք հանդես էին գալիս ստեղծված իրադրությունն արդարացնելու փորձերով:

Կրոնական բարոյախոսությամբ հաղեցված այդպիսի տիպիկ փորձ ունենք Մատթեոս Զուղայեցու ավետարանական մի մեկնության մեջ: Մեզ հետաքրքրող հատվածը շարադրված է հարց ու պատասխանի միջոցով, որը միջին դարերում շատ տարածված ձև էր կրոնական քարոզների և ավետարանական

մեկնությունների համար: Նախ, ինքնին ուշագրավ է հարցադրումը. «զիարդ ոմանք հարստութեան և ոմանք աղքատութեան են. կէսք ի հանգիստ և կէսք ի վիշտս տառապին: Զիարդ ոչ հասարակաց ետ աստուած զինչս որպէս զարևն, և զօրն, և զանձրևս, և զհողս»<sup>23</sup>: Հարստության ու աղքատության, վայելքների ու տառապանքների և բևեռացման հարցը, ինչպես պարզվում է, բացատրության կարիք է զգում: Ավետարանական մեկնիչը այլ բան ասել չէր կարող, քան այն, որ այդպես է կամեցել աստված, որ հարստությունը սահմանափակ է. այն արևի, ջրի, օդի նման անբավ չէ: Եվ այդ աստվածային կամեցողության հիմնավորման համար տրված է հետևյալ բացատրությունը. «նախ թե զինչս անհավասար ետ զի գոյաւորին պարտաւորուց տալ զըբաւորին, որ լինին հաւասարք»<sup>24</sup>: Այս տողերում ընդունվում է քրիստոնեական վարդապետության պահանջներից մեկի՝ հավասարության անհրաժեշտությունը, որի ուտոպիկ բնույթը, սակայն, բացահայտվում է ֆեոդալական իրականության կողմից, և հեղինակը փորձում է արդեն հիմնավորել անհավասարության անհրաժեշտությունը: «Աստվածային նախախնամութենէ զի ոմանս հարուստ և զոմանս աղքատս արար. զի բազում շահ լինելոց էր անդի: Նախ զի ամենեքեան հաղորդեսցին շարացն, որ ի մեծութենէ լինի, որ են հոգս աշխարհի և պատրան մեծութեան և մոռացումն հոգևորին, կռիւք և ատելութիւն և այլն. Սոքա ամենքն ի մեծութենէ լինին: Զի մեծատունքն միխթարեսցեն զցաւս աղքատացն և վարձատրեսցին. այսինքն վաճառելով ի միմիանց զմարմնաւորն և զհոգևորն և երկուքին շահել աւգտեսցին... Զի դուրս և սէր անդեսցի ի մէջ մեծատանց և աղքատաց... Զի միմիանց կարօտ լիցին և հաղորդին վասն պիտոյից. որպէս ասէ առաքեալ ծառայք հնազանդ լերուք տէրանց մարմնաւորոց և տէրանց ասէ մի առաւել նեղղէք զծառայս»<sup>25</sup>: Այս ընդարձակ մեջբերումը ուշագրավ է մի քանի առումներով: Նախ,

9071

21 Նույն տեղում, ձեռագիր 1345, էջ 83ա:

22 Նույն տեղում, ձեռագիր 1357, էջ 159բ:

23 Նույն տեղում, ձեռագիր 5871, էջ 105բ:

24 Նույն տեղում:

25 Նույն տեղում, էջ 105բ:



աղքատները թող մխիթարվեն նրանով, որ հարստությունը բազում շարիքների՝ կոփվների ու ատելության աղբյուր է, որոնց աղքատները հաղորդակից չեն: Գեո ավելին, հարուստները դժբախտ են հենց իրենց հարստությամբ: Նրանք անվերջ տառապում են իրենց հարստության պահպանման հոգսերից, դողում գողերից ու ավազակներից, որոնք հաճախ հարստության կողոպուտի հետ միասին խլում են նաև նրանց կյանքը: Համանման տասը պատճառաբանություններով հեղինակը փորձում է աղքատներին համոզել, որ աղքատությունը նրանց համար երջանկության աղբյուր է այս կյանքում և դրախտի դուռ՝ հանդերձյալ աշխարհում<sup>26</sup>: Այնուհետև, հեղինակը փորձում է ընթերցողին հավատացնել, որ հարուստները հոգում են աղքատների պետքերը՝ նրանց ծառայությունների դիմաց: Այս կարգի համազործակցությունը, փոխադարձ շահավետության պայմաններում, նրանց մեջ գուժ և սեր է ծնում միմյանց հանդեպ: Շահերի ներդաշնակության այս համակարգը հավերժական կլինի, եթե ծառաները հնազանդ լինեն տերերին, իսկ տերերն էլ պետք է շահավորեն ծառաներին շահագործելու իրենց ախորժակը:

Տերերի և ենթակաների փոխհարաբերությունը Զուղայեցին քննարկում է լայն շրջանակներում: «Նախ է տիրութիւն անձնիշխանության որպէս իշխէ ամենայն ոք իւր անձինն»<sup>27</sup>: Այս բացարձակ անձնիշխանության բնութագիրը կարևոր է նրանով, որ հեղինակը տիրապետության մնացած բոլոր ձևերի համար ոչ մի վերապահում չի անում, որոնք և փաստորեն հավասարեցվում են անձնիշխանության: «Երկրորդ է տիրութիւն տան ի վերայ ծառային»<sup>28</sup>: Այնուհետև «է տիրութիւն ի վերայ հայրենեաց, որպէս ամենայն ոք ի վերայ հայրենեաց իւր տիրէ, այգւոյ և անդոյ, և տան, և այլ այսպիսեաց»<sup>29</sup>: Պարզ է, որ այստեղ խոսքը վերաբերում է մասնավոր սեփականատիրությանը:

Տիրապետության այս ձևերի համեմատությունից պարզվում է, որ տնային ծառաները զուրկ են եղել ամենատարրական իրավունքներից, որոնց հեղինակը հակադրում է ինքնուրույն մանր արտադրողին: Նա լիիրավ «տէր է ի վաստակաց, որպէս ամենայն ոք տէր է աշխատանաց իւրոց»<sup>30</sup>: Մանր արտադրողների այս խավը հավանաբար տիրապետող է եղել, որը կարող է կովան լինել իրավական ճորտային հարաբերությունների գոյության դեմ: Հին ու միջին դարերում սեփականատիրության ամենատարածված ուղիներից մեկը եղել է բռնությունը, որը չէր կարող տեղ չգտնել տիրության տեսակների հեղինակի դասակարգման մեջ. «է տիրութիւն ըստ բռնութեան որպէս Աղեքսանդր բռնացեալ տիրեաց աշխարհի»<sup>31</sup>: Ընտանեկան հարաբերությունների բնութագրության տեսակետից ուշագրավ է տիրության շորտորդ ձևը, ըստ որի «տիրութիւն հօր ի վերա որդւոյ»<sup>32</sup>: Հավանաբար, խոսքը վերաբերում է այն դավակներին, որոնք դեռ ինքնուրույն ընտանիքի հայր չեն եղել: Նման փոխհարաբերություն է նշում հեղինակը նաև վարդապետի ու աշակերտի միջև. «է տիրութիւն ըստ կարեաց, որպէս աշակերտ վասն կարեաց իւրոց հնազանդի վարդապետին, և նա տէր է նմա իբր սեպհականութիւն»<sup>33</sup>: Աշակերտի իրավական վիճակի այս բնութագրությունը կարևոր է նաև համբարություններում վարպետի ու աշակերտի փոխհարաբերության էությունն ըմբռնելու տեսակետից:

Այս բնույթի մեջբերումները հեղինակի աշխարհայացքի մասին ամբողջական պատկերացում տալու նպատակ ունեն միայն, իսկ գիտական աշխարհի համար արժեքավոր են ֆեոդալական հասարակության հոռի կողմերի վերաբերյալ նրա քննադատական դիտողությունները:

Դասակարգերի միաբանության հարցն այնքան է մտահոգում հեղինակին, որ նա դրան հաճախ է անդրադառնում: Միաբանության հիմնական պայմանը նա համարում է ներ-

26 Նույն տեղում, ձեռագիր 1345, էջ 31ա:

27 Նույն տեղում, ձեռագիր 662, էջ 147ա:

28 Նույն տեղում, էջ 147ա:

29 Նույն տեղում:

30 Նույն տեղում, էջ 147բ:

31 Նույն տեղում:

32 Նույն տեղում:

33 Նույն տեղում:

քին համերաշխությունը, իսկ բռնության վրա հիմնված հնազանդությունը կտրականապես մերժում է. «ամենքն լինին ի ներքոյ հնազանդութեան. իսկ որ արտաքոյ է հնազանդութիւն ոչ կարէ լինի միաբան»<sup>34</sup>: Արտաքին հնազանդություն ասելով հեղինակը նկատի ունի իշխանավորների խստությունները: Նրանք թող իմանան, որ երբ «բռնութեամբ խոսցեն ընդ հնազանդեալսն իսկոյն թողին և գնասցին... զի իշխանաբարն հակառակս գործէ. յայտ է զի որք բռնութեամբ առաքին ի գործն ինչ փոխանակ շինելոյն քակեն»<sup>35</sup>: Այս կարգի դատողությունների հիման վրա հեղինակը հանգում է այն հետևություն, որ բռնությունը խորացնում է մարդկանց միջև հակասությունները և ծնում ատելություն<sup>36</sup>: Իսկ ժամանակակից հասարակարգում բռնակալ իշխանները «զարիւնս աղքատաց ծծեն և անիրաւ դատեն»<sup>37</sup>:

Մեղքերումները որոշակիորեն ասում են, որ խոսքը վերաբերում է աշխատավորության և ֆեոդալների տնտեսական հարաբերությունների կարգավորմանը: Հեղինակի խնդիրն է շափավորել ֆեոդալական շահագործման շրջանակները, իսկ շահագործման այլանդակ ձևերը նա դատապարտում է, որպես շարիքների բուն պատճառ: «Անձնիշխան կամք մարդոյն սերմանեալ որումն գտաւ ի շարէն... Զի ստոյգ բարի անձնիշխանութիւն աստուածային է, որ ոչ կարէ շար լինել»<sup>38</sup>: Այսպիսով, աստուծո բարեգործության վրա խարսխված ներդաշնակ հասարակությունը անձնիշխան, կամքի սերմած որումների հետևանքով դառնում է շարիքների լաբիրինթոս: Իսկ ովքե՞ր են այդ շար սերմնացանները: Այս հարցի ընդարձակ լուսաբանումների ընթացքում հեղինակը հանդես է գալիս տիրող կարգերի խիստ քննադատությամբ:

Հասարակության իշխող և ստորադաս խավերի փոխհարաբերության էությունը Մ. Զուղայեցու մոտ պարզաբանվում

է լեռների ու դաշտերի համեմատությանը նվիրված հետևյալ ուշագրավ դատողություններում. «Լերինք զմեծատունս և զիշխանս և զթագաւորս նշանակէ որք բարձրացեալ կան աշխարհի. իսկ դաշտք զաղքատս և զտնանկս, որք և կոխան լինին թագաւորաց»<sup>39</sup>: Այստեղ արտահայտված է աշխատավորների նկատմամբ հեղինակի լուրջ կարեկցությունը: Իսկ նույն աշխատության մի այլ տարբերակում հեղինակն արդեն զայրույթի պոռթկումով բացահայտում է իրենց լեռնային բարձունքից իշխող և արգավանդ դաշտերի բարիքները գոփող տերերի սնամեջ, պարագիտային կյանքի բովանդակությունը. «Լերինք նշանակեն յիմարս ի մարդկանէ զի անդ պտուղ սակաւ գտանին, ինչպէս ի յիմարն ոչ գտանի շնորք իմաստութեան: Իսկ դաշտ նշանակեն զգիտունս, և զհանճարեղս, որք և նման դաշտի, զանազան իմաստս յառաջ բերեն»<sup>40</sup>: Ասված է միանգամայն որոշակի, ֆեոդալական հասարակության գոյության և զարգացման համար անհրաժեշտ նյութական և հոգևոր բարիքներ ստեղծողները դառնում են փուշ ու հիմար իշխողների ոտքի կոխան: Հեղինակի զայրույթն այնքան է բորբոքվում, որ իշխաններին նամենցնում է վայրի գազանների<sup>41</sup>:

Աշխատավորների վաստակի կողոպուտը կատարվում է և՛ քողարկված, և՛ բացահայտ ձևերով, որոնց էությունը Զուղայեցու մոտ լուսաբանվում է հանգամանորեն: «Նոքա կոչին յայտնի գողք, որ իշխանք են և կաշառօք վարին»<sup>42</sup>, որը հեղինակը որակում է որպես բացահայտ գողություն: Բայց նույն իշխաններն ու տանուտերերը կողոպտում են նաև քողարկված ձևերով. «կոչին ծածուկ գող և տանուտէրք գեղոց և վերակացուք. որք զաղքատս զրկեն և այնպէս ձևացուցանեն. թէ մեք աւելի տամք և յաղճատացն առեալ տան և զինչըս իւրեանց պահեն»<sup>43</sup>: Մեր կողմից ընդգծված միտքը արտահայտում է այն իրողությունը, որ իշխողների ամբողջ

34 Նույն տեղում, ձեռագիր 1402, էջ 73բ:

35 Նույն տեղում, էջ 76ա:

36 Նույն տեղում, էջ 76բ:

37 Նույն տեղում, ձեռագիր 1357, էջ 172բ:

38 Նույն տեղում, ձեռագիր 1402, էջ 100ա:

39 Նույն տեղում, ձեռագիր 5012, էջ 117—118:

40 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 290բ:

41 Նույն տեղում, էջ 321բ:

42 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 129բ:

43 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 133ա:

ունեցվածքը աշխատավորներն են ստեղծել, որ շահագործողները դրա մի մասն են վերադարձնում նրանց և աղմկում, թե իրենք տալիս են ավելին, քան ստանում են: Այս տողերում շահագործման փաստի հավաստման հետ միաժամանակ առկա է այն միտքը, որ ստեղծված հարստությունը բաժանվում է երկու մասի. արդյունքի մի մասը (անհրաժեշտ արդյունք) ստանում են աշխատավորները, իսկ մեծագույն մասը (հավելյալ արդյունք) յուրացնում են շահագործողները: Անհրաժեշտ արդյունքի չափի մասին Մատթեոս Զուղայեցին միանգամայն որոշակի է արտահայտվում նշելով, որ «մին օրն մին դահեկան լինի վարձ մին մշակին», որով «մշակն ոչ կար էին զյետոյ ձգել վասն վաղեան, զի հագիւ զաւուրն հանէ»<sup>44</sup>, այսինքն՝ վարձու մշակներն ստանում են իրենց գոյություն պահպանման նվազագույն կենսամիջոցները միայն:

Ծածուկ գողերի մասին հեղինակը խոսում է ամենատարբեր առիթներով: Ուշագրավ է, որ ծածուկ գողերի թվում ավելի հաճախ են հիշատակվում ֆեոդալական հասարակության բարձրաստիճան ներկայացուցիչները (իշխաններ, տանուտերեր, վերակացուներ): Ըստ որում իշխանները կրկնակի գողեր են այն դեպքերում, երբ միաժամանակ զբաղվում են կաշառակերությամբ: «Նոքա կոչին յայտնի գողք որ իշխանք են և կաշառօք վարին. և սոյնպիսի գողութիւն կրկին է զի ի միոյն ծածկաբար առ յինքեանս առնուն. և զի միւսն յայտնապէս հափշտակեն»<sup>45</sup>: Եթե կաշառքը բացահայտ հափշտակություն է, ապա շահագործման բոլոր ձևերով յուրացրած հարստությունները հեղինակը բնութագրում է որպէս ծածուկ կողոպուտ:

Վարձու աշխատանքի կիրառման և վարձատրության չափերի հարցում Մատթեոս Զուղայեցին ունի իր նախորդների՝ Մխիթար Գոշի և Ներսես Շնորհալու ընդարձակ ու արժեքավոր դատողությունները<sup>46</sup>, որտեղ, սակայն, արտահայտվում է

մշակների վարձի մակարդակի գաղափարը միայն, իսկ վարձատրության չափերի մասին հիշատակություններ նրանց մոտ չկան: Մատթեոս Զուղայեցին առանց կրկնելու իր նախորդներին, երկու կարևոր առաջընթաց քայլ է կատարում այս բնագավառում: Նախ, հիմք է տալիս գաղափար կազմելու անհրաժեշտ արդյունքի մասին, և երկրորդ՝ նշում է, որ վարձու մշակի օրավարձը մեկ դահեկան է: Առանց վարանելու կարելի է ասել, որ հայ միջնադարյան հիշյալ մատենագիրների «մոտ որոշ առումով ունենք աշխատավարձի գիտական տեսության այն գլխավոր տարրերը, որոնք հետագայում բուրժուական կլասիկ տնտեսագետների մոտ ձևավորվեցին որպէս ամբողջական ուսմունք»<sup>47</sup>:

Աշխատավորներին շահագործում են ոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր ֆեոդալները: «Նոքա կոչին յայտնի գողք որք առաջնորդք եղեալ են ուխտից և միաբանս իւրեանց զրկեն»<sup>48</sup>: Նրանք շրջագայությունների ընթացքում տեսածը հափշտակում են, ասելով, թե այդ անհրաժեշտ է միաբանության կարիքների համար<sup>49</sup>: Պարզ է, որ նման կրոնավորների քարոզները դառնում են կեղծավորություն, իսկ իրենք էլ՝ ժողովրդի ծաղրի առարկա<sup>50</sup>, գրում է հեղինակը:

Զուղայեցին զայրույթով է խոսում նաև օտարազգի կեղծքիչների մասին: «Կոչին գող անօրենք որ հանապազ որսան զմեզ ի բանս և ի գործս»<sup>51</sup>: Այս տողերն, անշուշտ, նկատի ունեն կոռաչին աշխատանքի դեպքերը: Իսկ ունեցվածքի ակնհայտ կողոպուտները սովորական երևույթ էին «զվաստակս մեր առաջի մեր օտարք կերիցեն»<sup>52</sup>: Հեղինակը նշում է նաև օտար բռնակալների կողմից քողարկված գողության ամենատարածված ձևերից մեկի մասին, որը նա դիպուկ արտահայտություններով անվանում է բռնահյուր, երբ հայերը ակամայից հյուրընկալում էին գյուղ եկած օտար աստիճա-

44 Նույն տեղում, ձեռագիր 1345, էջ 37ր:  
45 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 129ր:  
46 Ն. Ռ. Թովմասյան, Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը 9—14-րդ դարերում, Երևան, 1970, էջ 144—147:

47 Նույն տեղում, էջ 147:  
48 Մատենադարան, ձեռագիր 2114, էջ 132ր:  
49 Նույն տեղում, էջ 129ր:  
50 Նույն տեղում, ձեռագիր 6607, էջ 69ր:  
51 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 131ր:  
52 Նույն տեղում, ձեռագիր 6607, էջ 389ր:

նավորներին, երբեմն տասնյակ օրերով, և ճանապարհում նվերներով:

Այս բաղմաստիճան շահագործման հետևանքով հարյուրավոր երբեմնի շեն գյուղերը ավերակ են դառնում: Աւերկոչեմք թէ իցէ ձեռնաւոր և տանուտէր, և ոչ սերմանեալ աշուն և գարուն և ասեմք ււերացաւ. ււեր կոչեմք յոր ժամ փախեալ լինին շինացիքն և տեղիքն դատարկ»<sup>53</sup>: Հետաքրքիր է, որ Զուղայեցին բացահայտ և գաղտնի գողութեան բոլոր ձևերը դատապարտելով և դրանց ավերիչ հետևանքները ցույց տալով հանդերձ արդարացնում է գողութեան մի դեպք միայն: «Գիտելի է զի զանազանել արժան է զգողին դեման. և ընչից տէրան: Քանզի որ աղքատք են ամենևին և առնեն գողութիւն. և այս անճարակութիւն առնէ. այսպիսեաց ներելի է գողութիւն. զի հարկավոր պիտույք բնութեանս հարկեաց առնել գործն զայն: Եւ են որ ունին և առնեն գողութիւն: Եւ այսպիսեացս մահու չափ է ոչ է ներելի սոցա»<sup>54</sup>: Այս կնշանակի, որ ֆեոդալական շահագործման պայմաններում ստեղծվել է մարդկանց մի խումբ, որոնց համար փակ են սեփական գոյութիւնը պահպանելու բոլոր օրինական ճանապարհները, և նրանք ստիպված դիմում են գողութեան: Այս անճարակ տառապալներին գողութիւնը հեղինակը ներելի է համարում: Նրա համակրանքն աշխատավորների նկատմամբ հանդես է գալիս նաև այլ առիթներով: Մի շարք քարոզներում դատապարտում է որկրամոլութիւնը, իսկ աշխատավորների նկատմամբ ներողամտութիւն է ցուցաբերում. «շինականք և ռամիկք, որք միշտ յաշխատութիւնս են վասն որոյ և բազումս պիտոյ և նոցա կերակուր»<sup>55</sup>: Մատթեոս Զուղայեցուն քաջ հայտնի է, որ հասարակութեան համար ահալոր չարիք են մեծամեծ ունևոր գողերը, նրանք պետք է մահվան դատապարտվեն: Այս քննադատութիւնը, սակայն, թշնամական չէ: Հեղինակը ցավում է, որ շատ իշխաններ ու տերեր իրենց կոշման բարձրութեան վրա շեն գտնվում, իրենց

հասարակական բարձր դիրքից իջնում են մինչև գողերի և մարդասպանների մակարդակը: Հարուստների հանդեպ Զուղայեցու համակրանքը ակնհայտ երևում է նաև ողորմութեան իմաստի նրա մեկնութիւնից. «առաւել հարկ է առնել (այսինքն՝ ողորմութիւն տալ— Ն. Ք.) որք յառաջագոյն մեծատունք են եղեալ և ի պատահման ինչ անկեալ են յաղքատութիւն գործել ոչ կարեն և մուրալ ամաչեն», որոնցից հետո միայն «հասարակ աղքատաց և տնանկաց»<sup>56</sup>: Հասարակ ժողովրդի գոյութեան իմաստը հեղինակը համարում է տերերին հլու հնազանդութիւնն ու նրանց հարստացումը: Այդ ոգով է նա մեկնաբանում քրիստոնեական վարդապետութեան այն գրույթը, որով ժողովուրդը ոչխարի է նմանեցվում: Վերջինիս բարեմասնութիւններն են՝ հլու հնազանդ լինել տիրոջը և հարստացնել նրան. «զտէր իւր փարթամացուցանէ ասր տալով և կաթն և գառն»<sup>57</sup>:

Ամենևին պատահական չէ, որ նա «ամենայն աշխատագործք» մարդկանց նմանեցնում է բանող անասունների<sup>58</sup>: Մատթեոս Զուղայեցու աշխարհայացքի այս երկվութիւնը բնորոշ է միջնադարյան շատ վարդապետների, որոնք որպես տիրող դասակարգի կրոնավոր գաղափարախոսներ ամփոփվում էին ավետարանական դոգմաների շրջանակներում, իսկ որպես գիտնականներ՝ անկեղծ էին իրենց մերկացումների ու խարազանումների մեջ:

ՏՆՏԵՍՎԻՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

ա) Նյութական բարիքների աւտագրութիւնն ու շրջանառութիւնը

Տնտեսական երևույթների տեսական հետազոտութիւնները ելնում են պատմափիլիսոփայութեան որոշ ուղղութեան սկզբունքներից: Նախամարքսյան տնտեսագիտական բոլոր ուղղութիւնները խարսխվում էին իդեալիստական պատմա-

53 Նույն տեղում, ձեռագիր 2519, էջ 150ր:  
54 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 133ա:  
55 Մ. Զուղայեցի, Գիրք ութն խորհրդոց մեղաց, Կ. Պոլիս, 1750, էջ 10:

56 Մատենադարան, ձեռագիր 6607, էջ 400ր:  
57 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 209ա:  
58 Նույն տեղում, էջ 321ր:

փիլիսոփայութեան վրա: Սակայն, նույնիսկ իդեալիստ հեղինակների աշխատութեանն հարկ է հասարակութեան զարգացման օրինաչափութեանն զիտական, մատերիալիստական բնութագրումների հանդիպել:

Միջին դարերում կրոնական առասպելները նշանակալից տեղ են դրավում պատմագրութեան մեջ: Սակայն, հենց իրենց՝ կրոնավորների, կողմից տարբեր հասարակական երկվայթների մեկնություններում փայլատակում են առողջ գիտական ձևակերպումներ ու ընդհանրացումներ, որոնք անհարիր են հեղինակներին՝ որպես կրոնավոր-աստվածաբանների, աշխարհայացքին: Նման գիտական դրույթներն ու ձևակերպումները նրանց աշխատութեանն հերկում են ամենատարբեր առիթներով, առանց որոշակի սխտեմի, որից, սակայն, դրանց գիտական արժանիքները շեն խամրում: Մտթեոս Զուղայեցին այս կարգի հեղինակների թվում իր ուրույն տեղն ունի:

Աստվածաշունչը մարդկային հասարակութեան պատմութեանն սկսում է դրախտում Ադամ-Եվայի կենցաղավարութեամբ, որտեղ սակայն, ինչպես Զուղայեցին է նկատում, «ոչ գոյին նմա բիրտն և ոչ աշխատանք», դրախտում ոչ ծնունդ կար և ոչ մահ<sup>59</sup>, այսինքն դա հասարակութեան մտացածին նախապատմություն էր միայն: Իսկական պատմությունն սկսվում է մարդու աշխատանքային գործունեությամբ, որն այնպես սրբազան ջերմեռանդությամբ փառաբանում է հեղինակը: «Ամենայն ինչ զոր աստուած ստեղծ զիրաբանչիւր որ զիր գործն առնէ. և ամենևին ոչ ձանձրասցի, ինչպէս երկինքն և արեգակն ոչ ձանձրասցին ընթացիցն ըստ հրամանին գործուն. և ինչպէս ծառք ի ժամանակի իւրէանց տան պտուղ»<sup>60</sup>: Ամեն որ պետք է զբաղվի իր գործով առանց ձանձրուլթի: Այս կնշանակի, որ աշխատանքը մարդու համար բնական պահանջ է, կենսական անհրաժեշտություն: «Աստուած ասաց Ադամայ. քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, զի պարապուրին բազում վնաս բերե... ինչպէս բուրաս-

59 Նույն տեղում, էջ 110ր:

60 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 274ա:

տան որ անխնամ է խոպանանա. նմանապէս մարդ որ պարապ է սիրտ նորա խոպան է ի բարոյ և ծնանի փուշ շարութեան մեղաց»<sup>61</sup>: Մարդն աստծու նման արարչագործ պետք է լինի<sup>62</sup>, նրան պետք է միշտ «տքնիւ և աշխատութիւնք առ աստուած միշտ պարապիլ»<sup>63</sup>: Աստված մարդուն հողից ստեղծեց բազմաթիվ նկատառումներով, գրում է հեղինակը, այդ թվում «վասն պտղաբերութեան հողոյն, զի ուսուցի թէ ինչպէս արմատ նորա է անկենդան և բիրապատիկ հատուցանէ աշխատողին իւրոյ, սոյնպէս և մարդս պիտի բազմապատիկ առաքինութեամբ պտուղ բերել»<sup>64</sup>: Աշխարհը շեն է «նախ բազմութեամբ մարդկան», նրանց «գործով»<sup>65</sup>: Մարդկանց աշխատանքային գործունեությունն է, որ կազմում է հասարակական կյանքի բուն բովանդակությունը:

Աշխատանքը Զուղայեցին համարում է միայն մարդու բարեմասնութեանը, որով և նա տարբերվում է կենդանիներից: Ըստ որում, հեղինակը նկատի ունի մարդու ինչպես ֆիզիկական, նույնպես և մտավոր աշխատանքի ունակությունները: «Անասունք... ոչ կարեն զպէտս իւրեանց ժողովել», նրանք «ի դաշտս, և ի լերինս, և ի խորածորս, և յեղր ծովու, զի ուր երթիցեն անաշխատ կերակուր իւրեանց գտանիցեն»<sup>66</sup>: Իսկ մարդուն պետք է «սերմել և հնձել... ծառն զոր մեք տնկեմք, և սերմն զորս մեք սերմանեմք, կարօտին յօտել, և զաւելորդն հատանել, զի բերցէ մեզ պտուղ, իսկ թէ հեռանամք անպտուղ մնա»<sup>67</sup>: Մարդը կազմակերպում է նյութական բարիքների արտադրություն, նա ստեղծագործական աշխատանքի արդյունքներով է բավարարում իր պահանջմունքները, մինչդեռ կենդանին օգտվում է բնութեան տված պարաստի բարիքներից միայն: Այնուհետև, մարդն օժտված է

61 Նույն տեղում:

62 Նույն տեղում, ձեռագիր 5012, էջ 124:

63 Նույն տեղում, ձեռագիր 1345, էջ 35ր:

64 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 324ր:

65 Մատթեոս Զուղայեցի, Գիրք ուխն խորհրդոց մեղաց, Կ. Պոլիս, 1750, էջ 165—166:

66 Մատենադարան, ձեռագիր 2229, էջ 292ա:

67 Նույն տեղում, էջ 292բ:

բանականությամբ, որի շնորհիվ և ճբնական է մարդոյ զեռաչ իմաստս, ինչպէս տունկի աճումն, վասն որոյ որքան յարի ի բան ինչ, փութացուցանէ հասանել նմին ի կատարումն, որով և իմաստութիւնքն ճոխացան: Եւ յայսմանէ բազում շահ գոյ ի մեզ»<sup>68</sup>:

Բանականությունն ու մարդու ֆիզիկական գործունեությունը սերտորեն կապված են իրար և փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով: Այս երկու կարգի կարողությունների շնորհիվ է, որ կենդանական աշխարհի բազմադարյան զարգացման ընթացքում նախամարդը առանձնացել է կենդանուց, որով և սկսվել է մարդկային հասարակության պատմությունը: Այդ խնդրի առթիվ Զուղայեցու նշանավոր դատողությունները բերենք ամբողջությամբ. «Մարդս կրկին գործ ունի առնել. մին զի ոտք ընթանայ, և միւս զի առնէ արուեստ և գործէ զիւր ձեռք. արդ զի անասունք ոչ ունին միտք, որով արուեստ առնեն. վասն որոյ ոչ պիտանայ նոցա ձեռք: Իսկ մարդս ունի իմաստութիւն, և գիտութիւն և արուեստ, և բան, որոց կարօտանան ձեռք: Վասն որոյ ի հարկէ ի վերայ բ (երկու) ոտից կանգնեցաւ զբ-ան (երկուան) ուղղեալ գործի ի շինեաց բնութիւն բանին և արուեստին»<sup>69</sup>: Այս տողերում ընդգծված է աշխատանքի կարևորությունը կենդանական աշխարհից նախամարդու առանձնացման գործում: Առջևի և ետևի վերջավորությունների ֆունկցիոնալ տարբերությունների շնորհիվ է, որ մարդը ուղիղ կեցվածք է ստանում և դառնում աշխատող էակ: Այնուհետև հեղինակը հաճախ է ընդգծում ձեռքերի կարևորությունը մարդու գործունեության ընթացքում: Այդ առթիվ ասվում է, որ ձեռքն «սպասաւորէ ամենայն գործոյ և կարի երախտաւոր և զաշխա-

տաւոր... զի ամենայն արուեստից ցաւացող ձեռքն է. և գիտունք հնարից իմացող»<sup>70</sup>:

Նյութական բարիքների արտադրության հետ կապված խնդիրների քննարկումը ծավալուն տեղ է գրավում Մատթեոս Զուղայեցու ձեռագրերում: Հեղինակի մոտ ընդգծվում է նյութական բարիքների հույժ կարևորությունը «որք պատճառք են մերոյ կենդանութիւնս»<sup>71</sup>: Հոգևոր բարիքներ էլ կան, բայց «ամենուրեք յայտնի եղիցի, թէ աշխատանք ձեռաց է ապրիլն. թէ և կարի հոգևոր ևս իցէ»<sup>72</sup>: Այսինքն՝ մտավոր աշխատանքը թեև կարևոր է, բայց այն նյութական բարիքներ չի ստեղծում և ապրուստի աղբյուր լինել չի կարող:

Արտադրության կազմակերպման պայմանների ընդարձակ նկարագրությունների մեջ Զուղայեցին որոշակիորեն ընդգծում է արտադրության նյութական և անձնական տարրերի կարևորությունը: «Գործոց մարմնականի՝ բազում ինչ պիտոյանայ, որով գործն ի կատարում ելցէ: Նախ... պիտոյ է նիւթ պատրաստական. որպէս ոստայնակն ոչ կարէ առանց մանածի զարուեստն տնօրինիլ. այնպես և հիւսն, և դարբինն. զի հարկավոր են գործոց իւրեանց»<sup>73</sup>: Զուգահեռ համար արտադրության առարկան մանվածքն է, հյուսնի համար՝ փայտը, դարբնի՝ երկաթը և այլն: Բայց աշխատանքի առարկաների վերամշակման համար «պիտոյ է նաև գործիք» արհեստավորին, որով և նիւթքն յառաջեալ գործիցէ. որպէս ուրազն և տապարն հիւսանն. և կոան դարբնին և այլ ամենայն»<sup>74</sup>: Աշխատանքի գործիքների թվին են դասվում նաև կենդանիները, որոնք օգնում են երկրագործին որպես «լծաքարը», ինչպիսիք են «զեզն, և զգոմեշ», «ոմանք բեռնակիրք են որպէս զուխտ»<sup>75</sup>: Մի այլ կապակցությամբ հեղինակը գրում է, որ հողագործը երկիրը մշակում է «եղամբ և փօկօք և երկաթի:

68 Նույն տեղում, էջ 262ա:

69 Նույն տեղում, ձեռագիր 2157, էջ 172բ—173ա: Այս հատվածի կարևորությունն ընդգծելու նպատակով է հավանաբար, որ այն աննշան խմբագրական բնույթի տարբերություններով կրկնվում է նաև 969 ձեռագրում, էջ 124ա, 5012 ձեռագրում, էջ 266, 2229 ձեռագրում, էջ 328բ: 2114 ձեռագրում, էջ 107ա:

70 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 331ա—331բ:

71 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 252բ:

72 Նույն տեղում, էջ 122ա:

73 Նույն տեղում, ձեռագիր 5012, էջ 212:

74 Նույն տեղում, էջ 212—213:

75 Նույն տեղում, էջ 242: Տե՛ս նաև ձեռագիր 1345, էջ 51ա:



և փայտի»<sup>76</sup>: Ինչպես պարզվում է, Զուղայեցին կենդանիների և մյուս գործիքների միջև տարբերություն չի նկատում: Բացառված չէ, որ նրան հայտնի են եղել Արիստոտելի ասույթները արտադրության միջոցների դասակարգման մասին, որտեղ բանող անասունները համարվում են կիսահամր գործիքներ ի տարբերություն խոսող գործիքների (ստրուկներ) և համր գործիքների (բահ, բրիչ և այլն):

Հասկանալի է, որ աշխատանքի առարկաներն ու գործիքները պետք է շարժման մեջ դրվեն բուն իսկ աշխատողի՝ մարդու կողմից, որի՝ որպես արտադրության անձնական տարրի առաջնային նշանակությունը ընդգծված է հեղինակի հետևյալ տողերում. «պիտոյ է նաև գոյացական գործիքն պատրաստ, որ ի ձեռք մալ-դոյն, աչք, ականջ և հաստատ անդամք. և ի վերա սոցա կատարելութիւն գործեացն»<sup>77</sup>: Վերջին արտահայտության մեջ Զուղայեցին նկատի ունի աշխատողի արտադրական հմտությունը, որը սերտորեն կապված է մարդու ֆիզիկական և մտավոր ունակությունների հետ: Աշխատողը «նախ՝ ունի զկարողություն՝ զորութիւն, որով զամենայն ծանրութիւն երկրի տարրերաց դարձեալ է ի վերայ բանի իւր. ըստ այնմ կրէ զամենայն բանիւ զարուեստն իւրոյ... և ունի այն շափ իմաստութիւն ընդ նմա և իմաստութիւն նորա ոչ գոյ բաւ»<sup>78</sup>: Եթե Արիստոտելի մոտ արտադրության նյութական և անձնական տարրերի միջև հավասարության նշան է դրված և նշված է դրանց սոսկ ձևական մի տարբերություն (համր և խոսող գործիքներ), ապա Զուղայեցու մոտ, ինչպես պարզվում է, դրանք բնութագրված են իրենց էական տարբերություններով, ընդգծված է արտադրության անձնական տարրի առաջնությունը, նրա ակտիվ ներգործող դերը նյութական բարիքների արտադրության պրոցեսում:

Արտադրության կազմակերպման մնացած պայմանների մասին Զուղայեցու ասույթները նույնպես որոշակի հետաքրքրություն են ներկայացնում տնտեսագիտական մտքի

պատմության համար: Հեղինակը մերժում է անձնական կախման հարաբերությունները և հարկադիր աշխատանքն առհասարակ: Աշխատողը պետք է ազատ լինի «զի յոր ժամ կամի յայնժամի գործ ածցէ զարուեստն. իսկ հարկիւ ոչ լինի պատուական»<sup>79</sup>: Զուղայեցու այս ազատ աշխատավորը մանր արտադրողն է, որն իր ստեղծած արդյունքների տերն է ու տնօրենը: Նա պետք է անձնական շահագրգռվածություն ունենա, որը արտադրության զարգացման կարևորագույն պայմաններից մեկն է «պիտոյէ սէր ջերմ ի վերայ յառաջ երդեալ գործոյն. զի թէ ոչ լինի սէր ոչ ոք ձեռնմուխի ի գործ. և թէ սկսէ ի վախճանն շժամանէ զզուեալ ի բաց հերքէ»<sup>80</sup>:

Մատթեոս Զուղայեցին ճորտային աշխատանքի հետ միաժամանակ մերժում է նաև վարձու աշխատանքը, որը նա դիտում է որպես հարկադիր աշխատանքի մի ձև: Վարձու մշակների թշվառ դրությունը, նրանց տաժանակիր աշխատանքի ու աղքատիկ ապրուստի նկարագրությունները հաճախ են գրավում հեղինակի ուշադրությունը: Մշակներն ամբողջ օրը տառապում են իրենց գոյությունը մի կերպ պահպանելու համար, քանի որ «մին օրն մին դահեկան լինի վարձ մին մշակին»: Դահեկանի՝ տնտեսական բովանդակության մասին պատկերացում է տալիս այն, որ «մշակն որ կարէ ինչ զյետոյ ձգել վասն վաղեման, զի հազիւ զաւուրն հանէ»<sup>81</sup>: Ըստ որում, վարձատրությունը մշակը դյուրութեամբ չի վաստակում. «մշակ ոք ի վարձուկալեալ և կամ ծառայ, որ ոչ արասցէ զգործն ըստ կամաց վարձողին ոչ առնու վարձ»<sup>82</sup>: Դեռ ավելին, վարձու աշխատողները տիրոջ կամքը թերի կատարելու դեպքում ենթարկվում են նաև ֆիզիկական պատիժների. «ծառայ որ դիտցէ զկամն տէրն իւրոյ և ոչ պատրաստիցէ արբցէ զամ բազում»<sup>83</sup>: Անձնական շահագրգռվածության բացակայությունը մեծապես իջեցնում է վարձու

76 Մատթեոս Զուղայեցի, Գիրք ութն խորհրդոց մեղաց, էջ 168:

77 Մատենադարան, ձեռագիր 5012, էջ 213:

78 Նույն տեղում, էջ 213—214:

79 Նույն տեղում, էջ 213:

80 Նույն տեղում, էջ 213:

81 Նույն տեղում, ձեռագիր 2157, էջ 41բ:

82 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 150բ:

83 Նույն տեղում, ձեռագիր 662, էջ 149ա:

մշակների աշխատանքի արդյունավետությունը: Բնակարանի շինարարության ընթացքի ընդարձակ նկարագրություններից մեկում վարձու և տերունի աշխատանքների մասին ասված է, որ «Բազում աշխատութեամբ լիցի շինուածն. ևս առաւել տէրն նորա արժան է աշխատիլ. զի վարձկանն ըստ շափոյ վարձուց իւրաց աշխատի. իսկ տէրն է ըստ շափու կենաց իւրոյ»<sup>84</sup>: Տիրոջ շահագրգռվածությունը կենսական է, քանի որ նա աշխատանքի ամբողջ արդյունքի տերն է: «Տիրութիւն ըստ վաստակոց. ինչպէս ամենայն ոք տէր է աշխատանաց իւրաց», գրում է Մատթեոս Զուղայեցին նկատի ունենալով մանր ազատ արտադրողներին: «Սոյնպիսի տիրութիւն կարգաւորէ, զի ինքեամբ ստանա առանց այլոց երախտանաց վասն որոյ և ի բաշխելն ի սմանէ վարձս մեծ առնուն»<sup>85</sup>: Այս տողերում ուշագրավ է նաև արտադրության և բաշխման անմիջական կապի մասին հեղինակի դրույթը: Մանր արտադրողը տնտեսության արդյունքների միանձնյա տնօրինողն է, հետևաբար և դրանց ավելացման գործում անմիջականորեն շահագրգռված անձ, մինչդեռ մշակը ձեռնարկողն է կատարում իր պարտականությունները՝ վարձ ստանալու համար միայն: Հետևաբար, մասնավոր սեփականատիրական հարաբերությունները Մատթեոս Զուղայեցին փառաբանում է որպես արտադրության կազմակերպման կարևորագույն պայման: Դրանց վրա խարսխված մանր և ազատ տնտեսությունը նա գերադասում է արտատնտեսական և տնտեսական կախյալ աշխատանքի վրա հիմնված ձևերից:

Արտադրության կազմակերպման համար պահանջվում է բազմաթիվ մարդկանց համագործակցություն: Մարդը միայնակ արտադրություն կազմակերպել չի կարող: Նա «միայն ոչինչ կարէ առնել» գրում է Մատթեոս Զուղայեցին բնակարանի շինարարության ընթացքի նկարագրության մեջ<sup>86</sup>: Մար-

դը պետք է տնտեսական կապերի ու հարաբերությունների մեջ մտնի ուրիշ մարդկանց հետ: Դա նշանակում է, որ արտադրությունը հասարակական բնույթ ունի: Այս ճշմարտությունը հեղինակը շատ խորն է ընկալել և մարդկանց համագործակցության կարևորությունը ընդգծել մի քանի առիթներով: «Բանականս մարդ կարօտեն միմեանց օգնականութեան ընկերի: Եւ այս յայտէ երկուց իրաց: Նախ շինուածոյ մարդոյն կազմութեան. զի ունի աշք, որ այլս տեսանէ: Ունի ականջ, զի այլմէ լսէ: Ունի լեզու զի առ այլս խոսի: Չեռօք տա և առնու: Այս կերպիւ յայտ է զի կարօտեմք միմեանց: Երկրորդ յայտ են շինութիւն քաղաքաց և զիւղից, յորում ի մի վայր ժողովիմք, վասն այն զի ունիմք առ միմեանս կարօտութիւն: Եվ զի արուեստիւք զմիմեանց պէտս լնումք ի միոյն զկերակուր գտանելով և ի միոյն զգեստ և յայլմէ զբնակութիւն»<sup>87</sup>: Բերված քաղվածքում ունենք արտադրության հասարակական բնույթի երկու կարգի բացատրություն: Առաջին մասում զարգացվում է այն դրույթը, որ մարդկանց համագործակցությունը բնական անհրաժեշտություն է՝ պայմանավորված մարդու բնախոսական կազմությամբ: Այս փաստարկումն, անշուշտ, առանձին զիտական հետաքրքրություն չի ներկայացնում: Բայց դրա փոխարեն երկրորդ բացատրությունն ուղղակի հոյակապ է: Մարդկանց համագործակցության անհրաժեշտությունը բխում է արտադրության հասարակական բնույթից: Քաղաքների և գյուղերի շինարարությունը պահանջում է բազմաթիվ մարդկանց համատեղ գործունեություն, որոնցից յուրաքանչյուրը մասնագիտացել է մի առանձին գործում: Աշխատանքի մասնագիտացման կարևորությունը ընդգծված է հետևյալ տողերում. «Մի ձայն ուղղակի լսէ... ասէ մի արուեստի հետևիր... զի բազում արուեստն անարուեստ է»<sup>88</sup>: Աշխատանքի մասնագիտացման պայմաններում է իրականացվում աշխատանքի հասարակական բաժանումը, որը մարդկանց կարիքների փոխադարձաբար բավարարման հիմքն է:

87 Նույն տեղում, ձեռագիր 6607, էջ 267բ:

88 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 330բ:

84 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 218ա:

85 Նույն տեղում, էջ 149ա:

86 Նույն տեղում, էջ 218ա: Տան կառուցման համար անհրաժեշտ միութեան և համագործակցության մասին տե՛ս նաև ձեռագիր 2229, էջ 211ա, 211բ:

Հասարակութեան տնտեսական կյանքը բազմաբովանդակ է: Մարդկանց տարբեր խմբերի զբաղմունքները, նրանց եկամտունների աղբյուրները, դրանց բնույթի հետ կապված հարցերը, տնտեսական կապերի ձևերը հաճախ են գրավում Մատթեոս Զուղայեցու ուշադրությունը և դառնում քննության առարկա: Դասակարգային հասարակությունում մարդկանց զբաղմունքի բնույթը հասարակության մեջ նրանց ունեցած տեղով ու դիրքով է պայմանավորված: Հեղինակին հայտնի է, որ ովքեր «ոսկուով և արծաթով են ճոխացեալ՝ փարթամք կոչին և մեծատունք. իսկ որք զայլսն աղքատ և տկար երեխն»<sup>89</sup>: Աղքատներն ու տկարները ապրում են սեփական աշխատանքով: Նրանց արդար վաստակը հեղինակի ջերմեռանդ փառաբանությունն է արժանանում: Մարդկանց զբաղմունքի տեսակները թվարկելիս Զուղայեցին առաջնակարգ տեղ է հատկացնում նրանց, «որ աշխատանք ապրին-ինչպէս մշակք... որ հնարօք ապրին, ինչպէս արհեստատրք»<sup>90</sup>:

Արդար վաստակի հարցը սերտորեն առնչվում է ունեցվածքի արդարացման հետ: Բանն այն է, որ ֆեոդալական վերնախավերը հսկայական անաշխատ ունեցվածքի տեր էին, և հեղինակը փորձում է դրա արդարացման միջոցներ որոնել: Արդարությունը այն է, որ «տուեալ է նմա: Եւ կամ ի կամ ի հարանց իւրոց»<sup>91</sup>: Այսինքն արդար ունեցվածք է համարվում հայրենի ժառանգությունը, իսկ մեծատունների ունեցվածքը Զուղայեցին համարում է անարդար, քանի որ «մեծատունն ոչ գոյ այս վաստակն»<sup>92</sup>, առանց նկատելու, որ հայրենի ժառանգությունը նույնպես անաշխատ ունեցվածք է: Նա արդար է համարում նաև թագավորների ու իշխանների ունեցվածքը, հիմնավորելով, որ նրանք արյուն են թափում հայրենիքի պաշտպանության համար<sup>93</sup>:

89 Նույն տեղում, ձեռագիր 5012, էջ 151:

90 Նույն տեղում, ձեռագիր 1402, էջ 155ա: Տե՛ս նաև ձեռագիր 2229, էջ 182ա, (արդար վաստակների թվում ասված է նաև շինականների վաստակի մասին):

91 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 180բ:

92 Նույն տեղում:

93 Նույն տեղում:

Մարդկանց միջև տնտեսական կապերի ու հարաբերությունների ձևերի մասին խոսելիս Զուղայեցին հիշատակում է փոխադարձ նվիրատվություններ, փոխանակումներ, փոխատվություններ, առևտուր, վարձակալություն, հարկադիր վճարումներ կամ պարտավորությունների կատարում և այլն<sup>94</sup>: Ուշագրավն այն է, որ հեղինակը մարդկանց հարաբերությունների առանցքը դերազանցապես համարում է փոխադարձ շահախնդրությունը: «Զի թէպետ սիրեն զմիմեանս յաշխարն ամենայն այլ վասն ընչից է սէրն նոցա: Եւ յայտ է զի ի պակասել մի կողմանէ տուրսն իսկոյն կտրէ սէր նոցա»<sup>95</sup>: Միևնույն միտքը հեղինակն ավելի ընդգծված ձևով է արտահայտում այն դրույթով, թե մարդկանց կապողը նյութական շահն է. «պակասեալ ընչիցն պակասի ի սէր նոցա, զի բարձաւ շաղկապն սիրոյն»<sup>96</sup>: Եթե բարեկամական կապերի աստուր շահն է, ապա ավելի քան առևտրական բնույթ ունեն տնտեսական հարաբերությունները. «մշակք ոք ի վարձու կալեալ. և կամ ծառայ և ոչ արասցի զգործն կամաց վարձօղին, ոչ առնու վարձ»<sup>97</sup>: Նույն միտքն արտահայտված է նաև տնտեսների պարտավորությունները բնութագրող հատվածում: «Նախ զի տնտեսն ոչ ունի զինչս իւր, այլ տերունեացն հաւատացաւ նմա: Երկրորդ, հատուկ է տնտեսին ըստ կամաց տէրն պատրաստել զամենայն ինչպէս և կամեսցի: Երրորդ, ժիր լինի միշտ ի գործ յոր հրաւիրեալ է և ոչ երբեք ծուլանալ»<sup>98</sup>: Անշուշտ, տնտեսը կալվածատիրոջ վարձու կառավարիչն է. նա իր ենթակայության ներքո ունի աշխատողների բազմություն, որոնց պարտավոր է «տալ յամենայն ժամու ծառակցացն առատապէս»<sup>99</sup>: Հեղինակը ավելացնում է, որ տնտեսը իր պարտականությունների կատարման մեջ թերանալու դեպքում հեռացվում է գործից: Ցա-

94 Նույն տեղում, ձեռագիր 1402, էջ 118բ:

95 Նույն տեղում, էջ 33ա:

96 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 150ա:

97 Նույն տեղում, ձեռագիր 662, էջ 149ա:

98 Նույն տեղում, ձեռագիր 1345, էջ 54բ:

99 Նույն տեղում:

վոր, տեքստից չի պարզվում, թե խոսքը տիրոջ տնային ծառայողների, թե արտադրության մեջ աշխատող մշակների մասին է: Երկրորդ դեպքում, այս վկայությունը խոշոր կալվածատիրական տնտեսությունների գոյության փաստ կարող էր լինել:

Մատթեոս Զուղայեցուն, սակայն, ավելի քան զբաղեցնում է մարդկանց արտադրական գործունեությունը, որը նա հասարակության զարգացման կարևորագույն պայման է համարում<sup>100</sup>: Արտադրության պրոցեսների հեղինակի նկարագրություններում ընդարձակ տեղ են զբաղվում գյուղատնտեսական արտադրության հարցերը, քանի որ «աստվածային բազում գործերի» մեջ «երկրագործություն յոյժ արի»<sup>101</sup> է, այսինքն՝ արտադրության ճյուղերից ամենակարևորն է, ուստի և այն պետք է գտնվի հասարակության ուշադրության կենտրոնում: Առատ բերք ստանալու համար անհրաժեշտ է «բրելն և արկանել աղբ, սոքա արհեստ են երկրագործաց, որով զանբան երկիրն ածեն ի պտղաբերություն, և դիրին է զայս իմանալ... զի կրկին բրեն, որ ամենայն տեղ հաւասար լինի. զսեզն և զաւելորդն հանեն... հորդ ջրով զովացուցանեն զծառն... աղբ ածեն ի շուրջ ծառով, զի ջերմ պահեսցէ զարմատն... զի աղբն պտղաբերէ... զայս ամենայն յամենայն ամի առնեն այգեգործքն, իսկ թէ ոչ առնեն ոչ բերէ պտուղ»<sup>102</sup>: Եթե հիշենք նաև, որ սերմնացանները պետք է «զնդիր սերմ ցանեն... զի երկիր բարի վաղվաղակի բերէ պտուղ»<sup>103</sup>, ապա պարզ կդառնա, որ հեղինակը հանդես է գալիս ինտենսիվ երկրագործության ջատագովությանը: Ագրոմիջոցառումների կիրառման կանոնների վերաբերյալ այս պահանջները կրկնվում են հեղինակի նաև այլ ձեռագրերում<sup>104</sup>:

100 Մատթեոս Զուղայեցի, Գիրք ութն խորհրդոց մեղաց, էջ 166:

101 Մատենադարան, ձեռագիր 2114, էջ 274ր:

102 Նույն տեղում, ձեռագիր 1345, էջ 35բ—36ա:

103 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 262ա:

104 Խաղողի որթի մշակման կանոնների ծավալուն շարադրանքը տե՛ս Նույն ձեռագրի 263բ էջում: Այգեգործության մասին տե՛ս «Գիրք ութն խորհրդոց մեղաց», էջ 169:

Մատթեոս Զուղայեցին հաճախ է անդրադառնում արհեստագործության խնդիրներին: Արհեստավորներին նա փառաբանում է նրանց ջանասիրության և կատարած գործի կարևորության համար: «Արուեստաւորք աշխարհի գովին, վասն շարշարանօք զարուեստս ցուցանելոյ»<sup>105</sup>: Նա հատկապես ընդգծում է մետաղների դերը արհեստների զարգացման գործում և այդ կապակցությամբ հանգամանորեն բնութագրելով մետաղների օգտակար հատկությունները, նշում, որ դրանք՝ «ոսկի, արծաթ, պղինձ, ազանազ, կապար, երկաթ վասն զանազան պիտոյից մարդկան արարան, որով և իւրաքանչիւր արուեստ բացակատարի, որք երևին այժմ յաշխարհի, որք են ոսկեգործք և պղնձագործք և արծաթագործք և այլք»<sup>106</sup>: Արհեստավորները մետաղներից (ինչպես նաև այլ հանքային հանածոներից՝ «լաճուարթ, ժիպակ, քրքում, ծծումբ և ակունք զանազանք») պատրաստում են մարդկանց կարիքների բավարարման համար տարբեր իրեր «ոմանք յանօթ, ինչպէս պղինձ, անագ» «ոմանք ի զարդարանս եղեն, ինչպէս զոսկի, և զակունս, լաջուարդն և մին այն», «և այսոքիւք վայելչացեալք երկարածգեմք ի կեանս... զի ձեռնտու լինի մեզ յաշխատութեամբ մերոք յաշխարհի ձգնիմք... Արդ ոչ կարէր մարդս առանց նիւթոյ իր ինչ առնել»<sup>107</sup>: Մետաղներից առավել կարևորը նա համարում է երկաթը, որի բազմատեսակ օգտակար հատկություններից նա առանձնացնում է այն, որ երկաթը ունի «գործիական պատճառք», «մանավանդ զի գործարանէ ամենայն արուեստականաց... բրէ՛ զերկիր և հանէ պտուղ... հատիչ է քարեաց և փայտից»<sup>108</sup>: Այսինքն՝ երկաթից են պատրաստում արտադրության գործիքները, որոնք արհեստների, ինչպես նաև երկրագործության զարգացման հիմքն են: Հեղինակն ընդգծում է նաև երկաթագործության գերը երկրի պաշտպանության գործում: Երկաթից զեն-

105 Մատենադարան, ձեռագիր 5012, էջ 151:

106 Նույն տեղում:

107 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 298բ:

108 Նույն տեղում, էջ 299բ:

քեր են պատրաստում, կառուցում են ամուր պարիսպներ և պաշտպանությունն այլ միջոցներ<sup>109</sup>,

Առևտուրը, արդյունաբերությունից անջատվելուց հետո (աշխատանքի երրորդ հասարակական բաժանում), դրամաշրջանառության հետ միասին, դարձավ մարդկանց մեծ խմբերի գործունեության մի ընդարձակ բնագավառ, որի անհրաժեշտությունը ստիպված էին ընդունել նաև բնատրնտեսության տիրապետության դարաշրջանների մտածողները: Մատթեոս Ջուղայեցին առհասարակ բացասական վերաբերմունք ունի առևտրականների և առավել ևս վաշխառուների հանդեպ: Նա՝ երկուսի գործունեությունն էլ բնութագրում է որպես գողություն, իսկ առևտրականի կրպակը ստուգաբանում է որպես գողի բակ<sup>110</sup>: Վաշխառուներն ավազակներից էլ վատ են, նրանք կողոպտում են միշտ բացահայտ կերպով՝ գիշեր ու ցերեկ<sup>111</sup>:

Բայց Մատթեոս Ջուղայեցու մոտ գերակշռում է տրնտեսագետի առողջ բանականությունը, երբ նա առևտուրը համարում է աշխարհի շենություն չորս պայմաններից մեկը. «Աշխարհն չորիւք է շէն: Նախ բազմութեամբ մարդկան: Երկրորդ վաճառաւ տուր և առիւ: Երրորդ սահմանաւ իւրաքանչիւր վիճակի և ընչից: Չորրորդ գործով. որում և հաւատացաւ թե արուեստի և թէ այլ իրաց»<sup>112</sup>: Ինչպես պարզվում է, այս նշանավոր տողերում առևտուրը աշխատանքի և նյութական բարիքների արտադրության հետ միասին բնութագրված է որպես հասարակության գոյության և զարգացման կարևորագույն մի պայման:

Գանձակուտակման դեմ ուղղված իր բազմաթիվ ասույթներից մեկում Ջուղայեցին տարբերում է արծաթասիրություններից և որպես նա դատապարտում է արծաթը հողում թաղելու պրակտիկան, որպես անմիտ մի արարք, որից պետք է տար-

109 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 129բ: Տե՛ս նաև ձեռագիր 2229, էջ 132ա:

110 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 129բ:

111 Նույն տեղում, էջ 275բ:

112 Մ. Ջուղայեցի, Գիրք ութն խորհրդոց մեղաց, էջ 165—166: Տե՛ս նաև ձեռագիր 5012, էջ 154:

բերել արծաթի միջոցով կատարվող առևտուրը: «Գիտելի է զի այլ է առևտուրը առնողն և տալն. և այլ է սիրեալն և պահեալն... զի պահելն և թաղելն մեղք լինի: Ուստի հայտ է, թե արծաթասիրությունն անարգեաց և ոչ զառնուլն և զտալն»<sup>113</sup>: Այս կնշանակի, որ պետք է դատապարտվի գանձակուտակումը, բայց ոչ երբեք առևտրի ընդլայնման համար անհրաժեշտ արծաթի ավելացումը:

Ներքին առևտրից բացի Մատթեոս Ջուղայեցին ընդգծում է նաև արտաքին առևտրի անհրաժեշտությունը և առևտրականների ստացած շահույթը արդարացնում ըստ ամենայնի, Բանն այն է, որ առևտրական քարավանների երթևեկությունը միջին դարերում վտանգավոր էր կյանքի համար, թե՛ ծովում, թե՛ ցամաքի վրա: Երբ առևտրականը «կամիցի վաճառաշահիվք ընթանալ. և վասն հուսոյ բազմութեան շահիցն, զինչս և զանձս բոլորովիմբ առեալ ի մէջ անդնդախոր ծովուն արկանէ»<sup>114</sup>: Ծիշտ է, բարեհաջող երթից հետո նա իր կրած հոգեկան տառապանքները մոռանում է, գրում է հեղինակը, բայց ամեն անգամ փափագած շահույթը ձեռք է բերում իր կայքն ու կյանքը կորցնելու վտանգի գնով: Նույն վտանգին ենթակա էին նաև ցամաքային առևտրական քարավանները, որոնք կարող էին ավաղակային հարձակումների զոհ դառնալ: Դրա համար հեղինակը նշում է, որ նրանք «...զէնք և հեծեալս առնուն ընդ յինքեանց, զի մի թշնամիքն յաղթեալ սատակեացեն զնոսա»<sup>115</sup>: Առևտրի հետ միասին հեղինակն զգում է նաև դրամաշրջանառության անհրաժեշտությունը և պատրաստ է արդարացնելու նույնիսկ վաշխառությունը: «Դուստր է ագահութեան վաշխ առնուլն աւելի քան զիրաւունս»<sup>116</sup>: Այսինքն՝ վաշխառությունը դատապարտվում է այն դեպքում, երբ տոկոսները գանձվում են սահմանվածից բարձր շափով:

Դեռ ավելին, Ջուղայեցին առանձին հոգատարություն է

113 Մատենադարան, ձեռագիր 6607, էջ 39ա—39բ:

114 Նույն տեղում, ձեռագիր 2157, էջ 184ա:

115 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 165բ:

116 Նույն տեղում, էջ 275ա:

ցուցաբերում առևտրի և դրամաշրջանառության կանոնների պահպանման նկատմամբ: Նա մահացու մեղք է համարում առևտրի կանոնների խախտումը «...է խաբեութիւն գնել և վաճառել ի շահել և ի կշռել. որ զկանգուն պակաս զնէ. կամ զքարն ու զարատաւորք իրք վաճառեն... մահու շափ մեղք է»<sup>117</sup>: Հեղինակին հայտնի է դրամանենգության պրակտիկան, որը նա նույնպես խստիվ դատապարտում է:

### բ) Ապրանքի և փողի մասին

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացման որոշ աստիճանում ինքնին դրանց բնույթի ուսումնասիրության անհրաժեշտություն է առաջ գալիս: Ձևավորվում են ապրանքի և փողի հատկությունների, դրանց դերի ու նշանակության վերաբերյալ տեսական ընդհանրացումներ: Հայտնի է, որ ստրկատիրական հասարակարգում, բնատնտեսության պայմաններում ստեղծվել էին խոշոր ստրկատիրական տնտեսություններ (գյուղատնտեսական լատիֆունդիաներ և արհեստագործական էրգաստերիաներ), որոնց արտադրանքի մեծ շահերով ավելցուկը օտարվում էր. առևտուրն ու դրամաշրջանառությունը հասել էին զարգացման նշանակալի աստիճանի: Միանգամայն օրինաշափ է, որ Արիստոտելի աշխատություններում արդեն հանդիպում են ապրանքի հատկությունների, փողի դերի ու նշանակության, առևտրի ձևերի մասին արժեքավոր գիտական ձևակերպումներ:

Ֆեոդալական արտադրանալի տիրապետության սկզբնական շրջանում քաղաքային կյանքն անկում ապրեց, տեղի ունեցավ տնտեսության ագրարացում և նատուրալացում, ապրանքադրամական հարաբերությունները հետադիմեցին, դրանց մասին անտիկ աշխարհի մտածողների ասույթները մոռացվեցին: Տեական ժամանակամիջոց պահանջվեց մինչև որ ֆեոդալական բնատնտեսության քայքայման պայմաններում միջնադարյան քաղաքներն աստիճանաբար զարգացան, աշխուժացան արհեստագործությունը, առև-

տուրն ու դրամաշրջանառությունը: Նոր ժամանակներում շրջադարձ սկսվեց նաև քաղաքային կյանքի, նրա տնտեսության զարգացման հարցերի ուսումնասիրության բնագավառում: Հիշենք նաև, որ Ջուլայեցին քաջ ծանոթ էր Արիստոտելի աշխատություններին. նա իր քարոզներում հաճախ է մեջբերում նրան և մեծ մտածողի ասույթներից:

Մեծ քաղաքներին բնորոշ եռուզեռը գրավում է նաև Ջուլայեցու ուշադրությունը. նրա քարոզներից մեկում տրվում է քաղաքային կյանքի հետևյալ ընդարձակ բնութագրությունը. «Քաղաք ամրացեալ պարսպօք և պուրջօք... քաղաք են տունք բաժանեալք ի միմիանց... իւրաքանչիւր տունս փորձի ուրիշ գործ... բարերարք պահեն ի քաղաքի, իսկ վատթարս արտաքս հանեն... սպասաւորք կարգեալ են ի քաղաք բերել զամենայն ինչ... բազում դրունք են քաղաքին... գիշերի դադարին ամենեքեան ի գործոյ, որք են քաղաքի... թշնամիք քաղաքին քակեն զքաղաքն և զինչս տանին և փլուցանեն զշինուածըն, որ ի նմա»<sup>118</sup>: Ինչպես պարզվում է, քաղաք էր բերվում «զամենայն ինչ», «զի քաղաքն վասն մարդոյ է պիտոյիք»<sup>119</sup>, «աստ կերակրով ապրեն ամենայն մարդիկ»<sup>120</sup>, խոսքն, անշուշտ, վերաբերում է քաղաք բերվող ապրանքներին, որոնք անհրաժեշտ են բնակչության բազմապիսի կարիքների բավարարման համար:

Ապրանքների օգտակար հատկությունների և դրանց արտադրության ու փոխանակության պայմանների հետ կապված հարցերը հաճախ են գրավում հեղինակի ուշադրությունը: Իրերի օգտակարությունը Ջուլայեցին համարում է դրանց բնական հատկությունը: Նյութական բարիքը «պատուական է ըստ բնութեան», ուստի և «ամենեցուն է փափագելի»<sup>121</sup>, գրում է նա, և որպես օրինակ թվարկում հացը, ջուրը, շաքարը, հագուստը և այլն: Հեղինակին հայտնի է նաև, որ իրերը կարող են բավարարել մարդկանց ինչպես

118 Նույն տեղում, ձեռագիր 1345, էջ 63բ:

119 Նույն տեղում, էջ 64ա:

120 Նույն տեղում, էջ 70ա:

121 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 205բ:

117 Նույն տեղում, էջ 276բ:

մարմնական, այնպես և հոգեկան պահանջմունքները. «բանն պարտի վասն շահոյ իմիք կամ հոգոյ կամ մարմնոյ»<sup>122</sup>, երկու դեպքում էլ նա մնում է որպես օգտակար իր՝ սպառողական արժեք: Բայց կան առաջնահերթ պահանջմունքներ, որոնց ամենօրյա բավարարումը կենսական անհրաժեշտություն է, «առանց նոցա անհնար է կեալ. ինչպէս կերակուր և ըմպելի, հանդերձ և շունչ»<sup>123</sup>: Կան նաև երկրորդական կարգի պահանջմունքներ, որոնց բավարարման համար անհրաժեշտ ապրանքները հեղինակն անվանում է «վայելչական ինչպէս դինի, և իւղ և մեղր, յորոց ոչ լինելն՝ ոչ պակասի մարդն»<sup>124</sup>: Վայելչական բնույթի պահանջմունքներ բավարարող առարկաների թվում հիշատակվում են նաև ոսկին ու թանկագին քարերը<sup>125</sup>: Գինին, յուղն ու մեղրը համարելով վայելչության պահանջմունքներ բավարարող ապրանքներ, հեղինակն, անշուշտ, նկատի ունի աշխատավորներին, որոնց սեղանի համար դրանք, իհարկե, հաղվադեպ բարիքներ էին, իսկ ոսկեղենն ու թանկագին քարերը՝ հարուստների պերճանքի առարկաներ:

Նյութական բարիքները մարդկանց անհրաժեշտ են ոչ միայն անձնական սպառման պահանջմունքների բավարարման համար: Գրանք նաև արտադրողական սպառման նպատակով են օգտագործվում, Զուղայեցին մետաղների ու բազմաթիվ այլ հանքային հանածոների օգտակար հատկությունները հանգամանորեն նկարագրում է՝ նկատի ունենալով հատկապես դրանց արտադրողական սպառման հնարավորությունները: Գրանցից «իւրաքանչիւր արուեստ բացակատարի, որք յերևան այժմ աշխարհի»<sup>126</sup>, գրում է հեղինակը և հիշատակում այն արհեստագործությունները, որտեղ դրանք օգտագործվում են որպես աշխատանքի առարկա կամ նյութ: Կրակը «հալէ զկարծր բնութիւն վիմաց, և յերկաթեա, և

ոսկոյ. զի այս քնութեամբ նորա հատուկ զամենայն ինչ է հակառակն փոխէ ըստ ձեւ պնդէ... որով և պատրաստեմք գեղեցիկ անօթն շինելով նմա»<sup>127</sup>:

Նյութական բարիքները Մատթեոս Զուղայեցին բաժանում է երկու խմբի՝ բարիքներ, որոնք մարդու աշխատանքի արդյունք են, և բնությունից տրված պատրաստի բարիքներ, որոնք աշխատանքային ծագում չունեն: Հեղինակը այս բաժանումը շատ էական է համարում, քանի որ նյութական արժեքների գների մակարդակը նա կապում է դրանց ձեռք բերման համար ծախսված աշխատանքի քանակի հետ: Ըստ որում, հեղինակը տարբերում է նաև պարզ և բարդ աշխատանք հասկացությունները: Մշակների աշխատանքի մասին նա ասում է, որ «մշակ ոք ոչ կարէ ազնիվ նիւթ գործել կամ կարել»<sup>128</sup>, այն պարզ պատճառով, որ դրա համար անհրաժեշտ է նախնական պատրաստականություն, որ մշակը չունի: Նա կարող է միայն շակատար լինել կամ նախապատրաստություն չպահանջող զանազան աշխատանքներ կատարել: Բոլորովին այլ քնույթ ունի արհեստագործությունը: Այն բարդ աշխատանքի պրոցես է, քանի որ «արուեստաւորք չորիւք վարժին: Նախ ուսմամբ և կրթութեամբ. նիւթով և գեղեցիկ նկարակերտութեամբ»<sup>129</sup>, Արհեստավորը պետք է թանկարժեք նյութերի հետ վարվել գիտենա և երբեմն էլ զբաղվի նրբակերտ «գեղեցիկ նկարակերտութեամբ», որի համար համապատասխան գրագիտություն և հմուտ գործիմացություն, տարիների ջանասեր ուսուցում է պահանջվում:

Զուղայեցու նախորդների մոտ արժեքի աշխատանքային տեսության վերաբերյալ որոշակի ասույթների գրեթե չենք հանդիպում: Միիթար Գոշի մոտ ապրանքների գների մակարդակը կապվում է առաջարկի ու պահանջարկի շուկայական հարաբերության հետ: Գրիգոր Տաթևացին մերժում է այդ տեսակետը և գների մակարդակի որոշման հիմնական

122 Նույն տեղում, էջ 186ա: (ընդգծումը մերն է—Ն. Թ):

123 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 151ա:

124 Նույն տեղում:

125 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 298բ—299ա:

126 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 298բ:

127 Նույն տեղում, ձեռագիր 5012, էջ 34—35:

128 Նույն տեղում, ձեռագիր 2157, էջ 41ա:

129 Մաթեոս Զուղայեցի, Գիրք ութն խորհրդոց մեղաց, էջ 165:

գործոն է համարում այն հումքի արժեքը, որից արտադրված է տվյալ ասլյանքը<sup>130</sup>;

Ապրանքների արժեքի աշխատանքային ծագման վերաբերյալ Մատթեոս Զուղայեցու ասույթները ոչ թե պատահական դիտողություններ են, այլ գիտակցված ու ձևավորված ամբողջություն են կազմում: Բոլոր նյութական արժեքների աղբյուրը նա համարում է աշխատանքը. «Ամենայն բարիք և կատարելիք... աշխատանք գտանիմք»<sup>131</sup>. դրանցից պետք է տարբերել բնության տված պատրաստի բարիքները, որոնք թեպետ օգտակար են, բայց արժեք չունեն, որովհետև աշխատանքի արդյունք չեն, դրանք ձրի են, գին չունեն, ինչպես ասված է հեղինակի հետևյալ տողերում. «ձրի կոշիմք զայն, որ առանց գնոյ է... զորս ամեն ոք գտանէ. ինչպէս խոտ և փայտ, և եղեգն, հող և ջուր, որոց ոչ է պիտոյ բազում աշխատանք. սոյնպիսի և բանք ձրի կոշին»<sup>132</sup>: Բնության բարիքներն առանց աշխատանքի ամուլ են. «Ժառք անտառի և մայրք լիբանանու բազումք եղիցին. իսկ ծառք զորս մեք տընկեմք. և զսերմն զոր մեք սերմանեմք կարօտին հորդել. և զաւելորդն յորդել, հատանել. զի բերցէ մեզ պտուղ. զի թէ հեռանամք անպտուղ մնան»<sup>133</sup>: Աշխատանքն է, որ բազմապատկում է հարստությունները: Թանկագին քարերի հանույթի կապակցությամբ հեղինակը գրում է, որ «Զի որ ոք աշխատի սմա, միոյն տաս փոխարեն հատուցանէ»<sup>134</sup>:

Աշխատանքի հետ միասին հեղինակը փառաբանում է նաև հողի կարողությունները: «Սա է արմատ ամենայն կենդանեաց և բուսականաց»<sup>135</sup>, գրում է նա: Հողը թեպետ և անշարժ է, բայց «ամենայն ի նմանէ շարժեալ առաջ

գան»<sup>136</sup>: Իսկ շարժիչը ինքը՝ կենդանի աշխատանքն է: Հողը քարերը է դառնում աշխատանքի շնորհիվ. «Երկիր բարի վաղվաղակի բերէ պտուղ»<sup>137</sup>: Հողից են հանվում «պատուական ակունք, ոսկի, արծաթ, և այլն, զորս և աշխատանք գտանիմք»<sup>138</sup>:

Հեղինակը բազմաթիվ առիթներով է փառաբանում ոսկու, արծաթի ու թանկագին քարերի, որպիս հարստության ունիվերսալ ձևերի, հրաշագործ հատկությունները և ամեն անգամ ընդգծում, որ դրանք ձեռք են բերվում ծանր աշխատանքով միայն: Առանց աշխատանքի այդ հարստությունները չեն ստեղծվում. «Ժոյլքն ամենևին ոչ գտանեն գանձ»<sup>139</sup>, «առանց աշխատանաց ոչ գտանին»<sup>140</sup> ակունք: Մարգարիտի բարեմասնությունների բնութագրման ընթացքում հեղինակը նրա պատվականության պատճառներից մեկն էլ համարում է այն, որ «իջնէ հատակս ծովուն զեռունսն և բազում աշխատութեամբ գտանեմք զնա... մեծագին է մարգարիտն մանաւանդ պատուական»<sup>141</sup>: Ակնհայտ է, որ այստեղ խոսքը մարգարիտի բարձր արժեքի մասին է, որը պայմանավորված է նրա արտադրության համար պահանջվող «բազում աշխատութեամբ»:

Արժեքի աշխատանքային տեսության վերաբերյալ Զուղայեցու ասույթներն ավելի որոշակի են դառնում ապրանքների համարժեքային փոխանակության մասին դատողություններում: «Արհեստաւորն պարտի ի վերայ ժամանակին նայել, և զիւր աշխատութիւն զիտել,— գրում է Մատթեոս Զուղայեցին,— եթե որ ոք աշխատանք ունի առ գործն. ըստ աշխատութեան և զվարձս խնդրէ. իսկ թէ դիպի առն յիմարի, որ ոչ գիտէ զգին նիւթոյն, նա աւելի խնդրէ, և յիմար զնօղն տա վասն կարեաց իւրոց. յայտէ թե աստուածախար կոչի

130 Ն. Ռ. Քովմասյան, Հայ տնտեսագիտական միտքը 9—14-րդ դարերում, էջ 145, 275:

131 Մատենադարան, ձեռագիր 5012, էջ 22—23:

132 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 136ա:

133 Նույն տեղում, ձեռագիր 5012, էջ 125:

134 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 267բ:

135 Նույն տեղում, ձեռագիր 5012, էջ 22:

136 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 267բ:

137 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 262ա:

138 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 267ա:

139 Նույն տեղում, ձեռագիր 1402, էջ 22բ:

140 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 300ա:

141 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 265ա:



այնպիսին»<sup>142</sup>։ Այս տողերում հեղինակը զարգացնում է այն միտքը, որ ապրանքի արժեքը ձևավորվում է արտադրության պրոցեսում, ըստ արտադրության վրա ծախսված աշխատաժամանակի։ Այստեղից էլ ինքնին հետևում է, որ արհեստավորը պետք է իր պատրաստած ապրանքի դիմաց հատուցում ստանա ըստ ծախսված աշխատանքի, այսինքն՝ ապրանքը պետք է վաճառի իր արժեքով։

Բայց նրան հայտնի են ոչ համարժեքային փոխանակության բազմաթիվ դեպքեր։ Արհեստավորներից բացի գնորդներին խաբում են նաև վաճառականները, որոնք «զվատթար իրս ի տեղի պատուականի վաճառեն. այսինքն պղինձն ի տեղի ոսկոյ և զգին ոսկոյն առնուն»<sup>143</sup>։ Խոսքը վերաբերում է պղնձի և ոսկու արժեքների տարբերությանը, և հեղինակը զայրանում է, որ պղինձը ոսկու արժեքով է վաճառվում։ Գող են նաև այն առևտրականները, որոնք «ըստ կամաց իւրեանց վաճառեն որքան և հաճոյ է ինքեանց զանմեղն գոբելով»<sup>144</sup>։

Նրա զայրույթի պատճառը, սակայն, ավելի լուրջ է քան խաբեբայությունը։ Գործարքի բարոյական կողմը նա դատապարտում է որպես կրոնավոր, իսկ որպես տնտեսագետ Մատթեոս Զուղայեցիին ապրանքների անհամարժեքային փոխանակությունը գնահատում է որպես հարստությունների անբովանդակ փոխադրում մի գրպանից մյուսը, որից հասարակությունը ոչինչ չի ստանում. «զինչ օգուտ է ի միոյն խաբել և առնուլ և միւսն տալ»<sup>145</sup>, բացականչում է նա։ Դժվար է ասել, թե հեղինակը ծանոթ է եղել հարստության ստեղծման մասին մեթոդականությունների հայացքներին։ Բայց ինքնին ուշագրավ է այն փաստը, որ այստեղ մերժված է մի ուսմունք, որը մեր հեղինակից հետո ամբողջ երեք դար տնտեսագիտության մեջ եղել է տիրապետող ուղղություն։

Նյութական արժեքների՝ Մատթեոս Զուղայեցու նկարա-

գրություններում անհամեմատ ավելի հաճախ են փայլում ոսկին ու արծաթը, որոնց բարեմասնությունների մասին հեղինակի ասույթները լուրջ ներդրում են փողի և դրամաշրջանառության տեսության պատմության մեջ։ Ոսկին և արծաթը առանձնանում են ապրանքային աշխարհից որպես հարստության ընդհանրական ձև։ Այս իրողությունը հաճախ է արտահայտվում հեղինակի ասույթներում։ Նա տեսնում է, որ «ոսկին և արծաթն պատուական է ի վերայ յաշխարհի»<sup>146</sup>։ Հեղինակի բազմապիսի բացատրությունների թվում հատկապես ուշագրավ են հետևյալ տողերը. «Ոսկին ունի բազում հատկությունս և հրաշա։ Նախ զի անապական է բնութեամբ, և անժանգ է հստակ ոսկին... և բազմաց անգտանելի է... և կարի հնարիւք առաջ զա ի հողոյ... և զամենայն ինչ նովաւ կարէ որ առնել»<sup>147</sup>։ Բերված հատվածում բնութագրված են ոսկու ինչպես ֆիզիկական, նույնպես և սոցիալական առանձնահատկությունները, որոնց շնորհիվ այն դարձել է ընդհանրական համարժեք։ Այն միտքը, որ արծաթով կարելի է ամեն ինչ ձեռք բերել, հեղինակի մոտ կրկնվում է բազմաթիվ առիթներով. «ամենայն ինչ հողար ի ձեռն արծաթոյ լինի և գնուի»<sup>148</sup>, գրում է նա և մի այլ կապակցությամբ ավելացնում, թե «Ամենայն որ որ ունի զարծաթն զինչ և կամի գտանէ նովաւ»<sup>149</sup>։ Գեռ ավելին, ոսկու և արծաթի տերերը տնտեսական հզորության հետ միաժամանակ ձեռք են բերում նաև հասարակական դիրք ու իշխանություն։ «Առանց արծաթոյ ամենայն որ անարգ է առաջի հասարակական... արծաթով զամենայն որ անձնիշխան ծառայ առնեն ինքեան»<sup>150</sup>։

Արծաթափրության դեմ բազմաթիվ էջեր կան Մատթեոս Զուղայեցու ձեռագրերում, որոնք առաջին հայացքից

142 Նույն տեղում, ձեռագիր 1345, էջ 15ր։ Տե՛ս նաև ձեռագիր 2519, էջ 13ր։

143 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 130ա։

144 Նույն տեղում, էջ 129ր։

145 Նույն տեղում, ձեռագիր 1345, էջ 15ր։

146 Նույն տեղում, ձեռագիր 1402, էջ 132ր։

147 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 299ա։

148 Նույն տեղում, ձեռագիր 6607, էջ 36ր։

149 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 214ա։ Տե՛ս նաև ձեռագիր 5012, էջ 154։

150 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 263ա։

անհարիր են թվում ազնիվ մետաղների բարեմասնությունների նրա ջատագովություններին: Բայց այս «հակասությունը» իսկույն լուծվում է, եթե հիշենք, որ հեղինակի ասույթները վերաբերում են տարբեր երևույթների: Արծաթասիրությունը նա խարազանում է այն դեպքում, երբ ազնիվ մետաղները կուտակվում և աննպատակ թաղվում են հողում որպես գանձ: Այս երևույթը Մատթեոս Զուղայեցին բնածին անմիտ ազահություն է համարում այն մարդկանց մոտ, ովքեր «իրևե զծակ կարաս ոչ ընանի ամենևին»<sup>151</sup>: Նրանք նման են այն «մարդոյ որ կապեալ բազում բեռն և ոչ կարէ շարժել և այլ բառնայ ի վերայ և զայն ևս ոչ կարէ շարժել»<sup>152</sup>: Գանձ թաղելը ոչ միայն անմիտ, այլև հակահասարակական վարմունք է, քանի որ կուտակվող գանձերը շրջանառության մեջ դրվելու դեպքում նպաստում են հարստության մեծացմանը: «Գանձողն յերկրի հակառակէ արուեստավորաց,— գրում է հեղինակը,— զի նոքա յերկրէս հանեն. և սա դարձեալ յերկիր թաղէ... զոր երկիր թաղէ ցեցն և ուտիչն ապականէ»<sup>153</sup>: Արհեստավորների մոտ այդ գանձերով ձեռք են բերվում արտադրության միջոցներ, կամ իրենք են դառնում արտադրության միջոց և «փողով կատարին ամենայն արուեստք»,— գրում է հեղինակը:

Այնուհետև, Մատթեոս Զուղայեցին արծաթասիրությունը խարազանում է նաև այն դեպքերում, երբ հարստությունները անաշխատ եկամուտներ են և ծախսվում են հասարակության ձրիակեր վերնախավերի կողմից: «Ոսկով և արծաթով ճոխացեալ» մեծատունը «ոչ կարէր ապրել, վասնզի ոչ վարել կարէր անձամբ և ոչ հնձել և թէ ոչ էր արծաթն ի՞ գործէր գկերակրիկն իւր»<sup>154</sup>: Բայց հեղինակը չի բավարարվում այս ձրիակերների գոյության փաստի սոսկ պասսիվ արձանագրողի դերով: Նա այդ կարգի արծաթասերներին համարում է գողեր և դատապարտում է: «Նախ որ արծաթա-

աէր է հարկի գող է, և յափշտակող զի թէ ոչ յափշտակեն և ոչ գողանան ոչ կատարի ցանկութիւն իւրեանց. քանզի ոչ ունելի բնէ և անաշխատ ոք և արծաթասէր գող է»<sup>155</sup>:

Իսկ այն բոլոր դեպքերում, երբ արծաթը կուտակվում է արտադրության կամ շրջանառության ընդլայնման նպատակով, Մատթեոս Զուղայեցին արծաթասիրությունը խրախուսում է ըստ ամենայնի: «Մի արծաթն բազում շահ բերէ եթէ ոք աշխատի», գրում է հեղինակը և ավելացնում. «Ոմանք զարծաթն ոչ շահեցնեն, այլ թաղեն յերկիր»<sup>156</sup>: Արծաթը շրջանառության մեջ դնելու դեպքում արդեն «ոչ է պարտադրականալ ի նմանէ, այլ փութալ միշտ յարել նա»<sup>157</sup>:

Ոսկին և արծաթը ապրանքաշրջանառության պրոցեսում գործում են որպես փող, դրանք ստակահատվում են և ունեն պետական դրոշմով կնքված որոշակի կերպարանք: «Նիւթն դահեկանին ոսկի է, և է անապական և դիրն անուն թագաւորի ունի»<sup>158</sup>: Այդպիսին է նաև արծաթը: «Դրամն արծաթ լինի, և ունի յինքն ձեզրեալ զանուն և զպատկերն թագաւորի... անրաժանելի և պատկերն և դիրն արծաթոյն... դրամն տեսեալ ճանաչեմք թագաւորին պատկերն որ ի նմա»<sup>159</sup>: Մատթեոս Զուղայեցին հատուկ հոգատարություն է ցուցաբերում դրամների անաղարտության նկատմամբ և դատապարտում դրամանենդության գոյություն ունեցող պրակտիկան: «Արծաթն բնականապէս ունի զպայծառութիւն իւր, իսկ եթէ ոք պղինձ խառնէ ի նմա. ապա նուազի... բնաւորեալ է արծաթոյ, ոչ կարող գոլ թագուցանել զայլ ինչ որ ի նմա խառնեն պղինձ... հնարեցան մարդիկ զպղնձախառն դրամ ջլետալ. և պայծառ երևեցուցանել... թեպէտ զայս հնարեցան, սակայն փութով բացւի այսպէս դրամին և ամենեքեան տեսանեն ինչպիսին է փող... զաւեր դրամն ոչ ոք ընդունի, մա-

151 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 132ա:

152 Մատթեոս Զուղայեցի, Գիրք ութն խորհրդոց մեղաց, էջ 58:

153 Մատենագարան, ձեռագիր 6607, էջ 417բ—418ա:

154 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 298բ:

155 Նույն տեղում, ձեռագիր 1402, էջ 287բ:

156 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 214ա:

157 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 263ա:

158 Նույն տեղում, ձեռագիր 1345, էջ 19բ:

159 Նույն տեղում, էջ 44ա—44բ:

նաւանդ գորն գոր թագաւորն հրամայէ ոչ ընդունել»<sup>160</sup>, ինչպես պարզվում է, դրամանենգությունն այն աստիճան տարածված է եղել և այնպես կատարելագործվել, որ պղնձախառն դրամներին կարողացել են արծաթի փայլ տալ: Բայց հեղինակը կոչ է անում զգոն լինել, քանի որ կեղծ դրամներն այդուհանդերձ հնարավոր է ճանաչել: Այս շարիքի դեմ պայքարելու համար նա պահանջում է նաև թագավորների միջամտութիւնը:

Մատթեոս Զուղայեցին հասարակական կյանքում փողի դերն ու կարևորութիւնը լուսաբանում է բազմակողմանիորեն: Ոսկու և արծաթի՝ որպես հասարակական հարստութեան ձևի մասին նրա ասույթներում փաստորեն արտահայտվում է փողի արժեչափի ֆունկցիայի գաղափարը: «Ամենայն ոք որ ունի զարծաթն զինչ և կամի գտանէ նովաւ»<sup>161</sup>, նույնն է ասված նաև ոսկու մասին. «զամենայն ինչ նովու կարէ ոք առնել»<sup>162</sup>: Եթե միաժամանակ հիշենք, որ հեղինակը հանդես է գալիս որպես համարժեքային փոխանակութեան կրթող պաշտպան, ապա այստեղից մինչև փողի արժեչափի ֆունկցիայի գաղափարը մնում է մի քայլ միայն:

Փողի շրջանառութեան ֆունկցիայի մասին Մատթեոս Զուղայեցին ավելի որոշակի է արտահայտվում: Ապրանքափոխանակութիւնը կատարվում է փողի միջոցով. «առանց փողի ոչ առնուն և ոչ տան», գրում է նա և ավելացնում. «զարծաթն տուեալ և ի նորին տեղիսն առնուն հաց կամ այլ ինչ»<sup>163</sup>:

Հայտնի է, որ փողը վճարելամիջոցի ֆունկցիան կատարում է նաև աշխատանքի վարձատրութեան դեպքում: Մատթեոս Զուղայեցու ժամանակ լայն շափերով օգտագործվել է մշակների վարձու աշխատանքը, և նրանց ծանր աշխատանքի ու շնչին վարձատրութեան հարցերին հեղինակը հաճախ է անդրադառնում: «Մշակն վարձու կալնու ամենայն

ք վասն գործոյ ինչ... մին օրն մին դահեկան լինի վարձ մին մշակին»<sup>164</sup>, գրում է նա:

Առավել լայն շափերով հեղինակին հայտնի է փողի գանձ ֆունկցիան, երբ փողը շրջանառութիւնից հանվում և թաղվում է հողում: Երևույթ, որը հեղինակը յուրովի տրամաբանութեամբ իրավամբ դատապարտում է: Հիշենք, որ շրջանառութեան մեջ եղած փողի քանակի ավտոմատիկ կարգավորման գործում փողի գանձ ֆունկցիայի դերը հայտնի չէր նախամարքսյան շրջանի և ոչ մի տնտեսագետի:

Ապրանքադրամական հարաբերութիւնների զարգացման բարձր աստիճանում փողի իշխանութիւնը հասարակական հզոր ուժ է դառնում: XV դարը կապիտալի նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանն էր, երբ փողի կուտակման մարմաջը շահագործող դասակարգերի համար դարձել էր անզուսպ մի կիրք, որի բավարարման համար միջոցների մեջ խտրութիւն չէր դրվում: Ոսկու պաշտամունքը տիրապետող էր, և մարդիկ անվերապահորեն ենթարկվում էին նրա մոգական ուժին:

Մատթեոս Զուղայեցու ձեռագրերում բազմաթիվ էջեր են նվիրված փողային ֆետիշիզմին, դիպուկ շտրիխներով բացահայտվում է այդ երևույթի այլանդակ բովանդակութիւնը: Արծաթասերը կոպալաշտ է, գրում է հեղինակը, «զոր ինչ աւելի սիրէ նա է աստուած իւր... յոչինչ համարի զմարդասպանութիւն արծաթասէրն... ի նեղութեան ժամու զմահ ոչինչ համարի վասն արծաթոյ»<sup>165</sup>: Արծաթը կերպարանափոխում է մարդուն. որոշ պայմաններում այն «խոնարհ ցուցանէ զբարկացեալ սիրտն»<sup>166</sup>, իսկ այլ իրադրութեան մեջ մարդու սիրտը կարծրացնում է հացն ապառաժ: «Ի յառաւել սիրոյն ի ժամ մահուանն ոչ ումեք ասէ. այլ թաղեալ յերկրի այնպէս մնա նեղին գոլով բաժին»<sup>167</sup>: Մատթեոս Զուղայեցուն հայտնի է, որ փողային ֆետիշիզմը ապրանքային ֆետի-

160 Նույն տեղում, էջ 44բ—45ա:

161 Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 263ա:

162 Նույն տեղում, ձեռագիր 2229, էջ 299ա:

163 Նույն տեղում, ձեռագիր 6607, էջ 105ա—105բ:

164 Նույն տեղում, ձեռագիր 1345, էջ 37բ:

165 Նույն տեղում, ձեռագիր 6607, էջ 35բ:

166 Նույն տեղում, ձեռագիր 5012, էջ 155:

167 Մ. Զուղայեցի, Գիրք ութն խորհրդոց մեղաց, էջ 44:

շիզմի բարձրագույն աստիճանն է, և երբեմն նա հավասարության նշան է դնում այդ երևույթների միջև: «Գիտելի է զի արծաթասիրութիւն ոչ միայն զայն ասէ, որ արծաթն սիրեն, այլև զոր ինչ արծաթով գնուի զնա սիրելն արծաթասիրութիւն է»<sup>168</sup>, որովհետև ապրանքներն էլ արծաթի նման մոգական հատկություն ունեն: Այս միտքը ասված է ուղղակի, առանց երկիմաստ արտահայտությունների, հետևյալ տողերում. «զինչն է պաշտել ամենայն սրտից սիրելին է. զի ամենայն որ զյոյս և զսէր իւր ունի ի ստացուածս աշխարհի և ոչ յաստուած. այլ զայն իրքն պաշտէ զաստուած»<sup>169</sup>:

Այսպիսով, կրոնական ֆիտիշիզմը աստիճանաբար խամբում է ոսկու և արծաթի փայլի առջև: Կրոնական նախապաշարմունքները նոսրանում են ապրանքադրամական հարաբերությունների հորձանուտում: Աշխարհիկ կյանքի հետաքրքրության շրջանակներն ընդլայնվում են, և տնտեսական երևույթների ուսումնասիրություններով ավելի ու ավելի են հարստանում կրոնական քարոզներն ու ավետարանական մեկնությունները, որի պերճախոս վկայություններից են նաև Մատթեոս Զուղայեցու աշխատությունները:

#### ԵՐԿՐՈՐԴ ԳՆՈՒՆ

### ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

XV—XVIII դդ. հայերը որպես ազգություն կանգնած էին բնաջնջման սպառնալիքի առջև: Այս հանգամանքը իր կնիքն է դրել հայ պատմագիրների աշխատությունների վրա: Եթե վաղ և զարգացած միջնադարում պատմագրության մեջ սոցիալ-տնտեսական երևույթների վերլուծությունները կատարվում էին երկրի տնտեսական առաջընթացի լուսաբանման նշանաբանով, ապա թուրքական և պարսկական տիրապետության ժամանակաշրջանի պատմիչներն արդեն գերազան-

ցազես քննարկում են երկրի տնտեսական քայքայման և ժողովրդի կողոպուտի հետ կապված հանգամանքները: Նրանց աշխատությունները հայ ժողովրդի դարերի խորքից եկող ցասման ու բողոքի ձայնն է՝ ուղղված օտար բռնակալների անլուր բարբարոսությունների դեմ:

Հայտնի է, որ Հայաստանի բոլոր նվաճողները նպատակ են ունեցել բնաջնջել հայ ժողովրդին և տիրանալ երկրին ամբողջությամբ:

Ժողովուրդը, որ երկրի գլխավոր արտադրողական ուժն է հանդիսանում, ստեղծում է հասարակության առաջընթացի համար անհրաժեշտ նյութական ու հոգևոր բարիքներ, շենացնում երկիրը, կանգուն պահում ազգությունն ու նրա ոգին: Այս պարզ ու մեծիմաստ ճշմարտությունը գիտակցել են ինչպես բռնակալները, նույնպես և նրանց լծի տակ տառապող ժողովուրդները:

Հայկական վերջին պետականության անկումից հետո երկիրը դառնում է բարբարոս ցեղերի արշավանքների թատերաբեմ: Վերջիններս խոշտանգում էին հայ ժողովրդին և ամայացնում Հայաստանը: Լենկթեմուրի արշավանքների մասին Թովմա Մեծոփեցին գրում է, որ Արարատյան երկրում նրանք «ամենայն բազմութիւն հաւատացելոց շարշարէին տանջանօք, սովով, սրով, գերութեամբ, անտանելի շարշարանօք և անագորոյն բարութ անմարդաձայն արարին զամենալից զավառն Հայոց»<sup>1</sup>: Հայերին որպես ժողովրդի արմատախիլ անելու քաղաքականությունը եղել է թուրք և պարսիկ բռնակալների գործունեության բովանդակությունը, որը և հանգամանորեն լուսաբանվում է Առաքել Դավրիժեցու մեծածավալ «Պատմության» մեջ: Զալալիների կատարած վայրագությունների նկարագրությունը Դավրիժեցին ամփոփում է հետևյալ տողերով. «Եւ այսպէս զամենայն գեղօրայս գաւառացն Արարատու յաւեր և յապականութիւն դարձուցին. և կերակրելի սերմանեաց և ի բնակչաց թափուր արարին»<sup>2</sup>:

<sup>168</sup> Մատենադարան, ձեռագիր 1402, էջ 287ա:

<sup>169</sup> Նույն տեղում, ձեռագիր 2114, էջ 275ա:

<sup>1</sup> Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոյ, Փարիզ, 1860, էջ 19:

<sup>2</sup> Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, ի Վաղարշապատ, 1884:

Բայց այդպես էին վարվում նաև պարսիկները «ավերելով  
երկրի արևելյան մարզերը»<sup>3</sup>։ Հայ ժողովրդի խոշտանգում-  
ների ծրագիրը ավելի ընդարձակ շահերով սկսեց իրակա-  
նացնել Շահ-Աբասը, որի գործունեությունը հանգամանորեն  
լուսաբանել է Առաքել Գավրիթեցին։ Նա Շահ-Աբասին ան-  
վանում է «աւերողն Հայաստան աշխարհին և կործանողն  
Հայոց ազգին»<sup>4</sup>։

Շահ-Աբասը երկիրը բնակազրկելու և ժողովրդին ոչըն-  
չացնելու մեթոդները ավելի կատարելագործեց։ Հայաստանն  
ամայացնելու համար ավելի նպատակահարմար էր ամբողջ  
բնակչության զաղթի ծրագիրը, որը նա իրականացնում էր  
ամենադաժան մեթոդներով։ Շահ-Աբասը երկիրն ավերելուց  
բացի նպատակ ուներ աշխատուժը փոխադրել Պարսկաստան  
և այն օգտագործել նյութական բարիքների արտադրության  
մեջ՝ զարգացնել գյուղատնտեսությունը, արհեստներն ու  
առևտուրը։ Այդ մասին Գավրիթեցու մոտ կարդում ենք հե-  
տևյալ բնորոշ տողերը. «Շահ-Աբասն, որ զազգս Հայոց ար-  
տասահման արար ի բնիկ աշխարհն Հայոց, և վարեաց աշ-  
խարհն Պարսից, այնոց զիտաւորութեամբն՝ որպես զի աւե-  
րեսցի աշխարհն Հայոց՝ և շինեսցի աշխարհն Պարսից, և  
նուազեսցի ազգն Հայոց՝ և բազմասցի ազգն Պարսից»<sup>5</sup>։  
Խոսքը վերաբերում է ոչ թե մեկ կամ մի քան գավառների,  
գրում է պատմիչը, այլ ամբողջ երկրին «սկսեալ ի սահմա-  
նաց Նախշուանո և անցեալ ընդ Եղեգնաձոր, առ եզերք Գե-  
ղամայ, և Լոուոյ, և զՀամզաշիման գաւառն, զԱպարան,  
զՇարապխանէն, զՇիրակուան, և մասն ինչ զեղօրէից Կար-  
սայ, և զձորն Կաղզվանու բնաւին, և բովանդակ զերկիրն  
Ալաշկերտու, և զեղօրայսն Մակուա, և զերկիրն Աղբակու,  
և զՍլամաստու, և զԽոյայ, և զՌմի... զգաշտն Արարատու  
բովանդակ, և զԵրևան քաղաք, զերկիրն Ղրխբուլաղայ,  
զՄաղկունաց ձոր, զԳառնու ձորն, զՈւրծաձորն։ Եւ առաջ քան  
զայս՝ զգաւառն Կարնոյ, և զԲասենու, և զԽնուսայ, և զՄա-

3 Նույն տեղում, էջ 93։

4 Նույն տեղում, էջ 345։

5 Նույն տեղում, էջ 150։

նասկերտու, և զԱրծկետոյ, և զԱրճշոյ, և զԲերկրու և զՎանայ  
աւարով և գերութեամբ բերեալ էին յԵրևան և ընդ սոսա  
քշեցին և տարան»<sup>6</sup>։

Գրքում բերվում է Շահ-Աբասի այն խոստովանություն-  
ներ, որ ինքը «ի վաղ ժամանակաց ունէր ի մտի զքշելն ազգին  
քրիստոնէից՝ և զաւերելն աշխարհն Հայոց» որոնք Պարսկաս-  
տանում «լինիցին նմա անզերծանելի հարկատուք՝ ծառայք-  
և հողագործք մինչև ցլախտեան»<sup>7</sup>։ Եթե շահը սիրալիր վե-  
րաբերմունք էր ցուցաբերում հայ ունեոր դասի որոշ ըն-  
տանիքների նկատմամբ, ապա դա արևելյան բռնապետնե-  
րին հատուկ խորամանկ կեղծավորության արտահայտու-  
թյուններից մեկն էր։ Շահը պարսիկ ավագանիներին ասում  
է, որ ինքը նոր-Ջուղայի հայերին սիրաշահում է «ոչ թե  
վասն օգուտի նոցա՝ այլ վասն օգուտի մեր՝ զի աշխարհս  
մեր շինեսցի՝ և ազգն մեր յաւելցի»<sup>8</sup>։ Հակառակ դեպքում  
նրանք կկոտորվեն, կփախչեն և մեր աշխատանքն ի դերև  
կանցնի։ Իսկ այսպես վարվելու դեպքում Հայաստանում  
ծնվածներն աստիճանաբար կմահանան, իսկ նորածինները  
կամովին, աստիճանաբար կդառնան մահամեղական։ Դուք  
նույնպես պետք է ինձ նման վարվեք, համոզում էր շահը  
նրանց։ Գավրիթեցին սրտի անհուն կսկիծով է շարադրում  
հայերի տեղահանման, դեպի Պարսկաստանի խորքերը աք-  
սորելու և ճանապարհին նրանց ոչնչացնելու պատմությունը։  
«Եւ ի զօրացն Պարսից՝ որք վարելք էին կարգեալ զժողովրդ-  
դեանն՝ շրջապատեալ զժողովրդեամբն պահինն՝ զի մի ոք  
փախիցէ, այլ և փայտիւ գանեալ՝ հարեալ՝ բեկեալ՝ մղեալ ի  
գետ անդր լնուին, և այսպէս վտանգն ու վիշտն սաստկա-  
նայր ի վերայ ժողովրդեանն։

Իսկ ողորմելի ժողովրդեանն հայէին յառաջ զանհուն  
գետն տեսանէին իբրև զծով որ խեղդէր և յետուստ զսուրն  
Պարսից՝ որ սպանանէր, և ճարակ փախչելոյ ոչ գտանիւր-  
և առհասարակ աղիողորմ ողբս, և յորդ արտասուս յաշաց

6 Նույն տեղում, էջ 38։

7 Նույն տեղում, էջ 26։

8 Նույն տեղում, էջ 48։

հեղեալ առնէին երկրորդ Երասխ, և ձայն լալեաց, և հա-  
ռաշանաց, ճշանաց, վայոց, կսկծանաց, մորմոքանաց ընդ  
միմեանս խառնեալ գոշեցուցանէին ուժդին աղաղակով, իսկ  
ողորմութիւն ու փրկութիւն ոչ ուստէքէ էր... Որք անհմուտք  
էին լողալոյ և անզօրք, ծերք և պառաւունք, տղայք և աղջ-  
կունք և մատաղ մանկտիք լցեալք էին երեսս ջրոյն. և գետն  
առեալ տաներ զնոսա իբրև զխոիւ ի ժամանակս գարնա-  
նոյ. և գետատար մարդով ծածկեալ էր երեսն գետոյն»<sup>9</sup>:

Դավրիժեցու մեծածավալ գիրքը գերազանցապես Ան-  
գրերկովկասի աշխատավոր ժողովուրդների կոտորածների  
պատմութիւնն է: Ըստ որում, նա միջին դարերի սակավա-  
թիւ պատմագիրներից մեկն է, որը հանդես է գալիս հայ,  
վրացի, հրեա, աղվան, մահմեդական աշխատավորների անու-  
նից, որոնք կողոպտվում և հարստահարվում էին շահագոր-  
ծող բռնակալների կողմից: Դավրիժեցին պատմում է, որ  
միևնույն մեթոդներով Շահ-Աբասը ավերում ու կողոպտում  
էր նաև Վրաստանը: Կախեթիայի և Գրեմի քաղաքի բնակ-  
չութիւնը նա խոշտանգեց կոտորածներով և գերեվարու-  
թյամբ, պատմում է հեղինակը, իսկ որոնք ցուցակագրվել էին  
որպես շահահպատակներ, հավաքեցին Քուռի ափին և քշեցին  
Պարսկաստանի Ֆահրաբադ քաղաքը: Նրանցից մի մասն էլ՝  
վրացի, հայ, մահմեդական, հրեա տեղավորեց զյուզերում:  
«Եւ այսու կերպիւ աւերեաց զաշխարհն Վրաց, Կախեթու և  
Գրեմու»<sup>10</sup>:

Պարսկաստանում, սակայն, գաղթականները չբաղմա-  
ցան, քանի որ նրանք անսովոր էին խոնավ, դաժան, խեղդող  
օդին, ինչպես նաև այդ երկրի սննդին, ջրին ու ապրելակեր-  
պին, ուստի և սկսեցին մահանալ, զրում է պատմիչը:

Որոշ ժամանակից հետո այնքան շատ գաղթականներ  
ոչնչացան, որ հազիվ տասից մեկը մնաց կենդանի: Իսկ  
սրանք էլ այնքան հյուծվեցին, որ անկարող էին ֆիզիկական  
աշխատանքով պահպանել իրենց գոյութիւնը:

Դավրիժեցու ժամանակներում պատմիչներից ոմանք հա-

վանաբար արտահայտել են այն կարծիքը, որ Շահ-Աբասը,  
իբր թե քրիստոնյաներին սիրող, հովանավորող իմաստուն  
տիրակալ է եղել, որի դեմ վճռականապես բողոքում է հեղի-  
նակը: «Արդ որք գովեն զայս շահս թէ քրիստոսասէր էր և  
աշխարհաշէն և խաղաղարար թագաւոր էր, այս էր նորա  
քրիստոնեասիրութիւնն, որ զամենայն աշխարհն քրիստոնէից՝  
զՎայոց և զՎրաց աւերեաց. և զամենեսեան սպառեաց սրով  
և սովու և գերութեամբ, և զմնացեալսն վարեալ տարավ ի  
Ֆահրապատ և յԱսպահան, ուր նոքա ևս օր աւուր անդնն  
սպառին պէս պէս կերպիւ»<sup>11</sup>:

Մանր ազգութիւնների համաձուլման մեթոդներից մեկը  
բունի հավատափոխութիւնն էր, որն իրականացվում էր  
ամենատարբեր միջոցներով: Պարբերաբար կատարվող ման-  
կահավաքները արգելակում էին բնակչութիւն վերարտադր-  
ութիւնը և խտացնում մահմեդական բանակի շարքերն ու  
լցնում հարեմները: Մեծահասակ բնակչութիւնը համառորեն  
դիմադրում էր հավատափոխման փորձերին և տեղի տալիս  
ծայրահեղ դեպքերում միայն: Դավրիժեցին պատմում է, թե  
ինչպես Շահ-Աբասը աղքատացած հայերին պարտքով 400  
թուման՝ բաժանեց՝ երեք տարի ժամանակով, որպեսզի  
նրանք զբաղվեն առևտրով և հարստացնեն երկիրը: Շահը,  
անշուշտ, համոզված էր, որ նրանց շնչին փոքրամասնու-  
թիւնը միայն կարող է վերադարձնել պարտքը: Այդ թշվառ-  
ները վերցրած փողը ծախսում են սովի ճիրաններից մի կերպ  
ազատվելու համար, իսկ պարտքի փոխարեն ընդունում մահ-  
մեդականութիւն և ստրկացվում: Դավրիժեցին դատապար-  
տելով Շահ-Աբասի այս խարդավանքը, նրա բաց թողած  
«վարկը» բնութագրում է «որպես զմահարար թոյնս օձի, և  
պատճառ նոցինս կորստեան. և ոչ եղեն մտախոհ, թէ որպէս  
զփուշս օձի է գանձն այն մահացուցանող»<sup>12</sup>: Մատենադրա-  
կան աղբյուրներում բազմաթիւ դեպքեր են նկարագրված,  
երբ տեղական իշխանութիւնները զանազան պատրվակներով  
ստիպում են քրիստոնյաներին մահմեդականութիւն ընդու-

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 30—31:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 99:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 100:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 113:

նել, իսկ հակառակ դեպքում՝ նրանց խոշտանգում և ոչնչացնում են հրապարակայնորեն<sup>13</sup>:

Ազգաձուլման քաղաքականության այդ վայրագ մեթոդների նկարագրությունն ընդարձակ տեղ է գրավում նաև Զաքարիա Սարկավազի «Պատմագրություն» մեջ: Պատմիչը սրտի կսկիծով է ներկայացնում երիտասարդ կանանց և պատանիների տանջանքները, որոնք դառնում են իրենց հավատի ու համոզմունքների նահատակ<sup>14</sup>: Հանձինս նրանց պատմիչները ներկայացնում են հայ ժողովրդին: Նրանց մեջ մարմնավորված են ժողովրդի տոկունությունը, հաստատակամությունը, համարձակությունը և հավատը ապագայի նկատմամբ: Երբ Շնորհավորից պահանջում են հայտնել իրեն պատվազուրկ անելու փորձի համար քրդին սպանող եղբոր տեղը, հերոսուհին պատասխանում է, որ քրդին սպանել է ինքը և պատրաստ է կրելու իր հանցանքի պատիժը, եթե սեփական պատվի պաշտպանությունը հանցանք է համարվում: Հեղինակի մյուս հերոսուհի Պատվականը, արհամարհելով իրեն սպառնացող մահապատիժը, խանին անառակ է անվանում: Թշնամու գերությունից խուսափելու համար մշեցի մայրը «առեալ սուր ի ձեռն իւրում զենեաց զորդին ցանկալի... և ինքն մայր մանկան սակաւ մի յառաջ ընթացեալ ել ի վերայ բարձրաւանդակ վիմի, ի վայր ընկեց զինքն»<sup>15</sup>:

Նյութական և հոգևոր բարիքների ստեղծողը մարդն է, աշխատավոր ժողովուրդը: Ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի առջև կանգնած ժողովրդի մտավորականների համար այս ճշմարտությունը ավելի քան ակնհայտ էր ուշ միջնադարում, երբ նրանց աչքի առջև դատարկվում էր երկիրը, և

<sup>13</sup> Նույն տեղում, գլ. 44, 45, 46, 47, 48:

<sup>14</sup> Զաքարիայ Սարկավազ, Պատմագրություն, ի Վաղարշապատ, 1870, հատոր երկրորդ, գլ. 15, 16, 20, 59, 60, 62, 65:

<sup>15</sup> Թովմա Մեծոփեցի, նշված աշխատություն, էջ 25—26: Նման նահատակների պատմություն տե՛ս նաև «Ժամանակագրություն Գրիգոր Վարդապետի Կամախեցու կամ Դարանաղցու», Երուսաղեմ, 1915, էջ 532—533, Չամչեան Միքայել, Պատմություն հայոց, հ. գ, ի Վենետիկ, 1786, էջ 432—444, 515—516, 651—656:

երբեմնի շեն քաղաքներն ու գյուղերը ավերվում էին ու ամայանում: Զաքարիա Սարկավազը ոգևորություն էր և մեծ համարումով է պատմում այն խաների ու կառավարիչների գործունեության մասին, որոնք երկրում հաստատում են կարգ ու կանոն, նպաստավոր պայմաններ են ստեղծում բնակչության բազմացման և նրանց տնտեսական գործունեության ծավալման համար: Ամիրզունա խանը Երևանի կառավարման իր գործունեության առաջին իսկ օրերից «իսկոյն ձեռն էարկ շինութեան և մարդաշատութեան»<sup>16</sup>: Վանի և Մուշի սահմաններում կատարած արշավանքների ընթացքում խանը իր հետ բերում է մեծ թվով զերիներ և բնակեցնում Երևանի ու էջմիածնի միջև ընկած տարածքում, պատմում է Զաքարիա Սարկավազը, որի շնորհիվ մինչ այսօր գոյություն ունեն այնպիսի բարեկարգ գյուղեր ինչպիսիք են՝ Քյալարը, Գոյուգումբեթը, Կավակերտը, Փարաքարը, Սաբաթը և այլն:

Թովմա Մեծոփեցին անգամ, որի աշխատությունը կենդանորի և նրա հաջորդների կատարած ավերումների համատարած նկարագրությունն է առհասարակ, կարճատև խաղաղության ժամանակների մասին գրում է, որ «եւ եղև ի նոյն ժամանակս խաղաղութիւն խնամօքն Աստուծոյ ամենայն աշխարհիս Վրաց և Աղվանից, և շինութիւն ամենայն աշխարհիս, մինչ զի յԱրճիշոյ մինչ ի գաւառն Արարատեան մարդիկ ի յաւեր ոչ բնակէին. այլ ի շենս բնակէին. և թէպէտ հարկապահանջութիւն բազում էր, սակայն խաղաղութիւն առանց խռովութեան էր»: Խաղաղ տարիներին, նույնիսկ ծանր հարկապահանջության պայմաններում, մարդկանց ժրջան աշխատանքը ստեղծում է բավականաչափ նյութական բարիքներ: Գլխավորը մարդն է և նրա ստեղծագործ աշխատանքը: Այս իրողության հետ միաժամանակ ընդգծվում է նաև մարդու անձնական և հասարակական շահերի միջև եղած սերտ կապը: Բագրատունիների թագավորության ժամանակ Մուշեղ թագավորի որդի Արասի մասին Մ. Չամչյանը գրում է, որ «Սա իբրև հանդարտեցոյց զթագաւորութիւն իւր, զամենայն

<sup>16</sup> Զաքարիայ Սարկավազ, նշված աշխատություն, հատոր առաջին, էջ 45:

մարդիկ նահանջեալ ի դատարկակեցութենէ ամենեցուն եզիտ  
և ետ գործ պիտանի ի շինութիւն անձանց և յօգուտ հասարակաց»<sup>17</sup>:

Շահ-Աբասի օրոք Արարատյան երկիրը ամայանում է և դառնում զազանների որջ: Զաքարիա Սարկավագը դառնությամբ է նկարագրում այն դեպքերը, երբ զայլերը հարձակվում են սակավամարդ գյուղերի բնակչության վրա, մանուկներին փախցնում մայրերի գրկից և օրորոցները<sup>18</sup>: «Մտաներ գայլն յԱրճէշ, և յամենայն գաւառս մեր, զորդին ի մօր գրկացն առեալ պատառէր և ուտէր»<sup>19</sup>:

Օտար բնակալների կողմից մարդկանց ոչնչացման և երկրի ավերման քաղաքականությունը հայ պատմիչները մերժում են ելնելով ոչ միայն հումանիզմի սկզբունքներից, նրանց աշխատությունների բազմաթիվ էջերում բարբարոսությունը դատապարտվում է որպես հասարակական աղետ առհասարակ, որպես երկրի տնտեսական և մշակութային զարգացման ընթացքը խափանող ահավոր շարիք:

Դավրիժեցին պատմում է, որ Շահ-Աբասը Ալահվերդի խանին հրամայում է Երևանից մեկնել Արծկե և գրավել բերդը, որի պաշարումից ու գրավումից հետո «յարձակեցան ի վերայ գաւառաց աշխարհին, և զամենայն երկիրն Արծկէոյ հաւասար աւերաց, և հրդեհ արկեալ այրեաց, և զամենայն արու այս կոտորեաց՝ և զինչս, և զստացուածս՝ զուստրս, և զդուստրս և զկանայս յաւուր և ի գերութիւն առեալ»: Այնուհետ խանը գնում է Արճեշ, Բերկրի, Վան և նույնպես ավերում ամենուրեք. «եւ ժողովեալ զամենայն գերեալսրն, և հօտանս անդեոց, և ջոկս ոչխարաց, և երամակս ձիոց, իբրև մեծ և յորդեալ հեղեղ զամենայն վարեալ ածեալ բերեալ հասուցին Երևան ի լիւրիւն բանակին Պարսից»<sup>20</sup>: Այս արշավանքների ընթացքում ավերվում են ոչ միայն պարտ-

վող կողմերի երկրները: Մեր կողմից ընդգծված արտահայտության մեջ որոշակիորեն ասված է, որ կողոպտված նյութական բարիքները ծախսվում են անարտադրողաբար: Պարբերաբար կրկնվող այս ավերումները կազմում են առատորեն կերակրվող բանակի և այդ հարստությունները շռայլող խաների կյանքի բուն բովանդակությունը: Պարզ է, որ օրավուր աճող այդ ծախսերը ծածկելու գլխավոր աղբյուրը սեփական երկրում արտադրվող հարստությունն էր: Դավրիժեցու աշխատության մեջ բազմաթիվ առիթներով ընդգծվում է այն միտքը, որ նվաճողները ոչ թե պետք է ավերեն երկիրը, այլ պայմաններ ստեղծեն նրա բարգավաճման համար, որը հանդիսանում է իշխանությունների տնտեսական հիմքը: Զալալօղլու արշավանքների նկարագրության մեջ ասված է, որ նվաճողները ամեն ինչ «կերան և մանրեցին, և զմնացորդն ոտից կոխան արարին. փոխանակ շինելոյ գերկիրն՝ աւերեալ քայքայեցին՝ և վերջին քշուառութիւն հասուցին, թէ անողորմ կեղեքելով՝ և թէ այլ պղծագործութեամբ»<sup>21</sup>:

Այլազգի և յուրային աշխատավորների վաստակի մեծագույն մասը գնում էր պարսից շահերի և Օսմանյան կայսրության գանձարանը: Թաղևոս Ավղալբեգյանի հաշվարկումներից պարզվում է, որ երկրագործների բավական ստվար մասի շահագործման աստիճանը հավասար էր 260 տոկոսի<sup>22</sup>: Հասարակական հարստության կողոպուտն անհնարին էր դարձնում վերարտադրությունն առհասարակ: Հարկահանման դաժան մեթոդների նկարագրությունն ունենք Զաքարիա Սարկավագի հետևյալ տողերում. «Հայրն իմ Մկրտիչ շալակեաց զիս զԶաքարիայս և զեղբայրն իմ զԽաչատուր առաջի արկեալ գնաց. և իբրև ետես (հարկերի վերակացու Ասլան աղան, որը ցուցակագրում էր արու բնակչությունն ու գյուղացիների ունեցվածքը— Ն. Թ.) զմեզ փոքր և կաղ՝ և թիւր

17 Զամչեան Միքայէլ, Պատմութիւն հայոց, հ. Բ, ի Վենետիկ, 1785, էջ 868:

18 Զաքարեայ Սարկավագ, Նշված աշխատություն, հ. 1, գլ. 32, 33:

19 Թովմա Մեծոփեցի, Նշված աշխատություն, էջ 94:

20 Առաքել Դավրիժեցի, Նշված աշխատություն, էջ 22—23:

21 Նույն տեղում, էջ 52 (ընդգծումը մերն է—Ն. Թ.):

22 Թաղ. Ավղալբեգյան, Երկրագործական հավելյալ արդյունքի նորման 17—18-րդ դարերում և 19-րդ դարի սկզբին», Նորք, 1923, գիրք երրորդ, էջ 115:



ուսամբ, բարկացավ՝ և ասէ, զառողջ որդիսն քո պահեալ ես, և զանդամալոյժքդ բերեալ ես և հրամայեաց արկանել երկիր ի վերայ երեսացն. և բերեալ ջուր թափեցին ի վերայ անձին, յոտաց մինչև ցզուխն՝ ջրողող արարին՝ և նստոյց այր մի ի գլխոյն և այր մի ի վերայ ոտիցն. և հրամայեաց շորից զինուորաց՝ Բ կողմամբ հարկանել, և այնքան հարին, մինչ զի մորթն ի մարմնոյն ի բաց ուստեալ, և ինքն անշնչացաւ և համարեցին զնա մեռեալ. և ապա քարշեալ զնա թաղեցին ի մէջ փայենի»<sup>23</sup>:

Հարկերի ծանրութեան տակ հեծող ժողովուրդը ստիպւած է լինում հրաժարուել պապենական ժամանակներից արմատացած արդյունավետ արտադրական գործունեությունից: Այդ տեսակետից պերճախոս է «քողավ» հարկի մասին զրույցը, որ պահպանված է Առաքել Դավրիժեցու գրքում: Ծահ-Աբասը իր շրջագայություններից մեկի ժամանակ ծպտված հյուր է լինում Արագստանի (պարսկական Իրաք) Թառեմ գավառի Հոռոմապատ գյուղում: Ծահի այն հարցին, թե ինչու՞ ձեր՝ ականհայտորեն նախկինում հարուստ գերդաստանն այսպես աղքատացել է, հյուրընկալ պառավը պատասխանում է. «ոչխարի քողան է, զոր թագաւորական հարկահանքն եկեալ ոչխարաց քողան առնուն, զի տարեց տարի զնալով զկնի միմեանց՝ որքան զնաց ծանրացաւ քողան, և այնու ոչ կարացաք, որ զնոյն ինք ոչխարսն զամենայն վաճառեալ տուաք ի քողան, և այնու ոչ կարացաք վերածանիլ, զպարտս ևս առաք և տուաք քողան և ապա զինչ և զստացուածս օր յաւուր վաճառելով, զօրս ի քողան տուաք, և զորս պարտատիրաց վճարեցաք, ոչինչ մնաց, քանզի կարի յոյժ ծանր էր հարկն քողավին»<sup>24</sup>: Մեր պատմիչները իրավամբ ծանր հարկերը համարում են օրինականացված կողոպուտ, որը դառնում է տնտեսության քայքայման և աշխատավորության աղքատացման բուն պատճառը:

Այս իրողությունը հակիրճ պարզութեամբ է արտա-

հայտված զրոսանքի ելած փաշային՝ ենիչերինների դեմ ուղղված գյուղացիների հետևյալ զանգատի մեջ. «մեք գերի եմք ի ձեռս նոցա ամենայն ընդանովք մերովք վասն անվճար սուտ պարտուց նոցին, անճարակութենէ մէկ քանի զուրուշ ի փոխ եմք առել եւ ի հարկապահանջութիւն եմք տուել, մեկին տասն շահ վճարել եմք՝ չկարացաք ազատիլ, այնչափին շատացուցին զարտ եւ զանդաստան եւ զամենայն արջառ եւ զտունքն իւրեանց եմք տուել եւ իւրեանց մարապութիւն վառնեմք, եւ զիհաց մի զնալու ճարակ շունիմք, ինչ կու հրամայես ո՞րպես խրատ կուտաս մեզ տիրաբնոր»<sup>25</sup>: Այս կարգի ոճրագործ էր նաև Աբբասյան Ամիրապետության առաջին ներկայացուցիչ Արու-Աբբաս էս Սաֆֆահը (750—754 թթ.). խաչատուր Զուղայեցին գրում է, որ նա ...«խնդրեաց հարկս ի կենդանեաց և ի մեռելոց՝ որք իւրեով իշխանութեամբ էին, մինչ զի հասոյց զամենեսեան ի յետին թշուառութեան, և արար շքավոր և ողորմելի ամենեցուն»<sup>26</sup>: Եսայի Հասան—Ջալալյանը գրում է, որ Հյուսիսին շահ Սուլթանն իր թագավորություն 10-րդ տարում հայերին աշխարհագիր անելու հրաման է արձակում և «եզին հարկս ի վիրայ գրելոցն. երեքպատիկ հավելմամբ»<sup>27</sup>: Այս աշխարհագրով միաժամանակ հարկվում են բնակչության անասուններն ու ամբողջ ունեցվածքը, որը և ժողովրդին հասցնում է հետին աղքատության: Պատմագիտական գրականության մեջ հիշատակվում են XVI—XVII դարերում պետական շինովնիկների կողմից գանձվող 30 տեսակի հարկեր, որոնց բնույթի ու բովանդակության մանրագնին նկարագիրը տվել է Հ. Դ. Փափաղյանը<sup>28</sup>: Հայ գյուղացիները դրանից բացի բազմաթիվ հարկեր էին վճարում վանքերին և կատարում տարբեր բնույթի պարտավորություններ: Հայ

25 Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 216:

26 Խաչատուր Զուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 62:

27 Հասան-Ջալալեանց Եսայի, Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից՝ զիպիոց յաշխարհին Աղուանից, 1839, ի Շուշի, էջ 19:

28 Տե՛ս А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках, Ереван, 1972, стр. 226—242.

23 Զաֆարեայ Սարկաազ, Կշված աշխատություն, հ. I, էջ 66:

24 Առաքել Դավրիժեցի, Կշված աշխատություն, էջ 131:

ազնվականությունը թեև հիմնականում՝ վերացել էր, բայց մեկիքները դեռ շարունակում էին աշխատավորների շահագործումը ամենաբիրտ, դաժան մեթոդներով: Մեկիք Փարսադանի հետապնդումներից ազատվելու համար գյուղի քահանան լքում է իր տունը՝ իր ամբողջ ունեցվածքը թողնելով մեկիքին, պատմում է Զաքարիա Սարկավագը<sup>29</sup>: Ղարաբաղի մեկիքներից մեկին Եսայի Հասան-Ջալալյանը բնութագրում է որպես «Յոյժ ազահ քան յուղայ, և անյագ քան զտղրուկ»<sup>30</sup>: Նա «բարեկի և շեն և մարդաշատ» երկիրն ավերեց: «Պէտպէս հնարիւք մեկիքս այս ժողովեաց մթերեաց գանձս յոլովս սաստիկս ոսկոյ և արծաթոյ և բռնացաւ ի վերայ ամենեցուն»<sup>31</sup>: Այս մեկիքի հարստության մասին պատմիչը գրում է, որ նրանց գերդաստանից հօգուտ թագավորական գանձարանի բռնագրաված կանխիկ գրամի գումարը կազմում էր «նոթուման զատ ի յայլ կահից և կարասեաց, և շորքոտանեաց, և մլքերաց, որոց ոչ գոյր թիւ. քանզի ասէին լինել Ամաջրաղաց են. տինկ որ պրինձ զտեն են. քում և մաջինակ որ զապրիշում քաշեն են. գետք և առուք զոր արխ ասեն ի վերայ արարից և արմտաց երկրագործութեանց յոլովք և այլն»<sup>32</sup>

Զաքարիա Սարկավագը հիշատակում է մի չափազանցված զրույց, որտեղ ընդգծված է կոռալին աշխատանքի ստրկական բնույթը: Ամիրզունա խանի բարեմասնությունները շարադրելով հանդերձ, Զաքարիան նշում է, որ նա շատ ծանրացրեց կոռալին աշխատանքի լուծը: Այդ առթիվ է ստեղծվել այն զրույցը, թե հղի կնոջ ամուսնուն տանում են կոռալին աշխատանքի և բաց շեն թողնում, մինչև որ նորածինը մեծանում և փոխարինում է հորը<sup>33</sup>:

Կոռալին աշխատանքի մասին Դավրիժեցին գրում է, որ շալալիները գյուղացիներին ստիպում էին սեփական ցորենն

ու գարին բարձել իրենց իսկ անասուններին և տանել ուր հարկն է: Կողոպտված ավարի ապահով փոխադրման ամբողջ պատասխանատվությունը դրվում էր գյուղացիների վրա, «որ է կոռ»<sup>34</sup>: Ծանր հարկերի տակ տնքում էին ոչ միայն հայ այլև թուրք աշխատավորները: Այդ առթիվ Թովմա Մեծոփեցին պատմում է, որ «բռնաւորին Սքանգարին որդի մի կայր եղեալ իշխան ի յամուրն Տոսպ գավառի ի յոտն վարագայ ի վան քաղաքի՝ անուն Արալի, և առնէր զանիրաւութիւն հարկապահանջութեամբ ազգիս մեր և տաշկաց»<sup>35</sup>: Գյուղացիները բռնակալի դեմ ուղղված իրենց բողոքում գանդատվում են, որ ստեղծված դրությունն այլևս հանդուրժելի չի կարելի «զի կարի յոյժ աղքատացուց զաշխարհս մեր»<sup>36</sup>:

Պատմիչը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում գանձվող հարկերի չափի մասին: «Ամենայն մարդագլուխ 40 թանկայ առնուն թող զբահրայ և զչարէք ի ծերոց և ի տղայոց, յորբոց և յայրեաց, ի կուրաց, յաղքատաց եւ ի տնանկաց»<sup>37</sup> նույն վիճակում էր նաև քաղաքի աշխատավորությունը: Կատարված բարբարոսությունների հետևանքների մասին պատկերացում կազմելու համար ուշադրավ են թուլմայի հետևյալ տողերը. «Ամենայն գերին ի 1000 թանկայ վաճառէին, և այնքան աղքատութիւն անկեալ կամք ամենայն աղքատ, քաղաքք եւ գիւղք, վանք և ազարակ զի մեն քաղաք եւ մեն գիւղ գերի մի գնել ոչ կարէ վասն դառն աղքատութեան տառապանաց»<sup>38</sup>: Աշխատավորների օրինականացված կողոպուտը լրացնում էին կաշառքն ու զանազան խարդախություններով ուղեկցվող թալանը: Այդ տեսակետից ուշագրավ է էջմիածնի նկատմամբ պարսից շահերի վարած քաղաքականությունը: Հայ պատմագիտական գրականության մեջ բազմաթիվ վկայություններ կան շահերի կողմից էջմիածնին տրված տնտեսական արտոնությունների մասին: Նրանց «բա-

29 Զաքարիա Սարկավագ, *Նշված աշխատություն*, հ. I, էջ 82—83:

30 Հասան-Ջալալեանց Եսայի, *Նշված աշխատություն*, էջ 32:

31 Նույն տեղում, էջ 33:

32 Նույն տեղում, էջ 35 (հա = 70000, հճ = 500):

33 Զաքարիա Սարկավագ, *Նշված աշխատություն*, հ. I, էջ 46:

34 Առաքել Դավրիժեցի, *Նշված աշխատություն*, էջ 62:

35 Թովմա Մեծոփեցի, *Նշված աշխատություն*, էջ 19:

36 Նույն տեղում, էջ 99:

37 Նույն տեղում, էջ 111:

38 Նույն տեղում, էջ 122:

րեացականութիւնը» երբեմն մեկնաբանվում է որոշ շահերի քրիստոնեասիրութեամբ, երբեմն Երևանի անհնազանդ խաների կամայականութիւնների դեմ պատվար ստեղծելու դիտավորութեամբ և այլն: Այդ «քրիստոնեասիրութեան» տրնտեսական բովանդակութիւնը, սակայն, լավ է բացահայտված Դավրիժեցու մոտ: Շահ-Աբասը կանչում է Դավիթ և Մելիքսեթ կաթողիկոսներին, պատմում է Դավրիժեցիին, և ասում, թե, իրենք Օսմանյան երկրի հետ միասին գրավել են այդ երկրի հարստութիւնները, որ Օսմանյան պետութեանն ունեցած հայերի բոլոր պարտքերը այժմ պետք է վճարվեն իրենց, որից հետո միայն նրանք ազատ և անպարտ լինելու թուղթ կատանան<sup>39</sup>: Եթե սրան ավելացնենք նաև այն, որ պարսից շահերը տարբեր առիթներով էջմիածնի կաթողիկոսներից որպես ընծա կամ որպես կաշառք հսկայական գումարներ էին շորթում, ապա ակնհայտ կդառնա, որ էջմիածնին տրված տնտեսական արտոնութիւնը արբունական գանձարանը լցնելու միջոցներից մեկն է եղել միայն:

Կաշառակերութիւնը վաղնջական ժամանակներից սկսած շահագործողական հասարակարգերում հասարակական շարիքներից մեկն է եղել աշխատավորների համար, որը, սակայն, Պարսկաստանում ահավոր չափերի էր հասել: Զաքարիա Սարկավազը պատմում է, թե ինչպես ոմն պարսիկ քանաքեռցի եպիսկոպոս Միքայելի ունեցվածքին տիրանալու նպատակով, իրեն հայտարարում է վերջինիս ազգականը և կաշառքի միջոցով համապատասխան կեղծ փաստաթղթերի օգնութեամբ հասնում է իր նպատակին<sup>40</sup>: Առաքել Դավրիժեցիին հարուստ նյութեր է բերում և ցույց տալիս, թե ինչպես «տան կաշառս մահմեդականաց, և կացուցանեն սուտ վկայութիւն, և քաշեն զքրիստոնեաք առ դատավոր մահմեդականս ի դատաստան, և պահանջեն ի քրիստոնէից զոր ինչ և հնարել կարին»<sup>41</sup>:

Գրիգոր Դարանաղցին սուլթան Մուհամեդի ժամանակների մասին գրում է, որ «կաշառովք տային զիշխանութիւն

գավառապետութեանց և աշխարհակալութեանց և դատավորութեանց, և տակավին դեռ ի տեղին ոչ էին հասեալ, մանզուլ առնէին և զտեղի նորա այլ ումեմն տային»<sup>42</sup>: Կաշառքով կարելի էր նույնիսկ թագավորական հրովարտակները շրջանցել: Նույն պատմիչը գրում է, որ Մուրատ փաշան ջալալիների նկատմամբ տարած հաղթանակից հետո բնակիչներից դատարկված երկիրը կամենում է շենացնել, զարգացնել արհեստներն ու հողագործութիւնը: Այդ նպատակով հրապարակվում է մի թագավորական հրովարտակ, որով կարգադրվում է երեք ամսվա ընթացքում «ամենայն ոք, որ Անատոլիէն եկեր, ամենայն ազգ և ազինք զձեր պատրաստութիւն տեսէք, որ հազրը լինիք. սուրկուն կառնեմ, ամենայն ոք իւր հայրենի տեղին կու զրկեմ»<sup>43</sup>: Բայց, ավելացնում է հեղինակը, «եղեն իսկ այնպես, որպես և բազումք աստ և անդ հնարեցան և կացին, ոմանք կաշառօք և ոմանք յարքունի գործակալութեան աղագաւ ի շինումն տան աղօթարանի»<sup>44</sup>: Կաշառքի գումարների չափերի մասին պատկերացում կազմելու համար հիշատակենք Դարանաղցու գրքից այն դեպքը, երբ հայերի և հույների միջև կրոնական բնույթի վեճը լուծվում է հույների օգտին, քանի որ «Պոստանճի պաշին և մայր թագավորին և տափտարտարն զթագաւորին սիրտ հավանեցուցին հարիւր հիսուն բռնն ստակ կաշառ գրին առաջի թագավորին»<sup>45</sup>: Իսկ երբեմն էլ բնակչության այդ տիպի դաղթերը կազմակերպվում էին հատկապես կողոպտելու դիտավորութեամբ: Աբրահամ Կրետացին իր աշխատութեան մեջ պատմում է, որ խանի հրամանով Թիֆլիսի հայերից 300 տուն ցուցակագրում են Խորասան ուղարկելու համար և ազատ արձակում իրեն՝ կաթողիկոսի միջնորդութեամբ, այն բանից հետո միայն, երբ նրանցից «ԳՌ թուման և ԳՌ սօմար ցորեան»<sup>46</sup> են վերցնում: Հյուսիսին շահ Սուլ-

42 Գրիգոր Դարանաղցի, ժամանակագրութիւն, էջ 14—15:

43 Նույն տեղում, էջ 145:

44 Նույն տեղում:

45 Նույն տեղում, էջ 262:

46 Աբրահամ Կրետացի, Պատմագրութիւն անցիցն իւրոց և նատր-Շահին Պարսից, ի Վաղարշապատ, 1870, էջ 25 (ԳՌ՝ 3000):

39 Առաքել Դավրիժեցի, նշված աշխատութիւն, էջ 18—19:

40 Զաքարեայ Սարկավազ, նշված աշխատութիւն, հ. I, էջ 72—73:

41 Առաքել Դավրիժեցի, նշված աշխատութիւն, էջ 49:

Թանհի Թագավորության ժամանակների մասին Եսայի Հասան-Ջալալյանը գրում է, որ «Թագավոր և նախարարք կաշառակուր լեալ փոյթ ընդ փոյթ փոփոխեալ հանէին և միում ամի Բ և Գ տեարս և իշխանս, ի միում քաղաքի և գավառի ղկնի միմեանց առաքէին. և նոքա եկեալ որպէս և ինքեանք կաշառօք ստացեալ էին զիշխանութիւնս իւրեանց, նոյնպէս և նոքա այնպէս ամենայն զդատ և զիրավունս ժողովրդեան ի բաց եղեալ կեղեքեին, կողոպտէին զհնազանդեալս իւրեանց»<sup>47</sup>:

Նման դեպքերն ու օրինակները բազմաթիւ են, դրանք ակնհայտորեն վկայում են, որ ցանկացած դեպքում, ցանկացած պատրվակով պարսիկ շահագործողները կարող էին կաշառքի միջոցով օրինականացնել կողոպտւոր: Զաքարիա Ազուլեցու «Օրագրութեան» էջերի վկայութիւնները ցույց են տալիս, որ պարսիկ աստիճանավորներն ամեն մի պատեհ և անպատեհ առիթ օգտագործում էին իրենցից կախում ունեցող «գործ» ստեղծելու համար, որի լուծման ամենաընդունված ուղին կաշառքն էր<sup>48</sup>:

Հայ աշխատավորների «աստծու պատիժներից» մեկն էլ գյուղերում տարբեր գործերով Թափառող պաշտոնյաների և նրանց հետ եկած մարդկանց «հյուրասիրութեան» ծախսերն էին: Այդ տեսակետից արժեքավոր են Զաքարիա Ազուլեցու գրքի այն էջերը, որտեղ հեղինակը հիշատակում է բազմաթիւ դեպքեր, երբ մի քանի տասնյակ ձիավորներով գյուղ եկած խաները շաքաթներով խժոռում էին աշխատավորների աղքատիկ ապրուստի վերջին պաշարները<sup>49</sup>: Այս կարգի «այցելութիւնները» կանխելու համար գյուղացիները հաճախ կաշառք էին տալիս այս կամ այն խանին կամ պետական համապատասխան աստիճանավորին<sup>50</sup>:

Հայ աշխատավորներին կողոպտելու տարածված միջոցներից մեկն էլ կրոնական հալածանքներն էին, որոնք ավելի շահագիտական, քան դավանաբանական նպատակ ունեին:

47 Եսայի Հասան-Ջալալեան, *Եղված աշխատութիւն*, էջ 22:

48 Զաքարիա Ազուլեցի, *Օրագրութիւն*, Երևան, 1938, էջ 73, 78, 102, 110, 128, 150:

49 Նույն տեղում, էջ 94, 111, 118, 119, 121:

50 Նույն տեղում, էջ 126:

Այդ առթիւ ունենք Զաքարիա Սարկավազի հետևյալ ուշագրավ վկայութիւնը: Շահ-Աբասը շէր արգելում հավատափոխ քրիստոնյաներին նորից դառնալ իրենց կրոնին այն պատճառաբանութեամբ, որ նրանք «լինին մուրատ և տան հարկս ձեզ»<sup>51</sup>:

Պատմագիրները հատկապէս մտահոգվում են վանքի հասութիւնների ծախսման կարգի հարցերով: Նրանք մեծ ոգևորութեամբ են խոսում էջմիածնի որոշ կաթողիկոսների արտագրական, շինարարական գործունեութեան մասին: Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի մասին Զաքարիա Սարկավազը պատմում է, որ նա «ի ներքոյ երկրի նաղմ արարեալ՝ յի տեղուղ հանեալ ջուր, մինն հեռի ի գեղջեն էջմիածնայ՝ տարեալ յանդաստանս ի յոռոգանել զարտորացան. և մինն բերեալ ի գիւղն զի ի ձմեռանի արբցեն անասունք: Եւ ի վերայ այս ջրոյ շինեաց ջրաղացս և բրնձահանս. և արար ծով՝ և ելից ձկամբ: Տնկեաց և տունկս առ ափամբ ծովակին. և սերմանէին բազում սերմանս և այլ բարութիւնս բազումս»<sup>52</sup>:

Առաքել Դավրիժեցին վկայում է, որ Մովսես և Փիլիպոս կաթողիկոսները կառուցեցին և բարեկարգեցին բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ, բնակարաններ կրոնավորների համար և անապատ-ուսումնարաններ: Հովհաննավանքի շինարարութեան նկարագրութեան մեջ ընդգծված է աշխատանքի բաժանման կարևորութիւնը կառույցի արագ ավարտման համար. «Զաքարիա վարդապետն ժողովեաց բազում վարպետս՝ քարահատ և փայտատաշ, և դարբին, և զձեռն ի գործ էարկ սկսան նորոգել զվանքն. նախ զտներն ամենայն շինեալ աւարտեաց, և ապա զեկեղեցին. քանզի առատագոյն երկիր եղեր գանձս՝ որ տայր գործողաց, երեսուն քարտաշ հանապազ նստեալ քար տաշէին, և երկու ճարտար մէմար միշտ շարէին, և այլ վարպետք և գործաւորք յոյժ յոլովք. վասն որոց փութով ավարտեցավ»<sup>53</sup>:

Առաքել Դավրիժեցին ինչպիսի կրքոտ ոգևորութեամբ որ

51 Զաքարիայ Սարկավազ, *Եղված աշխատութիւն*, հ. I, էջ 22:

52 Նույն տեղում, հ. II, էջ 62:

53 Առաքել Դավրիժեցի, *Եղված աշխատութիւն*, էջ 268:

փառաբանում է կաթողիկոսների շինարարական, բարենորոգչական գործունեությունը, նույնպիսի ցասումով էլ դատապարտում է պորտաբույծ կրոնավորների շրջաններում տարածված ալլանդակ բարքերը: Դավիթ և Մելիքսեթ կաթողիկոսների մասին, որոնք միաժամանակ կրում էին կաթողիկոսական գավազանը էջմիածնում, Դավրիժեցին ասում է, որ նրանք վանքի պարտքերը «առաւել բազմացուցին, զի մինչև ցարդ մի էր Կաթողիկոսն, եւ մի էր մսխող, այլ այժմ եղեն երկու կաթողիկոսք և երկու մսխողք»<sup>54</sup>: էջմիածնի կաթողիկոսներից շատերը կաշառքով և խարդավանքով հասնելով կաթողիկոսությունից, իրենց ստորագրյալներին նույնպես նշանակում էին կաշառքով, որոնք աշխարհիկ իշխանավորների նման իրենց կյանքն անց էին կացնում գինարբուքներում: Պատմիչը այդ կարգի ալլանդակությունները դիտում է ոչ որպես մասնավոր դեպքեր: Նա հանդես է գալիս ավելի լայն ընդհանրացումներով: «Ամենայն վանորայք ազգիս Հայոց, — գրում է հեղինակը, — իւրաքանչիւր սևազուխ ունէր յուր զինչս առանձին, այգի և բուրաստան, փետակ և տուն և մարան, և համբարանոցս, և զմուտս ստացուածոց. նաև զմուտս հասարակաց վանից մասունս արարեալ՝ յինեանս բաժանեին: Եվ զայն ամենայն ինքեանց, և ազգայնոց — և իւրեանց հաճելեաց արանց ծախէին ի պէտսկարեաց... Սոյնպէս և գեղական երիցունք՝ անուամբ միայն քահանայք, այլ ոմանք առեալ իշխանութիւն մելիքութեան, և ոմանք տանուտէրութեան՝ և ոմանք պոռնիկք և երկկանայք, ոմանք յարեցեալք յիշխանս այլազգեաց, արբանեակ շարեաց գործոց նոցա՝ և մատնիչք քրիստոնէից, ոմանք ի մարմնավոր արուեստս և ի հողագործութիւնս պատաղեալ՝ իբրև զաշխարհականս. և բնավին թողեալ զժամն և զպատարաքս»<sup>55</sup>:

Նույն ժամանակների մասին Գրիգոր Գարանազցին գրում է, որ էջմիածնի բոլոր հարստությունները գրավ էին դրված «վասն անարժան պարտուցն, որ ո՞չ էր հարկապահանջութենէ թագավորաց կամ յիշխանաց, այլ ի հսկառա-

կութենէ միմեանս անկանելով, յափշտակելով ջանալ զկաթողիկոսութիւնն, կաշառ խոստանային անօրինաց ձեռագիր կընքեալ նամակով մինչ քառասուն և վեց հազար դուրուշն յավելով, ով որ զպպուլ արար, նա նստելով յաթոռ: Եւ առնէին բազում ապականութիւնս եւ նեխութիւնս եւ անկարգութիւնս իւրեանք (խոսքը Դավիթ և Մելիքսեթ կաթողիկոսների մասին է — Ն. Թ.) և իւրեանց շար առաքեալ նուիրակքն ընդ ամենայն աշխարհին հայոց»<sup>56</sup>: Գարանազցու աշխատությունը իր ժամանակի հողնորականության երեսին հասցրած մի շառաչուն ապտակ է առհասարակ: Հեղինակը շի բավարարվում Միսի և էջմիածնի հողնորականների ալլանդակ բարքերի ընդհանուր մերկացումներով: Նրա ծավալուն աշխատության մի քանի տասնյակ էջերում ըստ անունների ներկայացվում են բազմաթիվ վարդապետներ ու եպիսկոպոսներ իրենց այնպիսի ալլանդակություններով, որոնց մասին հեղինակը հաճախ անհարմար է զգում բացորոշ արտահայտվել<sup>57</sup>: Այս ընթացքում հեղինակն ընդարձակ չափերով անդրադառնում է Մելիլուի գործունեությանը, որի նկատմամբ նա առհասարակ բացասական վերաբերմունք ունի: Բայց գրքի էջերից զգացվում է, որ Մելիլուի գործունեությունը պայմանավորված է եղել այդ փուլ կրոնավորների ալլանդակ վարքագծով:

Թովմա Մեծոփեցին Կիրիկիայի Սիս քաղաքի կաթողիկոսության վերացման կապակցությամբ (1441 թ.) հանդես է գալիս դարեր շարունակ այդ աթոռն զբաղեցնող կաթողիկոսների ալլանդակ բարքերը մերկացնող էջերով: Պատմիչը գրում է, որ նրանք «անառակութեամբ և արբեցութեամբ և պիղծ վարուք շրջեին»<sup>58</sup> և այնուհետև նկարագրում է նրանց կաշառակերության ու խարդախությունների երկար շարանը<sup>59</sup>, լինելով էջմիածնի կաթողիկոսության ջերմ ջատագով, Թովման այնուամենայնիվ ստիպված է լինում խոստովանել, որ Կիրակոս կաթողիկոսին հանդիսավորությամբ ընտրող էջ-

54 Նույն տեղում, էջ 3:

55 Նույն տեղում, էջ 220—221:

56 Գրիգոր Գարանազցի, նշված աշխատություն, էջ 54:

57 Նույն տեղում, էջ 413—504:

58 Թովմա Մեծոփեցի, Հիշատակարան, Թիֆլիզ, 1892, էջ 56:

59 Նույն տեղում, էջ 55—58:

միաձնի կրոնավորները երկու տարի հետո մեծ կաշառքով օրինապահ և շնորհալի նորընծա կաթողիկոսին փոխում են իրենց դրածոյով<sup>60</sup>:

Այս և նման բազմաթիվ դեպքեր ստիպում են պատմիչին հանդես գալ առավել լայն ընդհանրացումով՝ իր ողբի հետևյալ տողերում. «Աւաղ անմտութեան ազգիս. աւաղ թշվառութեանս. աւաղ կորստեանս աշխարհի. աւաղ տխմարութեանս. աւաղ հիբութեանս. աւաղ շարութեանս. թէ որքա՛ն լուսաւորս խավարեցուցին ազգս հայոց. որչա՛փ աստուծաբան բերանս խցեցին. քա՛նի սիւնս եկեղեցւոյ տապալեցին. քա՛նի քահանայապետս ի հող մահու իջուցին»<sup>61</sup>:

Այս կարգի ապականութիւններն, անշուշտ, տարածված են եղել ոչ միայն էջմիածնի և Կիլիկիայի հոգևորականների շրջաններում: Գա եղել է հոգևոր դասի շահագործման տարածված մեթոդներից մեկն առհասարակ: Գրիգոր Գարանաղցին շի խնայում Կ. Պոլսի մեծանուն պատրիարք Գրիգոր Կեսարացուն և բազմաթիվ առիթներով մերկացնում է նրա մեքենայութիւնները: Չամշյանի մոտ կարդում ենք, որ Աղբիանապոլսի դիվանագիր Իբրահիմ փաշան Մարտիրոս պատրիարքից 200000 դրամ է պահանջում ասելով, թե կան «այլք՝ որ պատրաստ են այնչափ տալ և նստիլ պատրիարք»<sup>62</sup>: Սիմեոն Լեհացին ցույց է տալիս, որ լվովի եպիսկոպոս Նիկոլը եղել է մի կատարյալ ավազակ: Լվովի հայկական եկեղեցիների հարստութեան մասին Լեհացին գրում է, որ նրանք «յոյժ փարթամ, մեծագին եւ զանազան զգեստիւք, սկօք, խաչիւք, բուրվառօք, խաչալամօք եւ այլ անթիվ ոսկի եւ արծաթէ անօթօք»<sup>63</sup>: Իսկ երբ «ոմն մեծազգի եւ փարթամաց զարմի Նիկօլ անուն թորոսենց... տգէտ մտօք, խաւարեալ խորհրդով եւ անիմաստ հանճարով, անուղղաց վարիւք, վատ եւ անպիտան ամենայն իրք եւ ի գործըս, լիրք, յանզգամ եւ յանդուզն

60 Նույն տեղում, էջ 80:

61 Նույն տեղում, էջ 56:

62 Չամշեան Միքայէլ, *Եշված աշխատութիւն*, հ. գ, էջ 668:

63 Սիմէոն Լեհացի, *Ուղեգրութիւն, Տարեգրութիւն և Յիշատակարանք*, Վիեննա, 1936, էջ 339:

ի կարգս աստիճանի դպիր գոլով»<sup>64</sup> կաշառքի միջոցով Մելիքսեթ կաթողիկոսից եպիսկոպոսութեան աստիճան է ստանում, սկսում է «վատնել եւ կորուսանել զինչս եւ զխազինայս՝ զոսկեղեն եւ արծաթեղեն անօթս, զմեծամեծ խաչսն, պատվական և ոսկեզօծ սկիս, ծանրաշեն բուրվառսն, մեծագին քղոցոն եւ արծաթին խնկատուփսն... մեծագին թագս հայրապետաց՝ ոսկով եւ մարգարտով եւ ակամբք ընդելուզեալ, եւ վարշամակս յոլով զուտր մեծամեծ մարգարտովք շարեալ» բազմաթիվ ոսկեկազմ գրքերն հետ «ի միում ամի կորոյս եւ ոչնչացոյց»<sup>65</sup>:

Նյութական բարիքների առատութիւնը պայմանավորված է նաև երկրում սահմանված կարգ ու կանոնով: Այս իրողութիւնը հաճախ է ընդգծվում Զաքարիա Սարկավազի աշխատութեան մեջ: Շահ Տախմասպի գործունեութեան փառաբանութեանը նվիրված էջերում Զաքարիան գրում է, որ նա հարկերը 15 տարով կիսով իջեցրեց, վերացրեց ճանապարհային անցումների համար սահմանված մաքսերը, կառուցեց իջևանատներ, ճանապարհներին ջրհորներ փորեց: Նա հատուկ հոգատարութիւն նվիրեց քաղաքների բարեկարգմանը, կարգավորեց շափ ու կշիռների գործը. նրա օրոք աշխուժացան արհեստագործութիւնն ու առևտուրը: Իսկ Խոսրով խանի ժամանակ նույն կարգի բարեկարգումների հետևանքով Երևանի խանութիւնում «էր առատութիւն և լիութիւն ամենայն իրաց, և թեթևագին ինչք ընչից»<sup>66</sup>: Խոսրով խանից հետո Մահմեդ խանը վերացրեց ամեն տեսակի բարեկարգումները և ավերեց երկիրը, զանգատվում է պատմիչը: Նա այս թեմային տարբեր առիթներով հաճախ է անդրադառնում: Զալի խանի մասին ասում է, որ նրա կառավարման ամբողջ ժամանակաշրջանում «հաստատեցան կարգն Երևանայ ամենայն պիտոյիւք մարմնաւորօք»<sup>67</sup>:

64 Նույն տեղում, «Յիշատակարան Վարդանաց մեկնութեան արարածոց», էջ 410:

65 Սիմէոն Լեհացի, *Եշված աշխատութիւն*, էջ 412:

66 Զաքարիայ Սարկավազ, *Եշված աշխատութիւն*, հ. երկրորդ, էջ 39:

67 Նույն տեղում, էջ 105:

Երկրի բարեկարգման ծրագրի անհրաժեշտ օղակներից մեկը Զաքարիան համարում է անկաշկանդ առևտուրը: Նրա մոտ նյութական բարիքների առատությունն ու օրինավոր առևտուրը փոխադարձաբար պայմանավորված են: Արաբատյան երկրի հարստությունների փառաբանությունը նվիրված էջերում պատմիչը չի մոռանում ավելացնել, որ երկրի նյութական բարիքները թանկ չէին. «Վասն որոյ յամենայն կողմանց զան յԵրևան, և զննն զոր ինչ և կամին, և զառնան ի տեղիս իրեանց: Նոյնպէս եկին ի Քավրիզոյ բազում կարաւան, և զնեցին բրինձ, բամբակ, իւղ, պանիր, ճրագու, ձեթ, կաշի, մորթ և այլ ինչ զոր կամեցան՝ առին»<sup>68</sup>:

Առևտրի հարցերի հետ է առնչվում նաև Շահ-Աբասի կողմից կաշվե զրամների կիրառման մասին զրույցը, որը Զաքարիա Սարկավազը օգտագործել է իր աշխատության մեջ: Բաղդազը դժվարությամբ նվաճելուց հետո Շահ-Աբասը ստիպված է լինում երկար ժամանակ մնալ այստեղ: Զինվորներին վարձատրելու համար փողը չի բավում, նրանք ղրկվում են առևտուր անելու և իրենց պետքերը հոգալու հնարավորությունից: Շահ-Աբասը գտնում է այդ դժվարությունից դուրս գալու ելքը: Նա կաշվե զրամներ է հատում, որոնք Պարսկաստան վերադառնալուց հետո հավաքվում և փոխվում են իսկական զրամներով<sup>69</sup>:

Այս զրույցը տնտեսագիտական մտքի պատմության համար ուշագրավ է մի քանի առումով: Նախ, զրույցի հիմքում ընկած է թղթագրամի գաղափարը, այնուհետև, ընդգծված է դրամի շրջանառության ֆունկցիայի կարևորությունը: Իսկ կաշվե զրամները իսկական զրամներով փոխվելու ակտում արտահայտված է այդ գաղափարը, որ արհեստական զրամներն իրենց սեփական արժեքը չունեն, դրանք իսկական դրամի պայմանական ներկայացուցիչներն են, այսինքն՝ արժենիշեր են միայն:

XVII դարում առևտրի դերն ու կարևորությունը ժողո-

68 Նույն տեղում, էջ 54:

69 Նույն տեղում, հ. առաջին, էջ 36—37: Տե՛ս նաև Խաչատուր Զուրաբյանի, նշված աշխատություն, էջ 133—134:

վուրդների տնտեսական կյանքում այնքան մեծ էր, որ մերկանտիլիստներն այն առհասարակ հարստության ստեղծման աղբյուր համարեցին: Հայ պատմիչներն ավելի լուրջ հիմքեր ունեին բաժանելու այդ տեսակետը, քանի որ Արևելքի առևտրական ճանապարհներին աշխուժորեն երթևեկում էին մեծ թվով հայ առևտրականներ, որոնք հսկայական հարստությունների տեր էին: Նույնիսկ պարսից շահերն էին նախանձում Զուղայի խոջանների հարստություններին, որի ընդարձակ նկարագրությունն ունենք Գավրիթեցու մոտ: Զուղայում Շահ-Աբասի ընդունելության ժամանակ «զճանապարհս անցից արքայի զարդարեցին. և եզերէ գետոյն մինչև ցապարանս խօջայ խաչիկին արկին փայնողազ առաթուր թագաւորին՝ պատուական և վայելուչ կոմաշս, որոնց վերայ էանց թագաւոր՝ և զնաց ի տուն խօջայ խաչիկին: Եւ ի տան անդր, խօջայ խաչիկն ոսկի սկուտեղ լցեալ ոսկով եղեալ ի ձեռն որդոյ իւրոյ մատոյց առաջի թագաւորին, նոյնպէս և ամենայն մեծամեծքն Զուղայոց մատուցին ընծայ, որպէս վայել է թագաւորին: Եւ զաւուրս երեք եկաց անդ շահն, և Զուղայիցիք պատուեցին զնա համադամ կերակրօք և ծաղկեհամ գինեակ»<sup>70</sup>: Առևտուրն այն աստիճան էր մերվել խոշոր ֆեոդալական տնտեսություններին, որ բնատնտեսության գաղափարախոսները այն համարում էին տնտեսության բարգավաճման անհրաժեշտ պայման: Այդ տեսակետից ուշագրավ է Զաքարիա Սարկավազի աշխատության մի գլուխը՝ նվիրված պարոն Այվազի խոշոր տնտեսության, նրա գերդաստանի գործունեության նկարագրությանը: Գերդաստանի երեք սերունդների զբաղմունքների մեջ կարևոր տեղ էր գրավում առևտուրը, որը նրանց հարստության զլխավոր աղբյուրն էր: Զաքարիան պատմում է, որ Այվազը «յեղբայրց իւրոյ մի մի առաքէր ի վաճառականութիւն, ոմն՝ յաշխարհ Պարսից, ոմն՝ Յունաց՝ ի զնել և առևտրական գործերով վաճառել»<sup>71</sup>: Բաղմանդամ գերդաստանի շատ ներկայացուցիչներ մահացել են Բուրս, Գանձակ, Իզմիր, Արդեբիլ և այլ քաղաքներում:

70 Առաջել Գավրիթեցի, նշված աշխատություն, էջ 16:

71 Զաքարիա Սարկավազ, նշված աշխատություն, հ. երկրորդ, էջ 132:

Առաքել Դավրիժեցու գրքում մեկ զլուխ<sup>72</sup> հատկացված է թանկագին քարերի մանրազնին նկարագրությունը, որն, անշուշտ, վկայում է դրանց առևտրի զարգացման բարձր աստիճանի մասին: Այն հանգամանքը, որ հեղինակը հատկապես զբաղվել է դրանց նկարագրությամբ, ցույց է տալիս, որ հայ ժողովրդի կյանքում թանկագին քարերի առևտուրը կարևոր դեր է ունեցել: Հայ առևտրականները լավ են ճանաչել այդ թանկագին քարերն ու դրանց հատկությունները՝ հաջող առևտուր անելու համար: Դավրիժեցու գրքի այդ զլուխները, կարելի է ասել, որ կատարում են յուրատեսակ առևտրական ձեռնարկի դեր: Հեղինակը մեծ համակրանքով է խոսում հայ խոշոր առևտրականների մասին, որոնք իրենց կարողություններ և առևտրական գործունեություններ հայտնի էին և մոտ էին կանգնած պարսկական ու օսմանյան արքունիքներին:

#### ԵՐՐՈՐԴ ԳՆՈՒՆ

### ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ասիական բռնակալների համար ընդհանրապես բնորոշ է եղել ավերման քաղաքականությունը, որով նրանք, ինչպես Առաքել Դավրիժեցին է ասում, դարձրին «աւերակ և անմարդարնակ զվայելու աշխարհն Հայոց»<sup>1</sup>:

Բռնակալների սրից ճողոպրած բազմահազար հայ ընտանիքներ դիմեցին պանդխտության, որի հետևանքով Ռուսաստանում, Ղրիմում, Լեհաստանում, Հնդկաստանում և այլուր ստեղծվեցին բազմաթիվ հայ գաղթօջախներ:

Հայ գաղթականները տնտեսական աշխատանքներ, կուլտուր-լուսավորչական գործունեություն ծավալեցին:

Աստրախանը, Կամենեց-Պոդոլսկը, Լվովը, որոնք գրտ-

72 Առաքել Դավրիժեցի, նշված աշխատություն, էջ 460—467:

1 Առաքել Դավրիժեցի, նշված աշխատություն, էջ 38:

նքվում էին առևտրական ճանապարհների հանգուցակետերում, դառնում են գաղթահայության կենտրոններ: Տեղական կառավարությունները հայերի համար ստեղծում են տնտեսական ու կուլտուր-լուսավորական գործունեության նպաստավոր պայմաններ, որոնց շնորհիվ հայկական գաղութները բարգավաճում են: Հայկական համայնքները մի շարք արտոնությունների թվում կառավարությունից ստանում են նաև ազգային դատարան ունենալու և համայնքի գործերը վարելու իրավունք: Այս պայմաններում ստեղծվում է ուշագրավ իրավաբանական գրականություն, որից մեզ են հասել «Աստրախանի հայոց դատաստանագիրքը» և «Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները»:

Դատաստանագիրքը կազմել են գաղութի ականավոր մտավորականներ Եղիազար Գրիգորյանը, Գրիգոր դի Սաֆար Կամպանյանը և Օհանի որդի Սարգիսը, որոնք եղել են ժամանակի հայ և եվրոպական մտավոր մշակույթին քաջատեղյակ անձնավորություններ: Նրանք ճիշտ էին հասկանում, որ իրավական օրենքները տվյալ հասարակության սոցիալական հարաբերությունների արտահայտություն են և փոփոխվում են այդ հարաբերությունների էվոլյուցիային համապատասխան: «Քաղաքական օրենքն ոչ են ըստ կերպի աստուածային օրինաց անփոփոխը— գրում են հեղինակները,— որք յամենայն ժամ հաստատուն պահեսցի, այլ ժամանակին, ըստ կացութեան, ըստ բարուց և ըստ ուղիղ դատողութեան յամենայն ժամ քաղաքական օրենքն առ ի բարին և առ ի լաւագոյն կողմն փոխել արժան է»<sup>2</sup>: Այո, ի տարբերություն կրոնական դոգմաների, քաղաքական օրենքները կապված են իրական կյանքի հետ, արտացոլում են հասարակական հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը: Այս մեթոդոլոգիական ճիշտ ելակետը Դատաստանագիրքը դարձնում է ժամանակաշրջանի հասարակական հարաբերությունների և իրենց՝ հեղինակների սոցիալ-տնտեսագիտական գաղափարների ուսումնասիրության արժեքավոր աղբյուր:

2 Դատաստանագիրք Աստրախանի հայոց, աշխատասիրությամբ Ֆ. Գ. Պոդոյանի, Երևան, 1967, էջ 232:



Հեղինակները հանգամանորեն ուսումնասիրել են Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերը, հայ եկեղեցական կանոնագրքերը, ինչպես նաև եվրոպական, հատկապես բյուզանդական իրավագիտական գրականությունը:

Այդ աղբյուրները նրանց համար ընդհանուր տեսական—մեթոդական ուղեցույց են ծառայել: Աստրախանի հայոց Դատաստանագիրքը միանգամայն ինքնատիպ մի աշխատություն է, որը ստեղծվել է զաղութի հասարակական հարաբերությունների բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա: Այդ տեսակետից Դատաստանագիրքը բացառիկ հարուստ բովանդակություն ունի: Նրա հեղինակները թափանցել են գաղութի տնտեսական, քաղաքական, իրավական, ընտանեկան կյանքի բոլոր բնագավառները, և այդ հասարակական հարաբերությունները՝ իրենց բոլոր մանրամասներով հանդերձ կաղապարել համապատասխան իրավական նորմերի շրջանակներում:

Ամեն մի օրենսգրքի հիմնական խնդիրն է մշակել տվյալ հասարակարգի կարգը պաշտպանող ու ամրապնդող իրավական նորմեր: Հասարակության տնտեսական հիմքն են կազմում սեփականատիրական հարաբերությունները: Արտադրության, բաշխման, փոխանակության ու սպառման հարաբերությունները կարգավորվում են սեփականատիրության ձևերին համապատասխան:

Պետական կարգի, մասնավոր սեփականության պաշտպանությունը իրավական գրականության հիմնական խնդիրն է հանդիսանում: Նշենք, որ հայկական իրավաբանները միաժամանակ կառավարական վերադաս մարմինների առաջ պետության հանդեպ հայկական զաղութի ամեն կարգի պարտավորությունների համար պատասխանատու կազմակերպություններ էին: Կամենեցի դատարանի արձանագրությունները հարուստ նյութ են տալիս սեփականատիրական հարաբերությունների բովանդակությունը բնութագրելու համար: Քրեական գործերի մեծ մասը ուղղված է սեփականության նկատ-

մամբ ոտնձգությունների կատարողների դեմ, որոնք պատրվում են օրենքի ամբողջ խստությամբ<sup>3</sup>:

Աստրախանի հայոց Դատաստանագրքի առաջին երկու գլուխներում շարադրվում են եկեղեցու և ցարական իշխանության պաշտպանությանը նվիրված հոգվածները: Հանցանքներից ծանրագույնն է համարվում թագավորական կարգերի դեմ ապստամբների մեղքը, որոնց համար սահմանվում է անվերապահորեն «պատիժ մահու»<sup>4</sup>:

Պետական իշխանության տնտեսական հիմքը նյութական հարստությունն է, ուստի և թագավորական զանձարանի հարստությունը պաշտպանելու ու ավելացնելու հարցերը գտնվում են Դատաստանագրքի ուշադրության կենտրոնում: Պետական զանձարանից դրամ գողացողներից ետ է վերցրվում հափշտակվածը և «վասն հանցանացն հատցին գլուխ նոցին»<sup>5</sup>:

Արքունիքի եկամտի կարևոր աղբյուր են հարկերն ու տուգանքները: Առևտրի, դրամաշրջանառության կանոնների խախտումները, զոդության, սպանության, կողոպուտի, զևածարարության ու տարբեր տեսակի այլևայլ հանցագործությունները տուգանվում են և բազմաթիվ ղեպքերում «ամենայն ստացուածք և ինչը նոցին հասցի յարքունիս»<sup>6</sup>:

Այսպիսի խստությամբ է պաշտպանվում ոչ միայն արքունի ունեցվածքը, այլև մասնավոր սեփականատիրությունն ընդհանրապես: Գողության ղեպքերի և ունեցվածքի հափշտակության տեսակների քննարկմանն ու պատժի ձևերին է նվիրված դատաստանագրքի 71 հոդվածից բաղկացած մի ընդարձակ գլուխ: Գողությունն ու հափշտակությունը իրավամբ դիտվում են որպես մարդկանց տնտեսական նորմալ

<sup>3</sup> Տե՛ս Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրություններ, աշխատասիրություններ Վ. Ռ. Գրիգորյանի, Նրևան, 1963: Նշենք, որ հրատարակված աշխատությունն ընդգրկում է 1559—1575 թթ. արձանագրությունները միայն, իսկ մնացածը կարող է բազմակողմանի ուսումնասիրության:

<sup>4</sup> Դատաստանագիրք Աստրախանի հայոց, էջ 15:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 108:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 18:

գործունեության խափանման ակտ: Այն ոչ միայն ունեցվածքի կորուստ է, այլև շահավետ գործունեության ընդհատում: Հետևաբար, պետք է վերադարձվի ոչ միայն հափշտակված ունեցվածքը, այլև փոխհատուցվի դրա շահավետ օգտագործման ընդհատումից առաջացած վնասը: Այդ է պատճառը, որ պատժելու հետ միաժամանակ հանցագործներից զանձվում էր նաև հափշտակվածի արժեքը կրկնակի, եռակի և քառակի շափով: Այս միտքը արտահայտված է հետևյալ տողերում. «Եթե ոք գողանայցե ումեք շնչաւոր կենդանի, յորժամ քըննեալ ստուգեսցի՝ ոչ միայն գողացեալն շորեքկին վճարեսցէ և վասն յանցանացն պատիժ կրեսցէ, այլև որքան արդիւնք ի կենդանեաց յառաջացեալ իցէ կամ յառաջագայիլ կարէր՝ նույնիսկ ամբողջաբար վճարեսցէ: Նոյնպես ասել է վասն ցորենոյ, գարւոյ և այլ սոցին նմանեաց»<sup>7</sup>: Այս կնշանակի, որ արտադրության միջոցների հափշտակումը կազմալուծում է արտադրության պրոցեսը, որով և միաժամանակ խափանում արժեքների սպասվելիք մեծացումը: Այս տեսակետից հատկապես ուշադրավ է Դատաստանագրքի այն դրույթը, որ սովորական ասեղի և հերյունի գողությունը որակվում է որպես «թեթև բան, սակայն եթե ոք գողանայ ասեղ դերձկի, հերուն կոշկակարի... զի նովաւ մնաց արգելեալ կամ վնաս մեծ հանդիպեցեաւ ըստ մեղաց իւրոց պատժելի է և վնասն հատուցանելի է կրկին»<sup>8</sup>:

Երկու դեպքում էլ խոսքը նույն իրերի մասին է, բայց երկրորդ դեպքում դրանք հանդիսանում են արտադրության միջոցներ: Սրանց հափշտակությունը դիտվում է որպես արտադրական գործունեության խափանում, իսկ դա առավել ծանր հանցանք է:

Ունեցվածքի ժառանգության պրոբլեմը սեփականատիրական հարաբերությունների առանցքային հարցերից մեկն է, որը հանգամանորեն պարզաբանվում է Դատաստանագրքի երկու ընդարձակ գլուխներում: Այդ հարցերին են նվիրված նաև Կամենեցի դատարանի շուրջ երկու տասնյակ արձանա-

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 90:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 331:

գրություններ: Օրենքի հիմնական խնդիրն է սեփականատիրոջ մահից հետո նրա ունեցվածքի պահպանումը և արդյունավետ տնօրինության ապահովումը: Այդ իսկ պատճառով Դատաստանագրքը անօրինական է համարում այն կտակագրերը, որոնցով ունեցվածքը պետք է ժառանգեն հաշմանդամները, փուշ և վատնող ստահակները, անչափահասները, ծառաները, դատապարտվածները, քրեական հանցագործները, որոնք թեկուզև հանգուցյալի օրինական ժառանգները լինեն: Սեփականատիրական իրավունքը կոշված է պահպանելու և ապահովելու հարստության մեծացումը: Իսկ հարստություն վատնողներին ու շռայլողներին, ինչպես նաև այն շահավետ օգտագործելու անկարող ժառանգներին պետք է զրկել սեփականատիրական իրավունքից: Մասնավոր սեփականությունը լինելով արտադրության տվյալ եղանակի պատվանդանը, պետք է նպաստի նրա զարգացմանը՝ իրավական մարմինների աշխուրջ հսկողության ու պաշտպանության հովանու ներքո:

Տեղալական արտադրության եղանակի բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ արտադրության գործիքները խիստ պարզունակ են, և հողը որպես հիմնական արտադրության միջոց, վճռական նշանակություն ունի:

Աստրախանի հայ բնակիչները հիմնականում առևտրականներ էին ու արհեստավորներ, ուստի և հողային հարաբերությունները Դատաստանագրքում ծավալուն տեղ չեն գրավում: Բայց եղած փոքրաթիվ հողավածներում հողային սեփականությունը պաշտպանվում է ֆեոդալական կարգերին բնորոշ օրենքի ամբողջ խստությամբ: Ահա այդ օրենքը. «Եթե ոք բռնութեամբ տիրեսցէ զօտար անդաստան առանց օրինաւոր պատճառաց, յորժամ հայտնեսցի և քննեալ ստուգեսցի՝ անդաստան կամ գետինն հասցէ ի սեփական տեառն իւր, և որ բռնութեամբ տիրեալ էր գետինն կամ անդաստանն՝ ոչ միայն որքան վնաս հասուցեալ իցէ գետնոյ տեառն կամ անդաստանի շորեքկին վճարեսցէ, այլև վասն հանդգնութեանն հատցի գլուխ նորա, առանց յղորմութեան»<sup>9</sup>: Հողի

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 229—230:

մասնավոր սեփականությունը ֆեոդալական հասարակության սրբությունն սրբոցն է, և Դատաստանագիրքը նրա նկատմամբ ոտնձգություններ չի հանդուրժում: Ուրիշի հողերին բռնություն մերանալը դիտվում է որպես տիրող կարգերի դեմ ոտնձգությանը հավասար հանցանք: Այդ կարգի հանցագործներին ապստամբողների նման պետք է գլխատել առանց խնայելու:

Տեղական իշխանությունները հողերի սեփականատիրական իրավունքի պաշտպանության հետ միաժամանակ մտահոգված են նաև դրանց ռացիոնալ մշակման գործով: Հողատերը միայն տարվա ընթացքում կարող էր պահպանել հողատիրոջ իր իրավունքը այն դեպքերում, երբ հողը մշակվել էր ուրիշի կողմից: Երեք տարին լրանալուց հետո հողը մշակողի սեփականությունն է դառնում<sup>10</sup>: Այդ հոգվածում ընդգծված է ռացիոնալ գյուղատնտեսություն վարելու կարևորությունը: Հողերը անմշակ թողնելու դեպքում, դրանց տերերին պետք է զրկել սեփականատիրության իրավունքից, որովհետև հողային սեփականությունը ինքնանպատակ չէ, այլ խելացի տնտեսավարության պայման: Գյուղատնտեսությունը ֆեոդալական արտադրության գլխավոր ճյուղն է, և Դատաստանագիրքը խստորեն պատժում է այն կազմալուծողներին՝ անկախ նրանց դատակարգային պատկանելությունից:

Դատաստանագրքում զգալի տեղ են գրավում արհեստագործության վերաբերյալ հողվածները, որոնք հիմնականում քննարկում են արհեստավորների պարտականությունների կատարման խնդիրները՝ կապված բարձրորակ արտադրանքի թողարկման հետ:

Դատաստանագրքի տեքստից նախ պարզվում է, որ արհեստավորները գործել են համքարական կազմակերպություններում, որոնց «ուստաբարերին» (համքարության գլխավորին) հաստատում էր հայկական իրավարանը: Ուշագրավ է այն, որ «ուստաբարը» իրավարանի, այսինքն համայնքի հասարակայնության առաջ պատասխանատու էր թողարկվող արտադրանքի որակի համար, իսկ բարձրորակ ար-

տադրանքի հիմնական պայմանը արհեստավորի վարպետությունն էր: Ինչպես բոլոր միջնադարյան համքարություններում, այնպես էլ Աստրախանի հայկական էսնաֆություններում, վարպետի կոչում ստանալու համար պետք էր տարիններով աշխատել, սովորել և հրապարակորեն քննություն հանձնել հանձնաժողովին: «Եթե աշակերտ ոք արժանի է վարպետության կամ խալիֆայության, հարկ է նույն արհեստին վարպետ ժողովել և քննել. եթե արժանի է՝ տալ զիր վկայական, եթե արժանի չէ՝ ծառայեսցէ նույն արհեստին»<sup>11</sup>: Հետևաբար որակավորված արհեստավորների պատրաստումը նույնպես համարվում էր «ուստաբարի» գլխավոր պարտականություններից մեկը:

Հայկական էսնաֆություններում ընդգրկվում էին միայն ռուսահայտակ հայերը: Նրանց հիմնական մրցակիցները օտար արհեստավորներն էին, որոնց դեմ պայքարը կազմում էր հայկական իրավարանի և «ուստաբարի» կարևոր խնդիրներից մեկը: Այդ տեսակետից ուշագրավ է «չաքմաչինքոց և բասմաչինքոց» էսնաֆությունների ղեկավարության խնդրագիրը հայկական իրավարանին, որտեղ ասված է. «Բազումք կան, որ պողան (ռուսահայտակ—Ն. Թ.) չեն զրված ուրէնց գլխու համարցակ մեր արհեստն բանացնում էն ամենայն մասալէքն թանգացնում և մեզ շատ զարար էն տալիս, խընդրում ենք, որ մեր հոքան հոգաք, որ մենք էլ կարող լինէմք մեր խիզանն պահել և... իրաւարանին ամենայն հարկապահանջութիւնն ըստ մեր կարողութեանն հատուցանել»<sup>12</sup>: Բերված տողերից պարզվում է նաև, որ համքարության մեջ եղած արհեստավորները չէին կարող ապրանքների սահմանված գները խախտել, մի հանգամանք, որից օգտվում էին համքարություններից դուրս գտնվող նրանց մրցակիցները: Ապրանքների գների վերաբերյալ բողոքների դեպքում «պիտոյ է առաջի աստուծոյ ճշմարտութեամբ զին դնել և վճռել ուստապաչիք»<sup>13</sup>: Դատաստանագրքի այս պահանջի մեջ ար-

11 Նույն տեղում, էջ 329:

12 Նույն տեղում, էջ ԻԱ:

13 Նույն տեղում, էջ 329:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 229:

տահայտված է միջնադարյան տնտեսագիտական գրականության մեջ հայտնի «արդարացի գնի» գաղափարը: Իսկ այն հարցը, թե ինչով է պայմանավորված այդ «արդարացի գինը» և ինչպես է այն սահմանվում՝ Դատաստանագրքում չի պարզաբանված:

Հայկական իրավարանը «ուստաքարի» հետ միասին հսկողություն էր սահմանում նաև արտադրության ընթացքի նկատմամբ: Կառավարության կողմից սահմանվում էին ապրանքների արտադրության և վաճառքի համար համապատասխան շահամիավորներ, ստանդարտային ցուցանիշներ: Եվ Դատաստանագիրքը պարտավորեցնում է արհեստավորներին «գործածել զարհեստն իւրեանց համեմատ կառաւորութեան կշռոյն կամ շահին, կամ պրօպին կամ գործին, որպես պատկանի առ արհեստն»<sup>14</sup>:

Ապրանքների արտադրության կանոնների խախտման, շահամիավորների կեղծման, ինչպես նաև պատվիրատուների պահանջների անբավարար կատարման դեպքում, արհեստավորները պատճառած վնասները հատուցելով հանդերձ, կարող էին նաև զրկվել կոշումից ու աշխատանքից<sup>15</sup>:

Արհեստավորները մտնում էին Աստրախանի հայկական գաղութի բնակչության ստորին խավերի խմբի կազմում: Նրանց մեծ մասը իր սոցիալական դրությունը հավասարվում էր վարձու մշակներին: Դատաստանագրքի հոդվածներից մեկում ասված է, որ ծառա, աղախին, գրաստ. կամ արհեստավոր վարձելիս պետք է կազմել համապատասխան «դաշնագրութիւն գրով, որպեսզի մի վասն ոչ լինելոյ կատարեալ դաշինս ի մէջ նոցա ակասանիցին առնել տարաձայն վիճաբանութիւն՝ յաճախելով ի դուռն դատաստանի և պարապելով գործոց իւրեանց և կրել զվնաս»<sup>16</sup>: Ինչպես տեսնում ենք, վարձու արհեստավորները դասված են ծառաների, աղախիների և նույնիսկ գրաստների շարքում: Արհեստավորների մի շնչին մասն էր միայն բարձրանում մինչև քաղաքի ունևոր

բնակչության մակարդակը, իսկ առանձին հարուստ արհեստավորներ վարում էին դատավորի և այլ պատասխանատու պաշտոններ:

Կամենեց-Պոդոլսկի հայկական գաղութում արհեստագործությունն ըստ երևույթին առանձնապես տարածված զբաղմունք չի եղել: Վեց դատական գործերից երկուսում քննարկվում են արհեստավորների պարտքերի մարման հարցեր, մի հանգամանք, որը վկայում է նրանց նյութական անապահովվածության մասին: Դերձակ Մաթսի պարտքն այնքան մեծ է եղել, որ նա ստիպված պարտքի դիմաց գրավ է դրել իր տունը<sup>17</sup>: Համբարությունների վերաբերյալ միակ արձանագրությունից իմանում ենք, որ հայ առևտրականները երբեմն իրենց ապօրինի առևտրով վնասում են ուկրաինացի համբարների գործին<sup>18</sup>: Հայ արհեստավորներին վերաբերող երեք արձանագրություն նվիրված է համբարություններից դուրս մասնավոր անձանց, որոնք հավանաբար արհեստավորության ճնշող մեծամասնությունն են կազմել: Բայց Կամենեց քաղաքի արհեստագործությունների պատմությանը նվիրված գրականության մեջ հիշատակություններ կան նաև հայ արհեստավորական կազմակերպությունների մասին<sup>19</sup>:

Դատաստանագրքի գերակշռող մասը հատկացված է առևտրական հարաբերությունների կարգավորման հարցերին, այն պարզ պատճառով, որ համայնքի բնակչության զգալի մասը եղել է առևտրական: Ըստ որում, առևտրի հարցերին նվիրված հոդվածները Դատաստանագրքի մյուս բաժինների հոդվածների նման հակիրճ իրավաբանական ձևակերպումներ չեն: Այստեղ ունենք առևտրական հարաբերությունների ընդարձակ վերլուծություններ՝ համեմված ուշագրավ գիտական քացատրություններով, որոնց շնորհիվ այդ բաժինը մասնագիտական ձեռնարկի կերպարանք է ստանում:

Գլուխն սկսվում է առևտրի հետևյալ բնութագրությամբ.

17 Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, էջ 277:

18 Նույն տեղում, էջ 258:

19 Նույն տեղում, էջ 81:

14 Նույն տեղում:

15 Նույն տեղում, էջ 223, 224, 330:

16 Նույն տեղում, էջ 211—222:

«Վաճառականութիւն անուանի ամենայն իրաց գնումն և վաճառումն թէ գրամով, թէ բանիւ, թե ժամանակագրութեամբ, թէ փոփոխմամբ և թէ այլով կերպիւ որպես և իցէ»<sup>20</sup>:

Առևտրի բնութագրումին հաջորդում է առևտրական գործարքների դասակարգումը՝ յոթ խմբերով:

1. Առևտուր բանավոր միայն (խոսքով), երբ կողմերը պայմանավորվում են ապրանքների գնման և վաճառքի մասին, բայց գործարքը կատարվում է մի քանի օրից հետո՝ նախնական պայմանավորվածության համաձայն:

2. Երբ գնումն ու վաճառքը կատարվում են անմիջականորեն՝ կանխիկ գրամով:

3. Վաճառք ապառիկով, կամ ինչպես Դատաստանագրքում է ասված, «ժամանակով», երբ վաճառված ապրանքների արժեքը վճարվում է հետագայում՝ պայմանավորված ժամկետին:

4. Գնում կամ վաճառք կանխավճարով, կամ ինչպես ասված է տեքստում, «ոիմոնաւ յորժամ ոք գնե կամ վաճառումեք զիր ինչ, գնողն տայ վաճառողին զոիմոն վասն հաստատութեան գնեցելոյն այն»<sup>21</sup>:

5. Փոխանակություն բնաձևով, որը կարող է լինել կամ անմիջական ապրանքափոխանակություն, կամ կողմերից մեկի վաճառք՝ հետագայում ապրանքի ստացման պայմանով:

6. Հանձնարարագրով, երբ գրավոր հայտնվում է համապատասխան մարդկանց պահանջվող ապրանքների գնման մասին:

7. Առևտուր պայմանականորեն՝ իր յոթ տարատեսակներով: Այս դեպքում վաճառքը կատարվում է պայմանով, առանց արժեքի վճարման: Վճարումը կատարվում է տարբեր պայմաններով՝

ա) ապրանքի որակը ստուգելուց հետո,

բ) գինը պարզելուց հետո,

գ) որոշակի մասնագետների կողմից գնահատվելուց հետո,

դ) վաճառողի կողմից գնման գումարը պարզելուց հետո,

ե) վաճառվող իրի պիտանիությունը փորձարկելուց հետո,

զ) երբ մասնագետի օգնությամբ է ստուգվում ապրանքի պիտանիությունը:

Առևտրի դասակարգումից սակայն դուրս է մնացել նմուշներով վաճառքը, որի մասին խոսվում է նույն գլխի 13-րդ հոդվածում: Առևտրի այս ձևը, ինչպես հայտնի է, ժամանակակից առևտրական բորսաներում մեծաքանակ առևտրի ամենատարածված եղանակն է եղել, երբ գործարքները կատարվել են ցուցադրված նմուշների հիման վրա, և զնված ու վաճառված ապրանքները համապատասխան պահեստներ են փոխադրվել առանց շուկա մտնելու: Դատաստանագրքից չի պարզվում, թե Աստրախանի հայկական համայնքում ինչ չափեր է ընդունել առևտրի այդ ձևը, բայց դրա գոյության փաստը ինքնին մի ուշագրավ երևույթ է, որը այդ ժամանակների մեծաքանակ առևտրի մասին եղած հիշատակություններից մեկն է:

Առևտրի ձևերի դասակարգումից դուրս է մնացել նաև աճուրդով վաճառքը, որի մասին խոսվում է դատական մարմինների պարտականությունների կատարման կապակցությամբ: Վաճառքի այդ ձևի հանգամանորեն նկարագրությունը ցույց է տալիս, որ շուրջ երկու հարյուր տարվա ընթացքում աճուրդի մեր օրերում գործող եղանակը գրեթե ոչ մի փոփոխություն չի կրել: Աճուրդով վաճառվող ապրանքները նախապես գնահատվում են համապատասխան մասնագիտական հանձնաժողովի կողմից «և հռչակեսցի ի նշանատր տեղիս» մինչև երեք անգամ, և ով ոք կամեսցի գնել եկեսցէ և հայտնեսցէ»: Եթե ուրիշների կողմից վերջին գինն ավելացվում է, ապա նույն ձևով պրոցեսը շարունակվում է մինչև ամենաբարձր գին տվողը, որին և վաճառվում է ապրանքը<sup>22</sup>:

Առևտրին նվիրված հոդվածներում ամենայն մանրամասնությամբ պարզաբանվում է առևտրի թվարկված ձևերի բովանդակությունը, և շարադրվում են այն կանոններն ու պայ-

<sup>20</sup> Դատաստանագիրք Աստրախանի հայոց, էջ 119:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 120:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 25:

մանները, որոնց առկայության դեպքում միայն գործարքները կարող են օրինական համարվել:

Առևտուրը պետք է կատարվի ընդունված շափ ու կշիռների միջոցով, որոնց խախտումը դատապարտվում է ամենայն խստությամբ: «Եթե ոք յանդգնեսցի ի արքայական կնքով կնքեալ օրինաւոր շափից (որպիսի է շափ կշռոյ և շափ գազի) պակասեցուցանել և նուազեցուցանել, որով հասուցի վնաս ումբք, յորժամ յայտնեսցի, որոյ վնասեացն՝ կրկնակի վճարեսցէ, և վասն հանցանացն վարեսցի յաքսորս ի ամենայն կեանս նորին»<sup>23</sup>: Համապատասխանաբար պատրժվում են նաև նախապես դաշնագրով ընդունված պայմանագրերի խախտումները (ապրանքների անհամապատասխանություն նմուշներին, կեղծ ռեկլամներ, գների խախտման և այլ նման դեպքեր), որոնք բազմաթիվ տարբերակներով հանգամանորեն պարզաբանված են Գատաստանագրքի հարյուրավոր հոդվածներում:

Քրեական հանցանքների թվին են դասվում նաև շարաշահման այն դեպքերը, երբ առևտրականները լայն սպառման ապրանքները արհեստականորեն կուտակում են՝ հետագայում բարձր գներով վաճառելու համար, կամ միևնույն նպատակով արգելում են այլ քաղաքներից ապրանքների ներմուծումը: Այս կարգի շարաշահումները տուգանվում են 40 ուրբով, իսկ կուտակված իրերը վաճառվում «շափավոր գնով»<sup>24</sup>:

Առևտրական հարաբերությունների կարգավորման բաժնում ծավալուն տեղ է հատկացված առևտրական ընկերությունների կազմավորման և դրանց անդամների փոխհարաբերության հարցերին: Աստրախանի հայկական համայնքում, հավանաբար, առևտրական կազմակերպության ամենատարածված ձևը եղել է «աղայի և ընկերոջ» փոխհարաբերության վրա հիմնված առևտուրը, երբ «ոք տայ զդրամ ումբք, զի աշխատեսցէ, զգլուխ դրամին և երից մասանց երկու մասն ի ստացեալ արդեանց և շահաւէտութեանցն հասցէ ինքեան և

23 Նույն տեղում, էջ 116:

24 Նույն տեղում, էջ 109:

երրորդ մասն հասցէ աշխատողին»<sup>25</sup>: Գրամատիրոջը՝ «աղային» հասնում է հասույթի երկու մասը, իսկ «ընկերոջը»՝ մեկ: Ըստ որում դրամատիրոջ արտոնությունները միայն հասույթի մեծ մասի ստացումով չեն սահմանափակվում: «Ընկերոջ» պարտականությունների ընդարձակ պարզաբանումները ցույց են տալիս, որ նա գտնվում է գրեթե վարձու աշխատողի վիճակում: «Ընկերը» հաշվետու է «աղայի» առաջ ողջ առևտրական գործունեության համար: Պատշաճ գրանցումների բացակայության դեպքում «ընկերոջն» սպառնում է բանտարկություն, «լուկ հացի և սոսկ ջրով կերակրիցի»՝ մեկ տարի ժամանակով, որից հետո «տերն ընկերոջն աւարտեսցուցէ զհաշիւ ընկերութեան նորին այսու կերպիւնքէ ունի շահս և զարդինս՝ մասնաւորեսցին զայն ըստ պայմանի ընկերագրոջն իսկ եթե զլուխ դրամոյն պակասիցէ՝ պակասնորոն ընկերն պարտաւորի վճարել տեառն իւրում»<sup>26</sup>: Այսպիսով, նման դեպքերում, ամբողջ վնասը կրում է միայն «ընկերը», իսկ «աղան» օգուտների տերն է միայն:

Այսպիսի ընկերությունների լայն տարածումը հնարավոր էր խոշոր դրամատերերի առկայության դեպքում միայն: Ակնհայտ է, որ քաղաքի վաճառականների մի մասը հարբստանալով կտրվել էր առևտրական գործունեությունից և կապիտալները շարժման մեջ էր դնում իր համար խիստ շահավետ առևտրական ընկերություններում:

Ընկերության մյուս ձևը առևտրականների կամովին միավորումն է՝ համատեղ գործակցության հավասար պայմաններով: Այս դեպքում զոքր ինչ շահեսցեն կամ վնասեսցեն՝ մասնաւորիցեն ի մէջ իւրեանց ըստ դաշնագրութեան իւրեանց»<sup>27</sup>: Այս տիպի առևտրական ընկերությունների գործունեության վերաբերյալ ուրիշ պարզաբանումներ չկան, որի պատճառը դժվար է կռահել: Հայտնի է, որ այս կարգի ընկերությունները շատ տարածված են եղել զանազան երկրներում: Նրանք ունեցել են ընդարձակ կանոնադրություններ,

25 Նույն տեղում, էջ 130:

26 Նույն տեղում, էջ 133:

27 Նույն տեղում, էջ 130:

որտեղ հանգամանորեն շարադրված են եղել առևտրի կանոնները ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում: Մնում է ենթադրել, որ Աստրախանի հայկական փոքրաթիվ համայնքում հատուկենտ են նման ընկերություններ եղել:

Կամենեցի դատարանի շուրջ երկու տասնյակ արձանագրություններում քննարկվում են առևտրականների հետ կապված հարցեր, որոնք, սակայն, իրենց աղքատիկ բովանդակությամբ աղոտ պատկերացում են տալիս քաղաքի հայ գաղութի առևտրականների գործունեության մասին: Ինչպես նկատել է արձանագրությունների տեքստերին քաջատեղյակ Վ. Ռ. Գրիգորյանը, հայ առևտրականները ակտիվ մասնակցություն են ունեցել լեհական քաղաքների տոնավաճառներին, զբաղվել են հատկապես մանուֆակտուրայի և անասունների առևտրով: Հայ առևտրականների հարստության չափերի մասին որոշ պատկերացում է տալիս լեհական իշխանությունների կողմից 1682թ. նրանցից երկուսի դեմ հարուցված դատական պրոցեսը, որոնք «ոսկեհյուս շքեղ զգեստներով» են կատարում հարսնահանդեսը, այն դեպքում, երբ թագավորական օրենքն արգելում էր շքեղությունն ու պճնամոլությունը<sup>28</sup>: Շահագործողական հասարակարգում այդ շքեղությունները ստեղծվում են աշխատավորների կեղեքման միջոցով, որը հովանավորվում է գործող իշխանությունների կողմից: Կամենեցի հայկական համայնքի ղեկավար, այդ թվում և դատական, մարմիններն ընտրվում էին միայն ունևոր դասակարգերից<sup>29</sup>, իսկ աշխատավոր մեծամասնությունը մի կերպ պահպանում էր իր գոյությունը: Վ. Ռ. Գրիգորյանը հիշատակում է այն փաստը, որ 1614թ. հարուստներից գանձվող գումարների հաշվին քաղաքում հատուկ հիվանդանոց է բացվում հայ աղքատների համար:

Արձանագրությունների մոտ կեսը (632-ից 300) պարտապանների դեմ ուղղված հայցերն են կազմում: Սա, ան-

շուշտ, վկայում է վաշխառուական կապիտալի զարգացման բարձր աստիճանի մասին: Պարտքի գումարները մեծ մասամբ փոքր են. խոշոր գումարների վերաբերող գործերը կազմում են պարտատիրական հայցերի ընդհանուր թվի շուրջ 10%-ը: Այդ ցույց է տալիս, որ վաշխառուական կապիտալի շահագործման հիմնական օբյեկտը հայկական համայնքի մանր առևտրականներն ու աշխատավորներն էին: Արձանագրություններից պարզվում է նաև, որ պարտապանների մի նշանակալի մասն անվճարունակ է: Դատական նիստերում հաճախ են քննարկվում հայցերը հետաձգելու, պարտքերի ժամկետները երկարաձգելու հետ կապված հարցեր: Քացի այդ, մեծ թվով արձանագրություններ քրեական բնույթի են և հիմնականում տնտեսական աստառ ունեն:

Տնտեսական բնույթի հայցերի թիվն անցնում է հարյուրից, որոնց մոտ 80 տոկոսը դառնում է գույքային հարաբերությունների շուրջը: Ձիերին ու եզներին վերաբերող մեծաքանակ հայցերը (շուրջ 25%) ցույց են տալիս, որ երկրագործությունը եղել է զբաղմունքի կարևոր ճյուղ, որտեղ գրաստները եղել են միակ քարշող ուժն ու փոխադրամիջոցը:

Վարձակալական հարաբերությունների շուրջը եղած փոքրաթիվ հայցերը կարևոր են նրանով, որ վերաբերում են համայնական շրաղացներին ու տներին: Համայնքին պատկանող այս օբյեկտները տնօրինել է հայկական դատարանը, որոնցից զոչացած եկամուտների օգտագործման մասին որոշ պատկերացում են տալիս մի քանի արձանագրություններ: Հայկական համայնքի գործերը կարգավորելու կապակցությամբ հարկ է լինում հայ անվանի մարդկանց գլխավորությամբ պատվիրակություններ ուղարկել լեհաստանի թագավորների մոտ, և դրա հետ կապված ծախսերը հոգացել է դատարանը՝ հատուկ որոշումով<sup>30</sup>: Պարզ է, որ համայնական բնույթի այլ գործերի վարումը նույնպես պահանջում է համապատասխան ծախսեր, որոնք ծածկվում են դատարանի իրավասության տակ եղած գումարների հաշվին: Այդ կնշա-

<sup>28</sup> Կամենեցի-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, էջ 80—81:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 60, 86:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 91, 95, 212:

նակի, որ հայկական դատարանը դատավարությունից բացի ունեցել է նաև համայնական գործեր վարելու լայն իրավունքներ:

Աստրախանի հայոց Դատաստանագրքում ընդարձակ տեղ է հատկացված փողի և արժեթղթերի շրջանառության հարցերին: Ուշադրության կենտրոնում տոկոսի և մուրհակների շրջանառության պրոբլեմն է: Տոկոսի հարցը արժարժվում է տարբեր գլուխներում: Բայց մի առանձին գլխում տոկոսի պրոբլեմը դառնում է հատուկ քննարկման առարկա, տոկոսը բնութագրված է որպես «շահն զրամական փոխառութեան զոր ոք փոխ առնու ումեքէ զզրամ պայմանաւ ժամանակագրութեան և խոստանայ տալ նմա տոկոսիս վասն ընկալեալ զրամոյն»<sup>31</sup>:

Այս բնութագրության մեջ ուշադրամն այն է, որ տոկոսը համարվում է փոխատվական կապիտալի շահույթ, որով և այն օրինականացվում է: Եթե արդյունաբերական և առևտրական կապիտալի շահույթը օրինական եկամուտ է, ապա օրինական է նաև փոխատվական կապիտալի շահույթը՝ տոկոսը: Տոկոսի այս հիմնավորումը, որը բխում է նրա բնութագրումից, միանգամայն տրամաբանական է, թեև Դատաստանագրքում ունենք տոկոսի այլ հիմնավորում: «Թեպէտ աստուածային և քաղաքական օրինօք արգելեալ է ամենայնիւ առնումն տոկոսեաց և զվարձս զրամական փոխատուութեան, սակայն ամենուրեք ի մէջ վաճառականաց մշտապես գոյ սովորութիւն տալն է առնուլն զտոկոսիս: Վասն որոյ արժան է, զի որ տայ զզրամ ումեք ի փոխ՝ մի առցէ ավելի, քանզ հարիւրին ամսէն կէս տոկոսիս, քանզի աւելի քան զհարիւրին առնուլն է մեծագոյն անօրէնութիւն և այսմ մատենական օրինօքս արգելեցեալ»<sup>32</sup>: Զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում այդ կարգի զրամաշրջանառությունը հասել էր այնպիսի աստիճանի, որ գործող աստվածային և քաղաքական օրենքներն արդեն տեղիք էին տալիս նրա հաղթարշավի առջև:

31 Դատաստանագրքի Աստրախանի հայոց, էջ 48:

32 Նույն տեղում, էջ 48:

Տոկոսագրույքը սահմանվում է տարեկան 6%, որի համար, որևէ պատճառաբանություն կամ բացատրություն Դատաստանագրքում չկա: Բազմիցս, տարբեր առիթներով արգելվում է սահմանված տոկոսագրույքի խախտումը, որի համար նախատեսվում է բավականին խիստ պատիժ: Երբ առկա է բարձր տոկոսագրույքի գաղտնի պայմանավորվածություն, ապա «ոչ միայն զփոխ տուեալն կորուսանելուց է, այլև տասներորդ մասն հարկաւորի տալ տուգանս դատաստանին՝ առանց ամենայն թույլատրութեան»<sup>33</sup>: Օրենքը կտրականապես արգելում է նաև գանձումը բարդ տոկոսներով: Այդ տիպի գործարքները որակվում են որպես ապօրինի խախտումներ, և հաշվարկները կատարվում են սահմանված տոկոսագրույքով: Միևնույն սկզբունքով է կատարվում նաև ապառիկ վաճառված ապրանքների արժեքի վճարումը, այսինքն՝ ապրանքների լրիվ արժեքի հետ միասին հաշվարկվում է նաև պարտապանի գումարի տոկոսը՝ «հարիւրին ամսեն կէսովն»<sup>34</sup>:

Փոխատվական կապիտալի շրջանառության գործառնությունները ձևակերպվում են երկու կարգի արժեթղթերի՝ սանադի և բարաթի միջոցով: «Սանադ անուանի պարտականութեան գիր, որ ով ոք յումմեքէ առցէ զրամ և տացէ նման սանադ, որ ըստ նոյն սանադին գրեցելոյս վճարումն արասցէ»<sup>35</sup>: Այս բնութագրումից պարզվում է, որ սանադը մուրհակն է:

Բարաթը նույնպես զրամական պարտավորագիր է «որով ոք առնու ումեքէ զրամ զի այլ ուրեք ինքն, կամ փոխանակ ինքեան այլ ոք ոմն արասցէ վճարումն փոխատուին ինքեան կամ այլոց ումեք՝ որոյ նա հրամայիցէ»<sup>36</sup>: Ըստ որում, որոշակիորեն ասված է, որ սանադի և բարաթի միջև էական տարբերություններ չկար, և «զոր ինչ գրեցեալ է վասն սանադի... նոյնով կերպեւ վարելի է և վասն բարաթագրի, առանց փոփոխութեան»<sup>37</sup>:

33 Նույն տեղում, էջ 52:

34 Նույն տեղում, էջ 51:

35 Նույն տեղում, էջ 32:

36 Նույն տեղում, էջ 172:

37 Նույն տեղում:



Դատաստանագիրքը սահմանում է այս արժեթղթերի շրջանառության կանոնները և ապահովում համապատասխան գումարների վճարումը: Նշենք, որ սանադի և բարաթի բովանդակությունը, դրանց վճարման փոխադարձ պարտավորությունները պարզաբանված են առանձին գլուխներում: Ըստ որում, բարաթներ կազմելու կանոնները, դրանցով արտահայտվող հարաբերությունների բնույթը պարզաբանվում է ավելի հանգամանորեն: Այդ բացատրվում է մասամբ նրանով, որ բարաթներով արտահայտվող հարաբերություններն ավելի բազմակողմանի են, բարաթի շրջանառության ոլորտը ավելի լայն է: Այս դեպքում փոխադարձ պարտավորությունների մեջ ընդգրկվում են առավել թվով մարդիկ և տարբեր քաղաքների բնակիչներ: Այս առանձնահատկությունները վկայում են, որ բարաթը փոխատվական կապիտալի շրջանառության ավելի տարածված ձև է եղել քան սանադը: Աստրախանի հայ վաճառականները կապված էին Արևելքի և Արևմուտքի բազմաթիվ քաղաքների հետ, որը և ավելի քան անհրաժեշտ էր դարձնում բարաթների շրջանառությունը:

Առևտրական և փոխատվական կապիտալի բնականոն շրջանառության համար կարևոր է նաև շրջանառության մեջ առկա լիարժեք դրամների քանակը: Դատաստանագիրքը խստագույն պատիժ է սահմանում ինչպես դրամանենգման, այնպես էլ դրամների արժեքների պակասեցման դեպքում: «Եթե ոք հանդգնեցի տպել զդրամ, յորժամ քննեալ ստուգեսցի՝ հատցի աջոյ ձեռն նորին», որից հետո իրեն հրապարակով այրել, ամբողջ ունեցվածքը դարձնել արքունի սեփականություն, իսկ նրանց մերկացնողներին պարզևատրել՝ թագավորի ողորմածությամբ<sup>38</sup>: Նշենք, որ շրջանառության մեջ մեծ քանակությամբ կեղծ դրամների հայտնաբերման դեպքում բազմաթիվ գործատերեր սնանկանում են, կազմալուծվում է դրամական շուկան: Դրամանենգումը, այսպիսով, դառնում է հասարակական աղետ և պատժվում է օրենքի ամբողջ խստությամբ:

Դատաստանագիրքը այդպես դաժանորեն է պատժում

նաև շրջանառության մեջ գործող դրամները ձուլողներին: Երբ փողը արհեստականորեն դուրս է դալիս շրջանառությունից և դառնում է գանձ՝ զարդի ու պերճանքի առարկաների ձևով, պակասում է շրջանառության մեջ եղած անհրաժեշտ դրամի քանակը: Նման դեպքերում արհեստականորեն բարձրանում են ապրանքների գները և խախտվում ապրանքաշրջանառության նորմալ ընթացքը: «Եթե ոք իշխեսցէ հալել զդրամ արքունի՝ որք ունին զորութիւն... զի նովաւ շինեսցէ ալլ ինչ... հատցին զուխ նորին առանց ամենայն այցելութեան: Իսկ արգելեցեալ և կամ օտարական թագաւորաց դրամն, եթե ոք հալեսցէ՝ ոչ է մեղադրելի և արժանի պատժոյ»<sup>39</sup>: Դրամահալման պրակտիկան ինքնին հանցագործություն է, խոսքը վերաբերում է միայն գործող դրամներին, և Դատաստանագիրքը մտահոգված է շրջանառության մեջ եղած անհրաժեշտ դրամաքանակի պահպանման հարցով:

Հայտնի է, որ շրջանառության մեջ եղած փողի քանակի հարցը տնտեսագիտության վիճելի պրոբլեմներից մեկն էր: Մանուֆակտուրային շրջանի մերկանտիլիստները (Թ. Մեն) իրավամբ դատապարտում էին մոնետար սիստեմի ներկայացուցիչների կողմից շրջանառությունից դրամը հանելու և որպես գանձ կուտակելու պրակտիկան: Բայց նրանք սխալվում էին՝ շրջանառության մեջ մեծ քանակությամբ դրամի առկայությունը համարելով երկրի հարստության շափանիշ: Առաջին անգամ բուրժուական կլասիկ քաղաքատնտեսության հիմնադիր Վ. Պետին կռահեց, որ շրջանառության մեջ շատ կամ քիչ փողի քանակը երկրի հարստության աստիճանի հետ կապ չունի: Շրջանառության մեջ պետք է լինի այնքան փող, որքան անհրաժեշտ է ապրանքաշրջանառության կարիքների համար: Դատաստանագրքից չի պարզվում, թե նրա հեղինակները ծանոթ էին արդյոք այս հարցի շուրջը եղած վիճաբանության պատմությանը, թե ոչ: Բայց կարևոր է այն, որ նրանք ճիշտ են կողմնորոշվել այդ հարցում՝ շրջանառության մեջ եղած անհրաժեշտ փողի քանակը բնականոն ապրանքաշրջանառության կարևորագույն պայման համարելով: Հն-

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 18:

տագայում այդ պրոբլեմը իր գիտական լուծումն ստացավ Մարքսի մոտ: Բանն այն է, որ նախամարքսյան շրջանի տնտեսագետները չեն տարբերել փող ու կապիտալ կատեգորիաները և նույնացնելով դրանց շրջանառության կանոնները, հանգել են հակասական եզրակացությունների: Եթե խոսքը վերաբերում է շրջանառության մեջ եղած կապիտալին, ապա ճիշտ էր Թոմաս Մենը՝ շրջանառության մեջ եղած կապիտալը համարելով հարստության աստիճանի շափանիչ: Եվ իրոք, որքան շատ կապիտալ նետվի շրջանառության մեջ, այնքան ավելի մեծ քանակությամբ հարստություն կարտադրվի: Իսկ երբ խոսքը վերաբերում է շրջանառության մեջ եղած փողին, ապա ճիշտ էր Վ. Պետին, այն պետք է ոչ շատ լինի և ոչ էլ քիչ, այլ այնքան, որքան պետք է շրջանառության կարիքների համար: Մարքսը ցույց տվեց, որ շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակը կարգավորվում է մեխանիկորեն՝ փողի գանձ ֆունկցիայի միջոցով: Երբ շրջանառության մեջ ավելի շատ փող է լինում քան անհրաժեշտ է՝ ավելցուկը ձուլվում է որպես գանձ, իսկ հակառակ դեպքում գանձը ստակահատվում է որպես փող և լրացնում անհրաժեշտ պակասը:

Աստրախանի հայոց Դատաստանագիրքը արժեքավոր աղբյուր է նաև այն ժամանակվա հասարակության դասակարգային կառուցվածքի և դասակարգերի փոխհարաբերության հարցերը լուսաբանելու տեսակետից: Պարզվում է, որ Աստրախանի հայկական համայնքի մասնաարտոնյալ խավը առևտրականների բարձր դասն էր: Առանձին հողավածներով սահմանվում է առաջին, երկրորդ և երրորդ կարգի առևտրականների արժանապատվությունը վիրավորողների պատժաշափր: «Եթե ոք հայհոյեսցէ կամ անարգեսցէ առաջին վաճառականի՝ հրապարակաւ ձաղկեսցի, իսկ եթե հարկանիցէ՝ ոչ միայն ձաղկեսցի, այլև անկցի ի բանդ 15 օր»<sup>40</sup>: Ավելի մեղմ աստիճանի նույնանման պատիժներ են սահմանվում երկրորդ և երրորդ կարգի վաճառականներին վիրավորելու համար:

Առաջին կարգի վաճառականներին են հավասարեցվում

նաև դատավորներն ու ազնվականները, որոնց վիրավորողների նկատմամբ սահմանվում է նույն պատիժը, ինչ որ առաջին կարգի վաճառականներին վիրավորելու դեպքում<sup>42</sup>: Այսպիսով, հասարակության այս խավերը, որպես բարձր դաս, առանձնացված են մնացած բնակչությունից: Վաճառականների և դատավորների իրավունքներն ու արտոնությունները հանգամանորեն պարզաբանված են Դատաստանագրքի բազմաթիվ հողավածներում, իսկ ազնվականների մասին նըշված հիշատակությունը միակն է: Դրա պատճառն, անշուշտ, այն է, որ քաղաքի հայկական գաղութում ազնվականներ գրեթե չկային: Բայց Դատաստանագիրքը, համենայնդեպս, չի մոռացել ֆեոդալական հասարակության այդ բարձրաստիճան խավի ներկայացուցիչներին և նրանց դասել է առաջին կարգի վաճառականների ու դատավորների շարքում:

Հասարակության երկրորդ խումբը արհեստավորներն ու մշակներն են, որոնց պարտականություններին մենք արդեն ծանոթ ենք: Արհեստավորների փոքրաթիվ մասը միայն (հիմնականում «ուստաքարերը») կարող էր ընտրվել դատավոր, այսինքն՝ դասվել հասարակության բարձր խմբում: Մնացած արհեստավորները շահագործվող աշխատավորներ էին, որոնք մի կերպ հայթայթում էին իրենց օրվա ապրուստը: Դատաստանագրքի առաջաբանում (Ֆ. Գ. Պողոսյանի աշխատասիրությամբ) Աստրախանի մարզային արխիվից հարուստ նյութեր են բերված, որոնք վկայում են համայնքի բարձր խավերի ապօրինությունների դեմ մղած աշխատավորների պայքարի մասին: Քաղաքի աշխատավորության ուսերին էր ընկած հարկերի, պետական պարտավորությունների, զանազան պարհակների կատարման ծանրությունը, որոնցից ունևորները խուսափում էին տարբեր ճանապարհներով ու պատրվակներով: Աշխատավորների կեղեքմանը նպաստում էր նաև համայնքի հայկական իրավաբանը: Շահագործող խավերի ներկայացուցիչ դատավորները օրենքն ու

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 328:

<sup>42</sup> Նույն տեղում:

դատարանը օգտագործում էին որպես ղենք՝ ուղղված աշխատավորների դեմ: Արխիվային նյութերի բազմաթիվ բողոքներն ու դիմումները վկայում են այն մասին, որ վերադաս մարմինները խախտում էին պրոգրեսիվ եկամտահարկի դրույթները՝ հարուստների օգտին, ի վնաս աշխատավորության: Այս կարգի անարդարությունների մասին պատկերացում կազմելու համար բավականանանք աշխատավորների բողոքներից մեկով, ուր ասված է, որ 1747 թ. իրավաբանը 5 ու 20 կոպեկ հարկի փոխարեն գանձում էր 5 ու 70 կոպեկ: Նյութերից պարզվում է նաև, որ ավելի հետևողական բողոքավորներին բանտարկում էին և ծեծում: Նշենք, որ իրավաբանը կատարում էր նաև ոստիկանատան դեր, որի ծառայողները կամայականորեն կիրառում էին բռնության միջոցներ և խոշտանգում աշխատավորներին:

Հասարակության ամենաստորին խավն էին կազմում ծառաներն ու աղախիները, որոնք զուրկ էին ամենատարրական իրավունքներից: Ուշագրավ է, որ ծառաների սոցիալական վիճակին հատուկ զուխ հատկացնելուց բացի, նրանց պարտականությունները պարզաբանվում են Դատաստանագրքի մյուս գլուխների բազմաթիվ հոդվածներում:

Նախ, նշենք, որ ծառաները գնվում են շուկայում, դրամով, մյուս ապրանքների և անասունների նման: «Ծառայանուանի այն, որ դրամով գնեցիալ լինի յումեքէ»<sup>43</sup>: Ըստ որում, ծառայության համար պիտանի շափահաս տղամարդու գինն էր 40 ռուբլի, հավանաբար ավելի էժան, քան բանող անասունինը (Դատաստանագրքում անասունների գների մասին որևէ հիշատակություն չկա):

Ծառան բնակվում է իրեն գնող տիրոջ տանը և «ծառայեսցէ նմա յամենայն հաճոյս նորա, իսկ եթէ ոչ հնազանդեսցի ծառայն հրամանի տեառն իւրոյ խստապէս խրատեսցի»<sup>44</sup>, Այդ խրատի ձևերի մեջ ընտրություն չի արված, այն թող-

43 Նույն տեղում, էջ 80:

44 Նույն տեղում:

նրված է տիրոջ կամքին: Ըստ որում, ծառաները «ոչ կարեն բողոքել առ դատարար»<sup>45</sup>:

Ծառայության ժամկետը սահմանվում է յոթ տարի: Տերը կարող է ծառային վաճառել, գրավ դնել ինչպես իր անասուններին: «Եթէ որ առցէ փոխ ումեքէ և տացէ նմա գրաւ ծառայք, աղախնեայք և կամ շնչաւոր կենդանիք, որպիսի է ձի, ոչխար, կօվ և այլ սոյնպիսիք, և բազմացին նոքա առ փոխատուն», ապա աճի նկատմամբ նույնպես կատարվում են առևտրական գործարքներ՝ ըստ կատարված պահպանման ծախսերի<sup>46</sup>:

Դատաստանագիրքը ծառաներին զրկում է նաև քաղաքացիական իրավունքներից: Ծառան չի կարող հանդես գալ դատարանում որևէ մեկի դեմ, կամ որպես վկա «զի ոչ ունի հաւասար պատիւ այնք, որք ազատք են»<sup>47</sup>: Գեռ ավելին, ծառաները չեն կարող լինել մեղադրող նաև ազատվելուց հետո իրենց ամբողջ կյանքի ընթացքում<sup>48</sup>: Հետևաբար, ծառաների և ազատների միջև էական տարբերությունները պահպանվում են ընդմիջտ: Վկայություն տալու, ուրիշի հանձնարարությամբ դատարանին ներկայանալու իրավունքից զրկվածների թվում են դասված պատժված հանցագործները, գողերը, մարդասպանները, ծառաները, անչափահասները և այլք<sup>49</sup>:

Դատաստանագիրքը խիստ միջոցներ է սահմանում փախստական ծառաներին հայտնաբերելու և տերերին վերադարձնելու համար: Փախստական ծառաներին հովանավորողները պարտավորվում են 40 ու վճարել նրանց տիրոջը:

Ինչպես պարզվում է, ծառաներն իրենց իրավական դրությամբ գրեթե հավասարվում են ստրուկներին, այն տարբերությամբ միայն, որ «Ոչ տա հրաման արենքս ումեք սպանանել զծառայ իւր ձեռաւք իւրովք»<sup>50</sup>:

45 Նույն տեղում, էջ 227:

46 Նույն տեղում, էջ 42:

47 Նույն տեղում, էջ 86:

48 Տե՛ս նույն տեղում, էջ 259:

49 Նույն տեղում, էջ 267:

50 Նույն տեղում, էջ D:

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ  
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մինչհեղափոխական շրջանի հայ պատմագրության համար բնորոշ էր ֆեոդալական անցյալի իդեալականացումը, թագավորների, նախարարների, հոգևոր իշխանությունների գործունեության փառաբանությունը: Այս ընդհանուր հոսանքից սահմանազատվեցին հնդկահայ համայնքի հրապարակախոսները՝ Շահամիր Շահամիրյանի գլխավորությամբ: XVIII դարի երրորդ քառորդում, կապիտալիստական հարաբերությունների ձևավորման արշալույսին հայ առևտրական կապիտալը ներդրումների շահավետ ոլորտներ էր որոնում, իսկ ֆեոդալական հարաբերությունները կարող էին միայն խանգարել ու արգելակել նրա ձգտումների իրականացմանը: Այս իրադրության պայմաններում ֆեոդալական անցյալի իդեալականացման մասին խոսք լինել չէր կարող:

Եվրոպական երկրներում կապիտալիստական հարաբերությունների զարգացման պատմության դասերը այդ տեսակետից շատ պերճախոս էին: Ֆրանսիական հեղափոխությունն ու նրա տեսաբանները ցույց էին տվել, որ կապիտալիստական հարաբերությունները զարգացել են ֆեոդալական ինստիտուտների վերացման ճանապարհով:

Հայ առևտրական կապիտալը համեմատաբար անկաշկանդ զարգանում էր գերազանցապես եվրոպական երկրների, Հնդկաստանի և Ռուսաստանի հայ գաղթօջախներում: Կապիտալի նախասկզբնական կուտակման ընթացքը համապատասխան պայմաններ էր ստեղծում կապիտալիստական արտադրության զարգացման համար: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ կուտակված հարստությունների կիրառման ամենաշահավետ բնագավառը նյութական բարիքների արտադրությունն էր, և առևտրական կապիտալը մեծ գումարներով ներգրվում էր արդյունաբերության մեջ: Հասկանալի պատ-

ճառներով հայ առևտրականների համար այդ գործում ստեղծվում էին լուրջ դժվարություններ: Մյուս կողմից, եվրոպական երկրների առևտրական ընկերությունները հայ առևտրականներին նեղում էին նաև դնման ու վաճառահանման շուկաներում:

Հայ բուրժուազիան իր գործնական նպատակների իրականացման ուղին էր համարում ազգային ազատագրական պայքարը: Թուրքական և պարսկական բռնակալության դարավոր լծից հայ ժողովրդի ազատագրման գաղափարախոսությունն այն զենքն էր, որ կարող էր տիրապետել աշխատավորական զանգվածներին և հզոր նյութական ուժ դառնալ:

Հայ առևտրականների համար գործելու և ապրելու առավել ծանր պայմաններ էին ստեղծվել Թուրքիայում և Պարսկաստանում, որտեղ հայերը, շնայած իրենց հսկայական հարստություններին և արքունի շրջաններում ունեցած դիրքին ու ազդեցությանը, մշտապես կողոպտվելու և գլխատվելու սպառնալիքի տակ էին: Եթե միաժամանակ հիշենք, որ Ռուսաստանում հայերը առևտուր անելու առավել լայն արտոնություններով էին օժտված, ապա պարզ կլինի, թե ինչու հայ առևտրական շրջաններում մեծ համարում ունեին Ռուսաստանի օգնությամբ հայերի ազատագրման ծրագրերը: Դեռ ավելին, զգալի թվով հայ առևտրականներ իրենց անմիջական մասնակցությունն են բերել հայ ազատագրական շարժմանը և իրենց ավանդը ներդրել այդ շարժման գաղափարախոսության ձևավորման ու զարգացման գործում:

Սրանց մեջ իր ուրույն դեմքն ունի Եղիա Կարնեցին, որի հարուստ և ուշագրավ աշխատություններն ու գրագրությունները գտնվում են ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության արխիվում և կարող են ուսումնասիրություն<sup>1</sup>: Բանասեր Հ. Հ. Ոսկանյանի վկայությամբ Եղիա Կարնեցին հանդիպել է Իս-

<sup>1</sup> Այդ նյութերի հիման վրա 1968 թ. հրատարակվեց «Եղիա Կարնեցու դիվանը» ժողովածուն, պրոֆ. Ա. Գ. Արրահամյանի ընդարձակ առաջաբանով և ծանոթագրություններով:

րայել Օրուն (1707—1709 թթ.), որի ազդեցությունը շնորհիվ «Հայաստանի ազատութեան բարձր նպատակին կընդհարուի»<sup>2</sup>:

Եղիա Կարնեցին սկզբում զբաղվել է ինքնուրույն առևտրական գործունեությամբ, իսկ հետագայում պատասխանատու պաշտոններ վարել մի շարք առևտրական ընկերությունների: Իր հասարակական գիրքի և լեզուների իմացությունը շնորհիվ նրան հաջողվել է գլխավորել պարսկական մի պատվիրակություն, որը եվրոպական մի շարք երկրներ այցելելուց հետո Ռուսաստանով պետք է ավարտեր իր միսիան: Ծանապարհորդության ընթացքի, խնդիրների ու նպատակների մասին Կարնեցին հանգամանորեն պատմում է ընդարձակ մի ձեռագիր ինքնակենսագրականում, որի միկրոթապավենը պահվում է Մաշտոցի անվան Մետենադարանում: Հեղինակը գրում է, որ այդ ուղևորությունը նա ուրախ էր ոչ թե սեփական փառքի և անձնական հաճույքի, այլ Պետրոս Մեծի հետ անձնական հանդիպումների ընթացքում իր ազգին օգտակար լինելու հեռանկարի համար: «Ես թագաւորի պէս կապրէի ի երկիրն պարսից, հաշուե թե, ես էի թագաւոր, արդ ընդէ՞ր թողի և զնացի. կամէ՞ ի զնալ, որ անդ առաւել մեծութիւն գտանեմ, ոչ քանզի աստուած զիս մեծացուել էր յոյժ այնքան, որ ոչ որ ի նախարարացն բազմէր ընդ շահին բացի յինեն, վասն սիրոյ և վասն բարեկամութեան նոցա մանավանդ վասն օգտին ազգին իմոյ թողի զայն ամենայն փառքն պատին և մեծութիւն զնացի անդ»<sup>3</sup>: Ռուսաստանի միջոցով հայերի ազատագրման ծրագիրը Եղիա Կարնեցու մոտ ձևավորվել էր դեռ վաղուց, նախքան պատվիրակության ստեղծումը: Հեղինակի բազմաթիվ նամակներում մոռալ գույներով է նկարագրվում ոչ միայն աշխատավոր ժողովրդի ողբալի վիճակը,

2 Հ. Հ. Ոսկեան, Եղիա Ա. Մուշեղեան և իր գրական արտադրությունները, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1927 թիւ, № 2, էջ 128—129:

3 Պատմութիւն իմն կարճատոտ ի վերայ անձկութեանց Եղիա Աստուածատուրեանց, զորս կրեցի ի ազգէն ֆրանկաց, մանաւանդ ի խարբայ կրօնաւորացն և ի սուտ եղբայրց և բարեկամ կոչիցելոց, էջ 226 ա (այնուհետև՝ Անձկութիւն):

այլև ունեւոր խավերի անապահով դրութիւնը Պարսկաստանում:

Անպատիժ կողոպուտի ահից «Ջուղայեցիք ամենայն գիշերն իրեանց տներն կու պահեն. քուն չեն լիներ»<sup>4</sup>, կարգում ենք Եղիային ուղարկված մի նամակում: Նրա թղթապանակներում պահվող բազմաթիվ նամակներում պերճախոս վկայություններ կան առևտրական քարավանների կողոպուտի, առևտրականների, սպանությունների, ապօրինի գանձվող կրկնամաքսերի, տեղական իշխանությունների կամայականությունների, անասելի բռնությունների մասին: Նույնիսկ թավրիղում տիրող դրութիւն մասին հեղինակը գրում է. «Մին անօրեն կայ տեղն Ալի Մարտգան բէկ կասեն, թէ մին կամ երկու տարի էլ մեծաւորութիւն անէ, մին չի մնալ. էս տարի օրհնեալ տօնախմբութեան, ի աւուրն ծննդեան ոչ ժամ ոչ պատարաք կար և ոչ կարացին բանալ դուռն եկեղեցեաց վասն հալածանաց հարկապահանջից»<sup>5</sup>: Իսկ գյուղի աշխատավորների նամակներից պարզվում է, որ գյուղի բոլոր անասուններին տարել են «Վարը վաստակ ունենք, կալը կասա, ինչ անինք, ինչպէս հաւաքինք: Եզն չի կա, էհտիբար չի կա, փող չի կա՝ թէ եզն առնինք: — Գեղում տասն եզ չի կա, ամէնն տարած են, կորցրած: Գեղին սօխախններն, չորս թարաֆ ամէն քուշուբանտ է, ոչ գիշեր ունինք դադում, ոչ ցերեկըն, շիտակ որ շիպ փուշացել ինք... Շիտակ որ ջրի մեջա դուրս ձգած ձկան նման բերաններս բաց ա մնացել»<sup>6</sup>:

Հայ ժողովրդին այս թշվառություններից փրկելու ծրագրի իրականացումը Եղիա Կարնեցին, բազմաթիվ առաջավոր մտավորականների հետ միասին, համարում էր իր կյանքի նպատակը: Այդ փրկությունը սպասում էին Ռուսաստանից ոչ միայն իրենք՝ մտավորականները, այլև ամբողջ ժողովուրդը: Այդ առթիվ Ե. Կարնեցին գրում է. այն, որ «Ռուս թագաւորն կամի ազատել զազգն իմ տառապեալ... ոչ թէ միայն ես

4 Եղիա Կարնեցու Գիվանը, էջ 30:

5 Նույն տեղում, էջ 18:

6 Նույն տեղում, էջ 300—301:

գիտեի զայդ գործն, այլև ամենայն ազգն իմ, այր և կին ծեր և տղայ և ամենեքեան յայտնապէս խոսէին և ոչ ծածուկ»<sup>7</sup>։ Ահա այս ոուս թագավորի համար է, որ այնպես ջերմեռանդութեամբ աղոթում է հեղինակը «այսու դիտաւորութեամբ, թէ տէր աստուած ոչ մի իտասանց կենացն իմոց հատ յինէն և դիր ի վերայ կենացն Պետրոս թագաւորին, տէր տուր նմայ առաւել կարողութիւն, զորութիւն, որ ամենայն հաջողութեամբ զա և ազատէ զմեր ազգն»<sup>8</sup>։ Ազգի ազատագրումը նրանք ամենևին չէին պատկերացնում այնպես, որ մահմեդական պետութիւնների լուծը փոխարինվի քրիստոնյա պետութեան տիրութեամբ։ Եղիա Կարնեցին, մյուս ազատատենչ մտավորականների հետ միասին միամտաբար կարծում էր, որ ռուսական կայսրութիւնը, չգիտես հանուն ինչի, հայերին ազատագրելուց հետո նրանց համար ստեղծելու էր ինքնուրույն պետականութիւն, շնորհելու էր թագավորութիւն, հանուն դրա է, որ հեղինակը գրում է, թե «և ոչ խնայեմ եթէ աստուած այժմոյս առաքէր վասն իմ հրեշտակ և ասէր ինձ, թէ տուր զքո անձն ի մահ վասն ազգին քոյ, ես շնորհիմ քո ազգին ազատութիւն և թագաւորութիւն, առժամ այն, և հօժար կամօք և զուարդագին դիմօք մատուցանեմ զանձն իմ»<sup>9</sup>։ Անձնազոհութիւնն ու ազոթքներն, անշուշտ, բավական չէին բռնակալների լուծը տապալելու համար։ Դրա համար անհրաժեշտ էին ունենալ զինված ուժեր, որը Կարնեցին քաջ գիտակցում էր. «Եթե կրոնաւոր ոմն առաքէր զիս այնինչ քաղաքն իբրև վասն յիւր հնագոյն գրեանք, յոր ժամ որ որոնեցի գրեանք, գտանեի անդ լաւ թուր մի գինն էժան գնէի զնայ, թէ տանիմ զսայ այնինչ զինուորին»<sup>10</sup>։

Հանգամանքների բերումով Եղիա Կարնեցուն չհաջողվեց հանդիպել Պետրոս Մեծին։ Նա դարձավ կաթոլիկ կրոնավորների մատնութեան զոհ, և հայրենիքի ազատագրման գործին ծառայելու նրա իղձերը մնացին անկատար։

7 Անձկութիւն, էջ 227 ա։

8 Նույն տեղում, էջ 226 ա— 226 բ։

9 Նույն տեղում, էջ 222 ա—227 բ։

10 Նույն տեղում, էջ 276 բ։

Դարավերջին հայ ազատագրական շարժումների ծավալման հիման վրա ստեղծվում է հարուստ քաղաքական-հրապարակախոսական գրականութիւն<sup>11</sup>։ Հնդկահայ մի խումբ մտավորականներ Շահամիր Շահամիրյանի գլխավորութեամբ մշակում են ազատագրական պայքարի կոնկրետ ծրագրեր, որոնց կենսագործման համար տեսական և գործնական միջոցառումների ամբողջութիւնը նրանց կյանքի բուն բովանդակութիւնն էր կազմելու։

Ազատագրական տենչերի բորբոքման և հեղափոխական իրադրութեան հասունացման տեսակետից մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում Մովսես Բաղրամյանի «Յորդորակ»-ը։ Հեղինակը մոռալ գույներով է պատկերում բարբարոսների լծի տակ հեծող աշխատավորների ստրկական դրութիւնը, որն այլևս չպետք է հանդուրժել։ Պարսկաստանի և Թուրքիայի հայ բնակչութիւնը հեղինակը բնութագրում է որպես «բանական հօտն անտէր»<sup>12</sup>, որոնք գայլերի ոհմակի կողմից «խողողեալ զիշատեցան»<sup>13</sup>։ Այս անգոր ու անօգնական աշխատավորների վաստակը անխնա և անպատիժ կողոպտվում է բարբարոսների կողմից, որի հետևանքով և անջուր անապատի նման «ամեն ամեն աշխարհն մեր կորղացեալ խոպանացաւ»<sup>14</sup>։ Նկարագրելով կողոպուտը, հեղինակը եղբակացնում է. «1611 թուոյն մինչև այսօր, թէ որքան զոսկի և զարծաթ իցէ տուեալ ազգն Հայոց Պարսից, որ ընդ նոցա իշխանութեամբն է, թուի թէ ոչ գոյ համար անբաւութեան»<sup>15</sup>։ Նույնն է ասված նաև օսմանյան թուրքերի մասին<sup>16</sup>։ Նրանք, գրում է հեղինակը պարսիկների և թուրքեր մասին,

11 Մովսես Բաղրամյան, Նոր տետրակ որ կոչի Յորդորակ Մագրաս, 1772, Ե. Շահամիրեան, Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, Թիֆլիս, 1913, նույնի՝ Տետրակ որ կոչի նշաակ, Մագրաս, 1783, Յովսէփ Էմին, Կեանքն ու արկածները, Պեյրութ, 1958։

12 Մովսես Բաղրամյան, նշված աշխատութիւն, էջ 5։

13 Նույն տեղում, էջ 18։

14 Նույն տեղում։

15 Նույն տեղում, էջ 191։

16 Նույն տեղում, էջ 193—194։

«զմեղ իբրև զանասուն արածէն և իբրև գրաստ՝ բառնան բեռինս ծանունս՝ այսինքն զանազան հարկքն՝ զորս զմեղ յար Յաղեղով և զանակոծ առնելով յամենայն գործոց մերոց պահանջեն»<sup>17</sup>։ Ստեղծված իրավիճակը հեղինակը համարում է արդեն անհանդուրժելի և իր «Յորդորակ»-ով մատաղ սերնդին հորդորում է վրեժի և ատելության զայրույթով լցվել բռնակալության դեմ, աշխատավորությանը կոչ է անում ոտքի ելնել «սրբութիւնք մեր» անարգող այլազգիների դեմ։ «Զուր և ընդունայն են այսքան մեր անօգուտ վայ և եղուկ կարգալն»<sup>18</sup>, գրում է Բաղրամյանը և զայրագին բացականչում. «մինչև ցերթ զքրտան արեան վաստակս մեր թողուցումք յափշտակեսցեն օտարք. քանզի լնանինք քաղց նոցին»<sup>19</sup>։ Հեղինակի զայրույթի պոռթկումները պսակվում են զինված ապստամբության կոչերով։

Բաղրամյանի «Յորդորակ»-ի գաղափարների ձևավորման գործում, անշուշտ, որոշակի ազդեցություն են ունեցել Հովսեփ Էմինի հայրենիքի ազատագրման մարտական ծրագրերը և նրա պրակտիկ գործունեությունը, որը տարիներ շարունակ ծավալվել է Բաղրամյանի զինակցությամբ։ Էմինը իր կյանքի դերագույն նպատակն էր համարում տիրապետել ռազմական արվեստին, գլխավորել հայկական զինված խմբերը և ազատագրել հայրենիքը բարբարոսների լծից։ Անգլիայից հորը հղած նամակներից մեկում էմինը գրում էր. «Ես հոս եկայ սովորելու պատերազմի արեստը, որ աւելի նախապատիւ է քան աշխարհի բոլոր արուեստները»<sup>20</sup>, որպեսզի իմ կեանքն-օգտակար ըլլայ... իմ հայրենիքին»<sup>21</sup>։ Անշուշտ պետք է օգտագործել նաև կողմնակի ուժերը՝ քրիստոնյա տերությունների օգնությունը, բայց հիմնականը համարվում է հայ ժողովրդի նախաձեռնությունը։ Այս կապակցությամբ Բաղրամյանը հիշատակում է իսպանացիների և փորթուգա-

լացիների ազատագրական կռիվները, որոնք «ոչ իւր ինչ հրաշիւր՝ կամ սքանչելօք, և կամ բնաւ օգնութեամբք և ձեռնատուութեամբ այլոց. այլ շնորհօք վերին խնամոցն ինքեանք արիացելք ճակատելով թափեցին զինքեանս իւրոց»<sup>22</sup>։ Բայց առավել ցայտուն օրինակ է Ռուսաստանը. «ահաւասիկ,— գրում է հեղինակը,— այքան նուաստագույն աղզն Ռուսաց՝ որպես ի նորումս քան զամենայն զորացաւ. թափելով ինքնին զինքն ի դրացեաց հալածելոյն, մինչև տիեզերակալ լինել մարթացաւ»<sup>23</sup>։

Ռուսաստանի հզորացման այս շրջանում հայ ազատագրական պայքարի արևմտամերձայական կողմնորոշումն արդեն խամբել էր։ Հայ հասարակական հոսանքների ինչպես բուրժուական, այնպես էլ կղերաֆեոդալական թևերի ծրագրերը գերազանցապես խարսխվում էին Ռուսաստանի զինված միջամտության վրա։ Իսրայել Օրու Մոսկովյան ծրագրով հայ ազատագրական շարժումը դրվում է ռեալ հունի մեջ, նրա գործնական խնդիրների շրջանակները որոշակիորեն ընդլայնվում են։

Թեև Շահամիրյանի խմբի անդամների գրական ժառանգության մեջ Օրու վերաբերյալ որևէ հիշատակություն չկա, բայց նրանց, մասնավորապես էմինի ամբողջ գործունեությունը ծավալվում է հենց Օրու ծրագրերի կենսագործման ուղղությամբ։ Իսկ Օրու հիմնական խնդիրն էր բռնակալների դեմ հանել Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին։ Էմինը Հերակլի հետ ունեցած գրույցներից մեկում ասում է, որ «Թերևս գալոց օրերու մեջ հայերը կրնան վրացիներուն միանալ և ահարկու բանակմը երևան բերել տապալելու համար մահմետական թագավորները»<sup>24</sup>, որն արժանանում է Հերակլի հավանության։ Նա ծրագրում էր սեփական ձեռնբեռնությամբ զինված խմբեր կազմակերպել երկրի ներսում։ Շահամիրյանի առաջարկությամբ հայ վաճառականները համա-

17 Նույն տեղում, էջ 194։

18 Նույն տեղում, էջ 27։

19 Նույն տեղում, էջ 13—14։

20 Յովսէփ Էմին, Կեանքն ու արկածները, էջ 117։

21 Նույն տեղում, էջ 115։

22 Մովսես Բաղրամյան, նշված աշխատություն, էջ 30։

23 Նույն տեղում, էջ 36։

24 Հովսէփ Էմին, նշված աշխատություն, էջ 230։

ձայնվում են էմիինին տրամադրել տարեկան 1200 ռուպի, իսկ նրանցից Գրիգոր Միքայելը խոստանում է հատկացնել «այդ գումելի ծրագրին մեծ մասն իր հարստության»<sup>25</sup>։ Կամավորական խմբերն անշուշտ օժանդակ դեր պետք է կատարեին հայերի ազատագրման էմիինի ծրագրի իրականացման գործում, որի գլխավոր լծակը ռուսների ղինված միջամտությունն էր։ Այդ մասին են վկայում Ռուսաստանում էմիինի գործունեության ամբողջ ընթացքը և նրա ինքնակենսագրականում եղած ասույթները։ Եղիասաբեթ Թագուհուն բնութագրելու կապակցությամբ էմիինը հիշողությամբ բերում է նրա հետևյալ խոսքերը. «Հայերը պարկեշտ ու հավատարիմ ժողովուրդ են։ Անոնց համար բաւականին նեղութիւն էր քաշած իմ սիրելի հայրս Մեծն Պետրոսը. եթէ ան աւելի երկար ապրէր, ազատած կըլար զանոնք մահմետականներու գերութենէն»<sup>26</sup>։ Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի հետ զրույցի ժամանակ ուղղակի է ասված, որ իրենք պետք է ապավինեն «իրենց հիւսիսային դրացիին (ըսել կուզեմ զօրեղ Ռուսերուն)»<sup>27</sup>, որին «Աստուած պահէ, քանի որ նա է «հայ ազգի պաշտպանը»։

Հայրենիքի ազատագրումը համարվում էր այնքան մոտիկ ապագայի գործ, որ հնդկահայ համայնքը նախապատրաստվում էր Ռուսաստանի վրայով տեղափոխվել Հայաստան։ Շահամիրյանը «նշաւակ»-ում առաջադրում է ռուսական կայսրության հետ կազմելիք 16 կետերից բաղկացած դաշնագրի օրինակը։ Յարական կառավարությունը ռազմաստրատեգիական նկատառումներից ելնելով հարմար էր գտնում կայսրության հովանու ներքո հայկական պետական մի մարմին ստեղծել։ Այդ անհրաժեշտ էր նրա համար, ինչպես Եկատերինա Երկրորդն էր ասում, «որ եթէ Հայաստանի մեջ գոյություն ունենար տեսակ մը կառաւարութիւն կամ իշխանապետութիւն, այդ պարագան շատ մեծ նշանակություն

պիտի ունենար ռուսական կայսրութեան համար, մասնավորաբար պատերազմի ատեն, երբ հայերը պիտի կրնային շատ վարպետ կերպով նեղել և հոգնեցնել թուրքերը»<sup>28</sup>։ Շահամիրյանի «նշաւակ»-ը լինելով հնդկահայ համայնքի պահպանման և ինքնավարության կանոնադրություն, պետք է շարունակեք գործել նաև Ղզլար տեղափոխված այդ համայնքում։

Շահամիրյանը խիստ բացասական վերաբերմունք ուներ ճորտատիրության նկատմամբ։ Քանի որ քաղաքական իրադարձությունները մոտիկ ապագայում ընդգրկելու էին նաև Հայաստանը, ռուսի Շահամիրյանը երկյուղ ուներ, որ ռուսական կայսրությունն այնտեղ ևս ճորտատիրական կարգեր կհաստատեր։ Ահա թե ինչու կայսրության հետ կնքվելիք դաշնագրի նախագծում նա մերժում է ճորտատիրական կարգերը և նշում, որ «ի յազգէ մի լինիցի ծառայ, այլ միաբան ազատ»<sup>29</sup>։

Մեզ համար ուշագրավ են հատկապես համայնքի անդամների տնտեսական գործունեությանը վերաբերող դրույթները։ Հեղինակն այս դեպքում նույնպես մտահոգված է մարդկանց ձեռներեցության ազատությանը, որը նա առհասարակ երկրի բարգավաճման հիմնական պայման է համարում։ Գաշնագիրը պահանջում է, որ «Ամենայն իրաց վաճառականութիւն և յերկիր գնելոյ և վաճառելոյ և ամենայն արհեստի արհեստագործութիւն վասն մեր բացարձակ լինիցի հատուցանելով մեր հարկս մաքսըս կայսերական»<sup>30</sup>։ Ըստ որում, համայնքի անդամների ազատ տնտեսական գործունեությունը պետք է ապահովված լինի ոչ միայն Ղզլարում, այլև բովանդակ կայսրության մեջ՝ առանց որևէ խտրականության։ «Յարկ, մաքս այս և բաժին, եթէ բուսաց, տնկոց, ձեռագործից և վաճառականութեանց և այլն հատուցեմք՝ այն որ սերհական ռուստ յազգն յատուցանէ»<sup>31</sup>։

25 Նույն տեղում, էջ 455։

26 Նույն տեղում, էջ 196։

27 Նույն տեղում, էջ 363։

28 Նույն տեղում, էջ 197։

29 Շ. Շահամիրյան, Տետրակ որ կոչի նշաւակ, էջ 57։

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում, էջ 58։



Ղզլարը համայնքի ժամանակավոր բնակավայրն էր լինելու միայն՝ մի կամուրջ Հայաստան տեղափոխվելու ճանապարհին: Հետևաբար, պետք էր ապահովել անհրաժեշտության դեպքում ազատ ելք գաղթօջախից, որը և կանխատեսվում է կանոնադրության հետևյալ հոդվածում. «Մի գրեսցի ազգն Հայոց ժողովրդի կայսեր եթէ ոչ պանդուխտ բնակօղ ամենայն ժամ ազատ, ելանելոյ ընչիւք և ամենայն ստացուածօք իւրօք ուր և երբ որ յինքն կամի և անյապաղ յեւանօղս գտցէ փասսօրտ յելանելոյ»<sup>32</sup>: Մերկանտիլիստական հայացքների ազդեցությունը կրող հեղինակի ուշադրության կենտրոնումն են հատկապես հարստության ունիվերսալ ձև հանդիսացող ոսկին և արծաթը. Ուստի և նա հարկ է համարում հատկապես նշել, որ «Ոսկի և արծաթ մեր յանել յաշխարհէն Ռուստաց և մուծանել ընդ յաշխարհս Հայոց, արծակ լինիցի, և մի լինիցի հարկ կայսերական և ոչ ոք դատաւորէ»<sup>33</sup>:

Դաշնագրի վերջում հեղինակն ավելացնում է, որ «Բաշինն մի լինիցի ժամանակաւոր, եթե ոչ մշտնջենաւոր»<sup>34</sup>: Այս վերջավորությունն ավելի քան հիմնավորում է Թագ-Ավդալբեգյանի այն դրույթը, որ «Նշաւակ»-ի դաշնագիրը նախորդել է մեր գրականության մեջ հայտնի երկու դաշնագրերին «ու բերես երկսի էլ ընդհանուր ելակետը»<sup>35</sup>: Շահամիրյանի այս կանոնադրությունը, որին հետագայում այլ առիթներով կանգրադառնանք, փաստորեն համայնական օրենսգիրք է, որը «Որոգայթում» դարձավ մի ընդարձակ Սահմանադրություն<sup>36</sup>:

Հնդկահայերի համայնքը նախապատրաստվում էր ապագա ազատագրված Հայաստանի պետականության կազմա-

32 Նույն տեղում, էջ 57:

33 Նույն տեղում, էջ 58:

34 Նույն տեղում:

35 Թագ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 271:

36 «Որոգայթի» հրատարակման տարեթվի ճշգրտման վերաբերյալ տե՛ս Թագ. Ավդալբեգյանի արժեքավոր ուսումնասիրությունը՝ «Շահամիր Շահամիրյանն ու հնդկահայոց համայնական ինքնավարությունը 18-րդ դարում», «Հայագիտական հետազոտություններ», էջ 260:

վորման օրինակ դառնալ: Այս հարցի վերաբերյալ հայ մտավորականության շրջանում ծավալվում էր երկու ուղղություն: Հնդկահայ առևտրական բուրժուազիան իրավամբ իր գործունեության հարազատ միջավայր էր համարում բուրժուական սահմանադրության հիմունքներով վերածնված հայրենիքը, իսկ կղերաֆեոդալական շրջանները ձգտում էին ազատագրված Հայաստանում ունենալ կալվածատիրական սեփականության վրա խարսխված միապետական կարգեր: Շահամիրյանի խմբի անդամների միջև որոշ հարցերում կային տարաձայնություններ: Բայց դրանք սկզբունքային չէին, այլ կապված էին ազատագրական պայքարի ծրագրի իրականացման պայմանների հետ: Բանն այն է, որ բոլոր դեպքերում վրացական թագավորությունը, Հերակլի գլխավորությամբ որպես Հայաստանի ազատագրման ծրագրի իրականացման կարևոր լծակներից մեկն էր դիտվում: Այս կապակցությամբ է, որ Հովսեփ էմինի ու Մովսես Բաղրամյանի մոտ հայկական թագավորության վերականգնումը ծրագրային խնդրի բնույթ է ստանում: Հերակլին հղած իր նամակում էմինը գրում է. «Ես ինձ կսեի-գետնին վրայ սողացող մըրջիւնները իրենց թագաւորն ունին, բայց մենք չունինք մերը. բոլոր երկրներու ազգերը կըծաղրին ու կհալածեն մեզ, ըսելով թէ մենք չունինք մեր տէրը, մենք չունինք մեր սեփական թագավորը, ու կընմանինք հրեաներուն՝ աշխարհի վրայ ցան ու ցիր. թէ մենք չենք սիրեր իրար, թէ մենք չունինք պատիւ և մեր ազգային անմիութեամբ բոլոր ազգերի նախատիքի կենթարկուինք. թէ մենք արհամարելի ենք ու անեռանդ. թէ մենք այնքան մոլեռանդ հաւատաւորներ ենք դրամին, որքան հեթանոսներն իրենց շատուածներուն»<sup>37</sup>:

Դրամապաշտության վերաբերյալ էմինի ցասկոտ տողերը ոչ թե առհասարակ վաճառականության դեմ են ուղղված, այլ միայն հայ վաճառականների, որոնք իրենց հարստությունները հայրենիքի ազատագրման գործին տրամադրելու փոխարեն ինքնակամ մահմեդական հարստահարիչ-

37 Հովսեփ էմին, նշված աշխատությունը, էջ 129:

ների գրպանն են լցնում: Իսկ այդ հարստութիւնները ամենատարբեր կարգի աստիճանավորները կողոպտում են «յիմարական յերիւրածոյ պատրուակներով»<sup>38</sup>, գրում է հեղինակը և դայրույթի պոսթկումով կշտամբում հայ վաճառականներին. «Գնացէք ձեր գործին հետեւեցէք ձեր հրեական զբաղումին, պարապեցեք վաճառականութեամբ, մաքս վերցրեք ձեր ապրանքներուն վրայ, համրեցէք գլխահարկը, զոր պիտի վճարէք մահմետականներուն, ձեր դրամը տուէք եկեղեցւոյ սուրբ հայրերուն, խոստովանեցէք անոնց ամէն անգամ որ մեզք գործէք, իսկ անոնք թող արձակեն զձեզ եւ աղօթեն, որպէսզի երկինք երթաք մեռնելէ յետոյ»<sup>39</sup>: Մեջբերման վերջին տողերն ուղղված են հոգևորականների դեմ առհասարակ և մասնավորապես Միմեոն Երեանցի կաթողիկոսի դեմ, որը հայ ազատագրական շարժման Ծահամիրյանի ծրագրի հակառակորդն էր:

Հայ թագավորական իշխանութիւնների ջատագովութիւնը ընդարձակ տեղ է գրավում Մովսես Բաղրամյանի «Յորդորակ»-ում: Հայոց պատմութեան շարագրանքը, որը կազմում է Բաղրամյանի աշխատութեան մեծագույն մասը, բնորոշ է մեր անցյալի իդեալականացումով, որով հեղինակը արմատապես տարբերվում է Ծահամիրյանից: Բայց ապագա ազատագրված Հայաստանի պետական կառուցվածքի հարցերի քննարկման ժամանակ նրանց դատողութիւնների ընդհանրութիւնը ակնհայտ է: Միանձնյա անսահմանափակ իշխանութիւնը Բաղրամյանը նույնպէս համարում է շարիք և երկրի անկախութեան կորստի պատճառներից մեկը: «Ոչ վասն այլ ինչ պատճառացն անկաւ իշխանութիւն մերոց, եթև ոչ նախ՝ ջանալոյն և ձգտելոյն իւրեանց գոլ անձնիշխան իշխանացն մերոց»<sup>40</sup>: Զարիքի արմատը հեղինակը որոնում է մարդու բնութեան, մարդու էութեան մեջ, որն այդ ժամանակաշրջանում առհասարակ հասարակութեան զարգացման հիմքըն ու ելակետն էր համարվում: Բանն այն է, որ «է բնակա-

նապէս ամենայն մարդ սխալական»<sup>41</sup>: Բայց սովորական մարդու սխալը վնասում է միայն սեփական անձին: «Իսկ իշխանին սխալումն ոչ միայն վնաս, այլ և երբեմն հարուածս մեծամեծս՝ և աշխարհաւիրութիւնս բերէ ի վերայ բոլոր ազգին ըստ այնմ, թագատր արդար՝ կանգնէ զաշխարհ, և այր անօրէն կործանէ»<sup>42</sup>: Միևնույն դրույթն, ավելի ընդգծված և առավել լայն ընդհանրացումներով առկա է Ծահամիրյանի մոտ: Ազատութիւնը համարելով մարդու ամենամեծ բարեմասնութիւնը, Ծահամիրյանը մերժում է թագավորական իշխանութիւնը, որը նա բնութագրում է որպէս հակաբնական ու հակաբանական երևույթ: Թագավորը կաշկանդում է մարդու ազատութիւնը, այն ժամանակ, երբ ինքը նույնպէս սովորական մարդ է, «զի ոչ ունի ինքն ընդ իւր ոչինչ յաւելի քան թէ զօրոթիւն միոյ հասարակ առն»<sup>43</sup>: Հեղինակը չի ժխտում, որ մի շարք հայ անվանի թագավորներ իրենց խելամիտ գործունեությամբ մեծ երախտիք ունեն մեր ազգի համար, բայց «և բազումք ի պատճառ խելահեղութեան իւրեանց և անկան և եղեն պատճառ բազում վնասու ի վերայ տան Հայոց»<sup>44</sup>: Թագավորների խելամիտ գործունեութեան նշումով Ծահամիրյանն ամենևին նպատակ չունի ինչոր չափով արդարացնելու թագավորական իշխանութիւնների գոյութիւնը: Նրանց տված «շահավետութիւնն բարձրացաւ միայն մինչև զարշապարն, այլ վնասն էհաս ի զլուխ»<sup>45</sup>, գրում է նա, և եզրակացնում, որ ժողովրդի բախտն այլևս երբեք չպետք է հանձնել «ի կամաց միոյ ինքնակալ բարբարոսէ»<sup>46</sup>:

Երկրի կառավարման միակ կատարյալ ձևը Ծահամիրյանը համարում է հանրապետութիւնը, իսկ Բաղրամյանի մոտ առաջադրվում է սահմանադրական միապետութիւնը:

38 Նույն տեղում, էջ 81:

39 Նույն տեղում, էջ 442:

40 Մովսէս Բաղրամյան, նշված աշխատութիւն, էջ 158:

41 Նույն տեղում:

42 Նույն տեղում, էջ 159:

43 Շ. Ծահամիրեան, Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, էջ 19:

44 Նույն տեղում, էջ 16:

45 Նույն տեղում, էջ 35:

46 Նույն տեղում, էջ 21:

«Լինել իշխանութեան ոչ է մարթ ի ձեռն մի միայն միոյ ուրուք դատողութեան և կառաւարութեան. այլ՝ առաւել ևս լինի բարեգոյն, եթէ յաւէտ իշխանութիւն գուցէր կախեցեալ անխախտելի սահմանադրութեամբ և անեղծանելի օրինօք ընտիր ընտիր ի մեծամեծ խորհրդականաց»<sup>47</sup>: Երկրի կատարյալ կառավարությունն ու բարեկարգ արդյունավետությունը կարելի է ապահովել միայն խելացի սահմանադրական օրենքների մշակումով և դրանց անշեղ կենսագործման միջոցով: Էմինը համոզված լինելով, որ երկրի կառավարման կատարյալ օրենքները գործում են Անգլիայում, որոշեց «երթալ Անգլիա տեսնելու համար իմաստուն օրենքներու և օգտակար կանոններու եվրոպական հրաշալի դրությունը»<sup>48</sup>:

Այդ օրենքներ կիրառող պաշտոնյաներից է կախված երկրի բախտը, որովհետև «նոր պետութիւն մը շնորհալի լամբարի կնմանի: Իմաստուն պաշտօնեաներ պետք է հսկեն, որ պահպանեն անոր լոյսը»<sup>49</sup>: Այդ շնորհալի լամբարի՝ պետութեան մեջ իշխում է բուրժուական հավասարութեան սկզբունքը, որտեղ «պատշաճ օրենքներով կը կառաւարուին, նոյն արդարութեամբ, թէ հարուստ եւ թէ աղքատ»<sup>50</sup>: Երկիրը կառավարող մարմինների հիմնական խնդիրը պետք է լինի երկրի պաշտպանունակութեան ամրապնդումը: Իսկ դրա համար անհրաժեշտ է նախ քայքայված երկիրը հարստացնել: Էմինին հայտնի է, որ հարստութեան աղբյուրը նյութական արտադրութեանն է, ուստի և նա կոչ է անում բնակչութեանը վարժեցնել ճարտարվեստներին<sup>51</sup>: Բայց էմինը միաժամանակ խոստովանում է, որ խնդրի կենսագործման ուղիները հայտնի չեն իրեն, ավելի ճիշտ ինքը չի գրառվել այդ խնդրի մանրամասների քննութեամբ, մի բան, որին հետագայում ձեռնամուխ է լինում Շահամիրյանը:

47 Մովսես Բաղրամյան, նշված աշխատություն, էջ 161:

48 Հովսեփ Էմին, նշված աշխատություն, էջ 8:

49 Նույն տեղում, էջ 7:

50 Նույն տեղում, էջ 175:

51 Նույն տեղում, էջ 198—199:

Միայն բուրժուական հանրապետութեան մեջ կարող են մշակվել մարդկային բնութեանը համապատասխան օրենքներ, որոնց հիման վրա և պետք է վերակառուցվի ապագայում ազատագրվող Հայաստանի հասարակական կյանքը: Այդ օրենքների անշեղ կենսագործումը պարտադիր է հասարակութեան բոլոր անդամների համար: Պետք է ընտրել «օրէնս բարիս՝ ըստ կամաց և ըստ հաճոյից համահավասար ժողովրդոց ի զօրութենէ բնական հոգոյ ձերոյ՝ կալ և մնալ ձեզ կախեալ ըստ օրինաց ձերոց, զի ոչ ոք իցէ որ իշխեսցէ ի վերայ ձեր, քայց օրէնս ձեր, որում դուք կազմէք նա թագավորեսցէ և իշխեսցէ ի վերայ գործոց ձերոց»<sup>52</sup>: Այդ օրենքների հիմնական խնդիրը պետք է լինի անձի ազատ տնտեսական գործունեութեան և նրա ունեցվածքի անձեռնմխելիութեան պաշտպանութեանը: Արարատյան աշխարհը լի է ամեն տեսակի բարիքներով, գրում է հեղինակը, անհրաժեշտ է միայն օրինական կարգեր սահմանել և ապահովել բարեկեցիկ կյանք:

Շահամիրյանը գիտեր, որ բնութեան բարիքները աշխատանքի շնորհիվ են միայն հարստութեան դառնում: Նա աշխատանքը համարում է մարդու բնածին մի առանձնահատկութեան, իսկ վերջինս հանդես է գալիս որպես հասարակութեան առաջընթացն ապահովող ստեղծագործական ուժ. «բնականապէս սովորութիւն է ի բնութիւնս մարդոյ ջանալ, աշխատիլ, վաստակիլ զի գտանիցէ այն որ յինքն թափօր ի նմանէ»<sup>53</sup>: Մարդկանց ստեղծագործական աշխատանքի համար, սակայն, անհրաժեշտ են նաև համապատասխան նպաստավոր հասարակական պայմաններ: Օրենքի ուժով պետք է պաշտպանվի աշխատելու և աշխատանքի արդյունքները տնօրինելու մարդու անկապտելի իրավունքը: «Եւ ոչ ոք կարիցն մերձենալ նմայ և մազ մի գլխոյ ձերմէ մի պակասեսցի, և ոչ ոք կարող լինեցի ձգել ձեռս իւր ընդ մին հակիթն ձեր և ամենեքեան մնացուք տէր ստացուածոց ձերոց»<sup>54</sup>: Նման խաղաղ պայմաններում մարդիկ կաշխատեն ըստ

52 Շ. Շահամիրեան, Որոգայթ փառաց, էջ 21:

53 Նույն տեղում, էջ 104:

54 Նույն տեղում, էջ 105—106:

իրենց նախասիրութիւնների և ունակութիւնների, որոնցով «մեք ի մէնջ մեր գտանիլ կարենամք ամենայն հարկաւորութիւն կարեաց մերոց»<sup>55</sup>:

Քննարկելով երկրի դժբախտութեան պատճառները, Բաղրամյանը դրանցից մեկը համարում է ծուլութիւնը: «Ի ծուլութիւնէ պղերգութեան վեհերոտ և վաղարկող մշակացն և երկրագործացն, որք յօգտաւէտ արիութեանց լքեալ և թափեալ իսպառ թուլլ էտուն զարտորայս և զանդաստանս իւրեանց ամայանալով, խոսպանանալով և սմբակակոխ լինել կեր և կուր արջոց և վարաղից»<sup>56</sup>, գրում է հեղինակը և ավելացնում. «Զի ծուլութիւն է բտիչ՝ կամ բուծիչ. այսինքն սնուցիչ ամենայն մեղաց, և դատարկաբանութեան մայր»<sup>57</sup>: Աշխատասիրութիւնն ու աշխատունակութիւնը նա համարում է հասարակութեան բարեկեցութեան աղբյուր: Այն միաժամանակ և մարդու օրգանիզմի բնականոն կենսագործունեութեան պայմանն է. «Ոչ միայն արդիւնաւէտութեան է օգուտ գործոց վաստակն, այլև անձի առողջութեան»<sup>58</sup>, գրում է Բաղրամյանը: Երեխայի մեջ աշխատասիրութիւնը պետք է ամենավաղ մանկական հասակից պատվաստել «գործեալ յորդորեցէք բանիւ զմանկունս ձեր,— գրում է նա,— զի կրթեալ մարդից ջանիւք գուցեն ցանգ մին քան զմիւսն աշխատասէր»<sup>59</sup>:

Աշխատանքի հասարակական բաժանման համակարգում մարդկանց առանձին խմբերի աշխատանքի արդյունքների փոխանակութիւնը հասարակական արտադրութեան զարգացման և մարդկանց անձնական սպառման պահանջների բավարարման անհրաժեշտ պայմանն է: Փոխանակային հարաբերութիւնները կարգավորվում են համապատասխան շահամիտութիւնների օգնութեամբ, առանց որի հասարակական կյանքի երևույթների ճշգրիտ քանակական բնութագրութիւնն

անհնարին է: Բայց առօրյայում օգտագործվում են բազմաթիւ գավառաբարբառներ, որոնք դժվարացնում են անհրաժեշտ միասնականութեան սահմանումը: Կապիտալիստական հարաբերութիւնները իրենց զարգացման ընթացքում, սակայն, ինչպես ամենուրեք, այստեղ ևս վերացնում են ամեն կարգի տեղական արգելքներ և սահմանափակումներ, և Շահամիրյանը պահանջում է հայ մտավորականներից՝ ստեղծել «ամենայն անուանք շափ և կշիռ մերոյս բառիս և լոյս ածցէ վասն հեշտութեան ազգին իւրոյ յիշատակ նորա գրուեսցի պատուելի ընդ մեջ մեր... երախտիս նորա մի մոռանայցեն մինչև յաւիտեան»<sup>60</sup>:

Գեռ տասնամյակներ առաջ այդպիսի մի հանրօգուտ գործ էր կատարել Ղուկաս Վանանդեցին, Ամստերդամում հրատարակելով իր «Գանձ շափոյ, կշռոյ, թւոյ եւ դրամից բոլոր աշխարհի, որ է գիտութիւն ամենայն տեսակ կշռոց, շափոց և դրամից, որով բոլոր աշխարհի վաճառականութիւն վարի» աշխատութիւնը: Այս փոքրածավալ աշխատութիւնը հետապնդում է բացառապես գործնական նպատակ, այն է՝ հայ վաճառականներին ծանոթացնել զանազան երկրների շափ ու կշիռների, դրամների գործող միավորների արժեքային բովանդակութեան հետ: Գրքի «Պատմութիւն վաճառականութեան» գլխում շարադրվում են աշխարհի տարբեր երկրների շուկաներում ապրանքների քանակի, գների, մաքսի շափերի, առևտրի պայմանների, արտոնութիւնների վերաբերյալ գործնական տեղեկութիւններ, որոնք կարող են օգտակար լինել հայ վաճառականների համար: Հեղինակի աշխատութիւնը լոյս է տեսել մերկանտիլիզմի ժամանակաշրջանում, երբ առևտուրը համարվում էր տնտեսութեան ամենաօգտակար ճյուղը և փառաբանվում էր որպես արդար բնագավառ: Այս մտայնութիւնը արտահայտվել է նաև Ղուկաս Վանանդեցու գրքուկի առաջաբանում, որտեղ ասված է «Երանելի է յամենայն ազգաց մարդն այն, որ միշտ՝ և յամենայնուրեք զմտաւածէ՝ և ի կիրարկանէ զայն բնածին, և

55 Նույն տեղում, էջ 106:

56 Մովսէս Բաղրամյան, Նշված աշխատութիւն, էջ 165:

57 Նույն տեղում:

58 Նույն տեղում:

59 Նույն տեղում, էջ 44:

60 Շ. Շահամիրեան, Որոգայթ փառաց, էջ 116:

ամենայն կրօնից ընդունելի կանոնն. Չոր քեզ լինի ոչ կամիս, այլոց մի առնեւ. և զոր ինչ քեզ կամիս՝ այլոց ևս արա»<sup>61</sup>: Տարօրինակ է, երբ Վանանդեցին չի տեսնում, որ այն մարդիկ՝ «Հայազուն վաճառասէր եղբայրս», որոնց ուղղրված է գրքուկի առաջաբանը, մտածում են բոլորովին այլ կերպ և գործում ճիշտ հակառակ սկզբունքներով:

Ֆեոդալական միապետության Շահամիրյանի քննադատությունը և բուրժուական հանրապետության փառաբանությունը հայ իրականության մեջ այն ժամանակաշրջանում, անշուշտ, խոշոր առաջադիմական քայլ էր: Բայց այդ քննադատությունը, ինչպես բուրժուական լուսավորիչների պատմափիլիսոփայությունն առհասարակ, հակապատմական, մետաֆիզիկական էր: Ֆեոդալական կարգերը դիտվում էին որպես մարդկային բնությանն անհամապատասխան համակարգ և հասարակության զարգացման բնականոն ընթացքից կատարված պատահական շեղում: Հասարակության զարգացումը իրական հունի մեջ է մտնում բուրժուական հարաբերությունների հաստատման ժամանակներից միայն, որոնց կատարելատիպը համարվում էր բուրժուական հանրապետությունը: Այդ հանրապետության Սահմանադրությունն է, որ իր բոլոր մանրամասներով մշակված է Շահամիրյանի կողմից և որի սկզբունքներով պետք է վերակառուցվեն ապագայում ազատագրված Հայաստանի տնտեսական ու քաղաքական կարգերը:

Այս ծավալուն գրական կոթողը անգնահատելի աղբյուր է XVIII դարի երրորդ քառորդի հայ առաջավոր հասարակական, քաղաքական հոսանքի ներկայացուցիչների սոցիալ-տնտեսական հայացքների բնութագրության համար: Հասարակության տնտեսական և քաղաքական ընդհանուր կառուցվածքի հետ միաժամանակ այստեղ հանգամանորեն քննարկված են սեփականատիրական հարաբերությունները, պետության ներքին և արտաքին տնտեսական քաղաքականության, արտադրության, առևտրի և դրամաշրջանառության կազմա-

կերպման խնդիրները, ընտանեկան առնչությունները, որոնք հարուստ նյութ են պարունակում բնակչության վերարտադրության հարցերի լուսաբանման տեսակետից:

Ապագա Հայաստանի հանրապետական կարգերի հիմքը մասնավոր սեփականության վրա հիմնված քաղաքացիների արտադրատնտեսական գործունեության ազատությունն է: Հայաստանում ծնված բոլոր մարդիկ առանց ազգության և սեռի խտրության իրավահավասար քաղաքացիներ են. «Ոչ ոք իցէ որ իշխեսցէ ի վերայ ոչ ումէք, բայց գործս ձեռաց իւրեանց վարձատրեսցի ըստ իւրաքանչիւր գործոց ըստ օրինաց Հայոց»<sup>62</sup>:

Մարդկանց գործունեությունը ծավալվում է ընդունված օրինականության սահմաններում. քաղաքացիները իրենց ունեցվածքի լիիրավ տերն են ու տնօրենը՝ պետության նկատմամբ իրենց պարտավորությունները կատարելու պայմաններում. «Ամենայն բնութիւն մարդոյ ի երես երկրին Հայոց եթէ ի հաւատացեալ Քրիստոս և եթէ անօրին կայցէ և մնացէ ազատապէս տէր և թագաւոր ի վերայ ընչից իւրոյ միայնակ հնազանդելով օրինացն Հայոց և հատուցանելով հարկ, մաքս, հաս և այլն ըստ օրինօք առ տունն Հայոց»<sup>63</sup>:

Լինելով առևտրական բուրժուազիայի գաղափարախոսության ներկայացուցիչներ, Շահամիրյանի խմբի անդամները գերազանցապես մտահոգված են շրջանառության ոլորտի հարաբերությունների կարգավորման խնդիրներով: Սահմանադրությունը երաշխավորում է ներքին առևտրի լիակատար ազատություն: Ըստ որում, առևտրի առարկա կարող են լինել հողը, նրա ընդերքը, շարժական և անշարժ ունեցվածքը իր բոլոր ձևերով հանդերձ: «Ամենայն մարդ կարող է վաճառել ստացուածս իւր բաց ի բնութիւն մարդկանց»<sup>64</sup>: Միայն մարդը չի կարող գնման և վաճառքի առարկա լինել, քանի որ Սահմանադրությունը կտրականապես մերժում է ստրկատիրությունը և ճորտատիրությունն առհասարակ:

62 Շ. Շահամիրեան, Որոգայթ փառաց, էջ 142:

63 Նույն տեղում, էջ 145:

64 Նույն տեղում, էջ 252:

61 Ղուկաս Վանանդեցի, Քանձ չափոյ..., Ամստերդամ, 1699, էջ 5:

Ուշագրավ է, որ թույլ է տրվում հողը վաճառել միայն քրիստոնյաներին: Ամեն հայ քրիստոնյա «կարող է գնել երկիր վասն ժառանգութեան իւրոյ և վաճառել երկիր ումէք առն ի նոյն ազգէ և դաւանութեան»<sup>65</sup>: Հողամաս զնողը դառնում է նաև հողի ընդերքի ժառանգական սեփականատերը: Միևնույնն է ասված նաև տան, խանութի և այլ անշարժ կայքի վարձակալութեան մասին: Այս սահմանափակումը թեպետև չի պատճառաբանվում, սակայն դժվար չէ կոահել, որ այլադավանների, հատկապես մահմեդականների, մոտ ազգային հարստության կենտրոնացումը ցանկալի չէր կարող լինել նոր կազմակերպված ազգային հանրապետության համար ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական նկատառումներով: Հեղինակը չի բավարարվում միայն փոխանակային գործարքների սոսկ բնութագրությամբ: Սահմանադրության մեջ բերվում են վաճառքի, փոխադրման, գրավդրման փոխառության և բազմապիսի այլ պարտավորագրերի օրինակները՝ դրանք կազմելու և վավերացնելու մանրամասնություններով: Հատկապես ծավալուն են դրամաշրջանառության կարգավորմանը վերաբերող հարցերը: Կապիտալիստական հասարակարգում բոլոր տեսակի տնտեսական հարաբերություններն ընդունում են ապրանքային կերպարանք. դրանց բնականոն զարգացման հիմնական պայմաններից մեկը համարժեքային փոխանակությունն է: Ապրանքային զանգվածների շարժումը արտադրության և շրջանառության ուղորտներում իրականանում է դրամաշրջանառության միջոցով: Հետևաբար կապիտալիստական վերարտադրությունը արդյունավետ ընթացք կարող է ունենալ լիարժեք ստանդերի գործածության պայմաններում միայն: Դրամաշրջանառության հարցը քննարկվում է բազմակողմանիորեն: Նախ, սահմանվում է որոշակի մետաղյա պարունակություն ունեցող գների մասշտաբ. «Դահեկան հայոց տպեցեալ ի վերայ ոսկոյ, երծաթոյ, կապարի և ի վերայ պղնձոյ, ըստ իւրաքանչիւր աս-

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 194:

տիճանի և ծանրութեան կշռոյ այսինքն որպէս ի վայր»<sup>66</sup>: Այնուհետև, խստագույն պատժի սպառնալիքով արգելվում է դրամանեղութեամբ. «Ով ոք որ առանց հրամանի իշխանութեան տպեցի դրամս եթէ արծաթի և կամ պղնձի և այլն մահու մեռցի»<sup>66ա</sup>, իսկ կեղծված դրամների հայտնաբերման դեպքում համապատասխան մարմիններին անհրաժեշտ է հետամուտ լինել և գտնել դրամանեղներին: Այդ գործում պետք է ակտիվ օգնություն ցուցաբերի նաև հասարակությունը: «Որում ձեռի գոցի ստատիպ դրամ եթէ ոսկոյ եթէ արծաթոյ և կամ պղնձի և կապարի պարտ է նա ցուցանել թէ յումեքի ստացաւ և որում պատճառի եմուտ ի ձեռն իւր»<sup>67</sup>: Քաղաքացիները իրենց ձույլ մետաղազանձերը, սահմանված վարձատրությամբ, կարող են ստակահատել համապատասխան պետական հաստատություններում. «Ամենայն ոսկի, երծաթ, պղինձ, կապար ով ոք որ մուծցէ ի տիպ դահեկանի, ծախ և վարձ տպելոյ հատուցանել պարտ է մի հազարին երկուկես»<sup>68</sup>:

Միջին դարերին բնորոշ տոկոսաբեր կապիտալի նկատմամբ բացասական վերաբերմունքի հետքն անգամ չի երևում Սահմանադրության մեջ:

Ապրանքային կապիտալի շրջապտույտի հետ միաժամանակ փոխառությունը նույնպես տնտեսական կյանքի զարգացման կարևորագույն պայման է համարվում, կարգ է սահմանվում մուրհակների շրջանառության ու փոխատվական տոկոսի զանձման վերաբերյալ: «Վարձս դրամոյ առանց վտանգի շահեցուցանելով մի լիցի աւելի շահ քան թէ ի մի հարիւրին տարեն վեց»<sup>69</sup>: Դեռ ավելին, «Նշաւակ»-ում ասված է, որ պետության ազատ միջոցների մեծ մասը պետք է օգտագործվեն փոխառվական կապիտալի ձևով՝ տարեկան 8 տոկոսի հատուցմամբ: «Որքան դրամ որ հաւաքեցի ի սըն-

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 301:

<sup>66ա</sup> Նույն տեղում, էջ 384:

<sup>67</sup> Նույն տեղում, էջ 295—296:

<sup>68</sup> Նույն տեղում, էջ 379—380:

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 252, տե՛ս նաև մուրհակի օրենքով սահմանված տեքստը՝ էջ 211—212:

դուկն որբոց մերոց երկու իերից մասանց վաշխի տացեն 100-ին տարեն 8»<sup>70</sup>: «Սնդուկն որբոց»-ը փաստորեն հնդկահայ համայնքի գանձարանն էր՝ այսինքն ապագա Հայոց տան պետական բանկը:

Համարժեքային փոխանակության կանոնները լիարժեք ստակների հետ միաժամանակ պահանջում են օրենքով հաստատագրված չափակշիռների օգտագործում: Ապրանքային զանգվածների քանակական որոշակիությունը արժեքային հարաբերությունների արտահայտման ձևն է:

Այդ ձևերը տեսանելի ու շոշափելի են դառնում ծանրության, երկարության, ծավալային չափամիավորների միջոցով միայն: Այս բնագավառում կատարված խախտումները նույնպես խափանում են համարժեքային փոխանակությունը, անկանոնություններ առաջացնում երկրի տնտեսական կյանքում ընդհանրապես: Ուտի օրենքը դրամանենգության հետ միասին հետամուտ է լինում նաև չափակշռային միավորների զեղծումներին ծանրության և երկարության չափամիավորները հաստատագրվում են և կնքվում պետական կնիքով: «Ամենայն ծանրութիւն կշռոց, չափս չափելոյ և չափարան պարտ է կնքել ի կնքաւ իշխանութենէ ի ամենայն տարուջ համահաւասար գտեալ ըստ օրինաց, բառնալով յաւելորդութիւն և պակասութիւնքն նոցին»<sup>72</sup>: Օրինականացված չափամիավորների խախտումը որակվում է որպես պետական ծանր հանցագործություն:

«Ամենայն ոք որ գողանասցի ի ծանրութենէ կշռոյ հրացեալ երկաթիւ փափուկ միսն նորա կիզեսցի, մինչև այրն այն ընբունեսցի կիզեսցեալ երիս անգամս շորս երրորդի մեոցի»<sup>73</sup>:

Պետությունը իր տնտեսական և քաղաքական գործունեությամբ պետք է մեծապես նպաստի առևտրական հարաբերությունների անկաշկանդ զարգացմանը: Օրենքը երաշ-

խավորում է առևտրական, արդյունագործական և այլ բնույթի պայմանագրային հարաբերությունների լիակատար ազատություն<sup>74</sup>: Առևտրականներին իրավունք է տրվում «Բանալ շուկայն ի փողոցս քաղաքին վաճառելով զամենայն զոր ինչ կերակուր, զգեստ, ոսկի, երծաթ և ամենայն հրահայելիք և ակունք և ամենայն սերմ և բանճար խոտոյ մինչև փայտ պահելով զիրն և զինչս իր ի ներքոյ սահմանին հայոց հատուցանելով հարկ և մաքս և այլն»<sup>75</sup>: Սահմանադրության բաղմաթիվ գլուխներ նվիրված են առևտրական հարաբերությունների կարգավորման խնդիրներին:

Երկրի ներքին առևտրի և դրամաշրջանառության բնագավառում, ինչպես պարզվում է, սահմանափակումներ գրեթե չկան, որովհետև Սահմանադրության հեղինակը իրավամբ համոզված է, որ ազատ փոխանակային հարաբերությունները մեծապես նպաստում են տնտեսական կյանքի արագ զարգացմանը: Բայց արտաքին առևտրի հարցերի քննարկման ժամանակ նրա դիրքորոշումը փոխվում է: Ոսկու և արծաթի առկա քանակը համարելով երկրի հարստության չափանիշ, մեր մերկանտիլիստը հատուկ կանոններ է սահմանում դրանց արտահանման և ներմուծման համար:

Ոսկյա և արծաթյա դրամ երկրից դուրս տանելու դեպքում պետք է պարտավորագիր տալ 30 տոկոս ավելցուկով այդ գումարները երկու տարվա ընթացքում ներմուծելու համար: Այս պայմանով առևտրականը «Գտցէ արձակոթիւն հանելոյ որքան որ կարող գտանի»<sup>76</sup>: Հատուկ պարտավորագրի բացակայության դեպքում արտահանումը չի արգելվում, բայց վաճառականը «պարտաւոր է հատուցանել տանն հայոց մի ի երից բաժնոյն հանելով երկուս բաժինս տարցէ ուր և ինքն կամիցի»<sup>77</sup>: Իսկ ներմուծումը խրախուսվում է կառավարության կողմից և ազատվում «հարկից և մաքսից»<sup>78</sup>:

74 Նույն տեղում, էջ 219—221, 231—233:

75 Նույն տեղում, էջ 238:

76 Նույն տեղում, էջ 263:

77 Նույն տեղում, էջ 365:

78 Նույն տեղում:

70 Ե. Շահամիրեան, Տետրակ որ կոչի նշուակ, էջ 23:

71 Ե. Շահամիրեան, Որոգայթ փառաց, էջ 246—247:

72 Նույն տեղում, էջ 379:

73 Նույն տեղում, էջ 384:

Ապրանքների արտահանումը կատարվում է առանց սահմանափակումների, բացառությամբ ոսկյա և արծաթյա իրերի ու զենքի: Դրանց վաճառքը օտար երկրներում ոչ թե սահմանափակվում է օրենքով կամ բարձր հարկադրույքներով, այլ կտրականապես արգելվում է<sup>79</sup>:

Սահմանադրության այս հոդվածներում փողային ֆետիշիզմի ազդեցությունն արտահայտվել է որոշակի պարզությամբ: Եթե զենքը երկրի ռազմական հզորության շահանիշն է, ապա ոսկին և արծաթը երկրի հարստության հիմքն են համարվում: Հետաքրքիր է, որ Շահամիրյանը ճիշտ բնութագրելով փողային ֆետիշիզմի էությունը, դատապարտում է այն որպես մարդու ազատությանը և բանականությանը խորթ, անհարիր երևույթ:

«Շնոր ազատութեան և բանականութեան մերոյ ոչ հարկավորի ոչ գանձ ոչ ոսկոյ, ոչ արծաթոյ և կամ ականց պատուականաց, վասնզի սոքա ամենեքեան պատճառ են անօրինաց անիրաւանալոյ, ստախօսից կաշառօք արդարանալոյ, անարժանից պաշտոն գտանելոյ, ծերոց ընդ կուսի ամուսնանալոյ»<sup>80</sup>: Հեղինակը այն ներքին համոզումն ունի, որ իր փառաբանած ապագա Հայաստանի բուրժուական հանրապետության մեջ պետք է «ազատութիւն բնական բնութեան մերոյ միշտ փայլի ի մէնջ ամենայն ժողովրդոց մեծաց և փոքունց»<sup>81</sup>, այն ժամանակ, երբ այդ բուրժուական իրականությունն արդեն նրան ցույց է տվել, որ փողը մարդկանց բոլոր «բնական» բարեմասնություններն ու արժանապատվությունները դարձրել է գնման ու վաճառքի առարկա: Ինքը Շահամիրյանը այդ փողային ֆետիշիզմի ազդեցության տակ է արգելում ոսկու և արծաթի արտահանումը, կարծելով թե երկիրը դրանից կաղքատանա: Ինչպես պարզվում է, ազնիվ մետաղների արտահանման հարցում Շահամիրյանը գտնվում է մերկանտիլիստների մոնետար խմբի ներկայացուցիչների ազդեցության ներքո:

79 Նույն տեղում, էջ 262:

80 Նույն տեղում, էջ 71:

81 Նույն տեղում:

Բայց երկրի հարստության հարցը նա քննարկում է բազմակողմանիորեն և ամենևին չի կապում միայն արտաքին առևտրի հետ: Սահմանադրության մեջ պատշաճ տեղ է հատկացված երկրի բնական հարստությունների արդյունավետ օգտագործման, արտադրության ճյուղերի և արհեստագործության զարգացման խնդիրներին:

Հանքային հանածոների ազատ օգտագործման միակ պայմանը պետությանը հասանելիք տասնորդի վճարումն է: Տասնորդ եկամտահարկը ամենատարածված շահանիշն է արտադրական և առևտրական զբաղմունքի բազմապիսի ճյուղերի համար<sup>82</sup>:

Նկամտահարկի այս ցածր դրույքը նպատակ ուներ խրախուսել բնակչության տնտեսական գործունեությունը, նպաստավոր պայմաններ ստեղծել արտադրողական ուժերի արագ զարգացման համար: Արհեստագործությունը որպես հայոց աշխարհի շենության և շահավետության միջոց ոչ միայն փառաբանվում է, այլև խրախուսվում պետության օգնությամբ ու օժանդակությամբ: «Օգնութիւն ի տանէ հայոց լիցի ի վերայ ամենայն արհեստաւորի»<sup>83</sup>: Արհեստների զարգացման ու կատարելագործման համար սահմանվում են մեծ գումարի պետական պարգևներ: Կարմիր որթն (ներկ), լեղակ, լոնդրապատրաստելու, «բեգոաս, մահուդ ըստ կերպին և նմանութեամբ երոպացւոց» գործելու համար սահմանվում է 10000-ական դահեկան դրամական պարգև<sup>84</sup>:

Նյութական բարիքների արտադրության այս առատաձեռն խրախուսումը հարստության մեծացման հետ միաժամանակ նպատակ ուներ ապահովել ու ամրապնդել ազգային միասնությունը: Հեղինակն այն համոզումն ուներ, որ հարուստ ու շեն երկիրն ավելի դյուրին է կառավարել, երբ մարդիկ զբաղված են խելամիտ տնտեսական գործունեությամբ և փոխադարձորեն կապված միմյանց հետ: Այս տնտեսական

82 Նույն տեղում, էջ 329, 330, 365, 366, 368—372:

83 Նույն տեղում, էջ 253:

84 Նույն տեղում, էջ 395:



միասնությունը նա ինքնին դիտում է որպես ազգային ընդհանրության կայուն հիմք:

«Նշաակում» այս առթիվ ունենք հետևյալ ուշագրավ տողերը. «Իմաստություն և արհեստ շէն առնէ յաշխարհ, այլ կարգադրութիւնք ի վերայ գործողաց հանգուցանէ աշխատողաց ի ծանրայրեռնութենէ լծոյ բնութիւնն ամենայն մարդոյ շարժի և դորձէ իւրաքանչիւր մտօք, այլ կարգադրութիւնք կառուարէ ամենայն շարժմունս մարդոյ առ ի գործս բարիս և արասցէ բոլոր յազգի ընդ ամենայն շարժմունս իւրաքանչիւր արհեստի իբր մի հօտ, և մի կամ, և մի ներգործութիւն, և տա յանդորութիւնս մտաց գործողաց և հաստատութիւն վարձոյ գործոց իւրաքանչիւր ձեռաց իւրոց»<sup>85</sup>: Շահամիրյանի մոտ ընդգծված է գերազանցապես նյութական հարստության կարևորությունը: Այս առումով տարեբային մատերիալիզմի տարրերը ընդգծված ձևերով են արտահայտվում: Մարդն օժտված է բազում շնորհներով, գրում է Շահամիրյանը, «այսինքն ազամանքն տաշելով, յոսկին շինելով աշտանակս, տախտախ տաշելով, երկաթն սրելով, և այլն, նաևս մարդն ուսանալով դանաղան արհեստ իմաստութեան, եթէ ազատական, բժշկութիւն, երաժշտութիւն, փիլիսոփայութիւն, երկաթագործութիւն, ձկնորսութիւն և այլ սովաւ լցաւ յերկիր փառօք Յաստուածային ամենակարող արարողին մերոյ»<sup>86</sup>:

Նույնը չի կարելի ասել խմբի մյուս անդամների մասին: Էմինի և Բաղրամյանի համար բնորոշ է բուրժուալուսավորական իդեալիստական աշխարհայացքը: Էմինը ֆանատիկորեն համոզված է, որ հասարակական առաջընթացի հիմքը գիտուն և լուսավոր ազգերի օրենքներն են: Ես եկա Անգլիա, գրում է Էմինը, որ իմաստություն ստանամ, աշխարհ ճանաչեմ իմ ազգին կատարյալ ծառա լինելու համար: «Լաւն ու վատը կարելի է գտնել ամեն երկրի մեջ, — գրում է նա, — բայց հոն, ուր ուսումը առարկա է ատելութեան եւ բանտուածանգութ տգիտութեան մթին զնտանին մէջ. մարդիկ մեղա-

դրելի շեն, եթէ մինչև իսկ նմանին վայրի գաղաններուն եւ պատառեն զիրար»<sup>87</sup>: Էմինը դիտությունը և ազատությունը համարում է անբաժանելի: Դրանց միասնության կարևորությունն ընդգծելու նպատակով նա այդ հասկացությունները գրում է զխատառերով: Էմինը գրում է, որ «Ես չէի կրնար հանդուրժել անասունի այդ կեանքին, առանց Ազատութեան, առանց Գիտութեան»<sup>88</sup>, և հակառակ հոր կամքին լքում է հայրական օջախը:

Շահամիրյանը ազգի միաբանության հիմքը նյութական բարիքների հարստությունն է համարում, իսկ Բաղրամյանը՝ գիտությունն ու իմաստությունը: Թվարկելով մեր ժողովրդի դժբախտության պատճառները — նա շարունակ ընդգծում է լուսավորության կարևորությունը: «Զնոյն՝ որ տգիտութեամբ կորուսաք, հարկ լիցի ի վերայ մեր յայսմհետէ, և ամենայն բնութիւն զայն հորդորեսցէ, զի իմաստութեամբ և արիութեամբ վերստին ստացուք»<sup>89</sup>: Տգիտությունը ծնում է մեծամտություն, որը և գծտության և անմիաբանության արմատն է: «Ոչ միայն կամակորիլ և կալ հեստութեամբ ի համառեալ կամս մեր՝ ընդիմանալով մերոց իշխանաց և առաջնորդաց, այլ և զօրինօք անցանել և այլոց ուսուցանիլ նշաակութեամբ»<sup>90</sup>: Իսկ դրա համար անհրաժեշտ է գիտություն ու բարձր կուլտուրա, որովհետև «իմաստութիւնն է ամենահարուստ, և իրաւարար ի դատաստանի»<sup>91</sup>:

Դարերի ընթացքում թուրքական ու պարսկական բռնակալների կողմից կողոպտված և ավերված երկրի արտադրողական ուժերի զարգացման համար խոշոր կապիտալ ներդրումներ էին պահանջվում, իսկ հայ առևտրական բուրժուազիայի միջոցներն, անշուշտ, աղքատիկ էին: Ուստի և Սահմանադրությունը ապագա ազատագրված Հայաստանում արտասահմանյան կապիտալի համար ազատ և արտոնյալ պայ-

85 Ե. Շահամիրեան, Տետրակ որ կոչի նշաակ, էջ 74:

86 Նույն տեղում, էջ 73:

87 Հովսեփ Էմին, նշված աշխատություն, էջ 440:

88 Նույն տեղում, էջ 72:

89 Մովսես Բաղրամյան, նշված աշխատություն, էջ 53:

90 Նույն տեղում, էջ 167:

91 Նույն տեղում, էջ 178:

մաններով գործելու լայն հնարավորություններ է ստեղծում: «Ամենայն օտարական եթէ հաւատացեալ ի Քրիստոս եթէ անօրէն ազատապէս կարէ մտանել աշխարհս հայոց ազատապէս պաշտել զաստուած իւր, ըստ սովորութեան իւրոյ հատուցանելով հարկ և մաքս և պատիւ, և ընդունել զատաստան ըստ օրինօք հայոց ի վերայ գործոց իւրոյ, և կրկին եթէ կամի ելանել ստացուածօք իւրօք աշխարհն իւր որում ժամանակի որ ինքն կամեսցի հատուցանել պարտէ տասանորդ ստացուածոց իւրոց, և մնացորդն ազատ լինի հանելոյ ուր որ ինքն կամեսցի»<sup>92</sup>: Ինչպես պարզվում է, օտար և հայրենի ձեռնարկատերերի համար արտադրություն կազմակերպելու և հարստանալու պայմանները նույնն են:

Դեռ ավելին, եթե հայերի համար ազնիվ մետաղադրամների արտահանումը սահմանափակվում է, իսկ ոսկյա և արծաթյա իրերի արտահանումը կտրականապես արգելվում, ապա օտարականների համար ասվում է, որ ցանկացած դեպքում նրանք կարող են վերադառնալ իրենց երկիր և տանել իրենց ամբողջ ունեցվածքը, այդ թվում, անշուշտ, նաև դրամն ու ոսկեղեն գանձերը:

Այս «օտարասիրության» կոնկրետ բովանդակությունը ավելի որոշակի է դառնում, երբ պարզվում է արտասահմանից ներմուծվող ապրանքների նկատմամբ ունեցած հեղինակների վերաբերմունքը: Նրանք ներմուծվող զգեստների օգտագործումը որակում են որպես «սնտի պարծենկոտություն» և առաջարկում այդպիսի սնապարծ քաղաքացիներին տուգանել տարեկան 20 դահեկանով՝ անկախ դասային պատկանելիությունից և հասարակության մեջ ունեցած նրանց դիրքից<sup>93</sup>: Հայտնի է, որ թույլ զարգացած արդյունաբերություն ունեցող երկրները ներմուծվող ապրանքների համար սահմանում են բարձր մաքսային դրույքներ՝ որպեսզի ներքին շուկայում հայրենական արդյունաբերության ապրանքները ավելի արագ վաճառվեն: Հովանավորման այս քաղաքականությունը

92 Ե. Շահամիրեան, Որոգայթ փառաց, էջ 253—254:  
93 Նույն տեղում, էջ 364:

նոր առաջադիմող երկրների սեփական արդյունաբերության զարգացման կարևոր միջոցառումներից մեկն է եղել:

Հայաստանի առաջին Սահմանադրությունն առաջարկում է պրոտեկցիոնիզմի մի նոր և առավել խիստ տարբերակ տուգանել արտասահմանյան ապրանքներ օգտագործողին: Տվյալ դեպքում այդ քաղաքացիների վարմունքը փաստորեն որակվում է որպես հանցագործություն, և նրանք նյութական տուժի հետ միասին նաև բարոյական պարսավանքի են ենթարկվում: Ինչպես տեսնում ենք «օտարասիրությունն» այստեղ փոխվում է իր հակադրության: Երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է երկրի արտադրողական ուժերի զարգացմանը, որի համար պահանջվում է օգտագործել օտարերկրյա կապիտալը, իսկ ապրանքների մուտքը ներքին շուկա՝ սահմանափակել:

Նորաստեղծ հայկական պետության ուշադրության կենտրոնում պետք է գտնվեն նաև գյուղատնտեսության զարգացման հարցերը: Հայաստանում անմշակ հողատարածություններ չպետք է լինեն: Սահմանադրության 109-րդ գլուխը պարտավորեցնում է, որպեսզի «ամենայն երկիր հայոց դաշտ և բլուրք, լեռինք և անտառք եթէ տէրունի և եթէ սեպհական ժառանգութիւն ամենայն իշխանաց և ժողովրդոց և եկեղեցականաց ամենայն տարուջ և պատեհ ժամանակի վարեսցի, ցանեսցէ և պարարտացուցցէ առ ի առատութեան»<sup>94</sup>: Խոսքն թողնված արտերն ու այգիները մշակվում են պետության միջոցներով, իսկ «եթե տէր ազարակին ոչ էլցէ առ ի խնդիր ազարակին իւրոյ մինչև երիս ամս ազարակին այն ի տունս հայոց գրեսցի»<sup>95</sup>:

Հայաստանի գյուղատնտեսության համար միշտ էլ բախտորոշ նշանակություն է ունեցել ոռոգումը: Տարբեր ազարակների սահմաններ հատող ջրատար առուների համատեղ օգտագործումը մասնավոր սեփականատիրական հարաբերությունների պայմաններում ստեղծում էին բազմապիսի անա-

94 Նույն տեղում, էջ 248:  
95 Նույն տեղում:

խորժուկները, որոնք հաճախ արյունահեղ ընդհարումներով էին ավարտվում: Հաշվի առնելով դարերի կենսափորձը, Սահմանադրությունն անհրաժեշտ է համարում օրենքի միջամտությամբ կարգավորել ոռոգման ցանցի արդյունավետ օգտագործման խնդիրները գյուղերում և քաղաքներում այնպես, որ «ոչ ոք համարձակեսցի կողոպտել բաժինն զրացուն անկարգութեամբ»<sup>96</sup>:

Սահմանադրության բազմաթիվ գլուխներում հանգամանորեն լուսաբանվում են ապագա հանրապետության տրնտեսական և քաղաքական կառուցվածքին առնչվող հարցեր:

Իշխանության բոլոր մարմինները կազմավորվում են ազատ, կամավոր ընտրությունների հիման վրա ըստ կամաց և ըստ հաճույից բոլորեցունց»<sup>97</sup>: Կառավարության գերագույն մարմինը՝ Հայոց տունը հսկում և կարգավորում է բոլոր մարմինների գործունեությունը՝ գերագույն օրենքով սահմանված պաշտոնավարության կարգ ու կանոնին համաձայն:

Մադրասի հայկական համայնքի կանոնադրության մեջ ասված է, որ «պարտ է մեզ ունիլ ամենայն երից ամաց մի անգամ ի միջի համահավասար ժողովրդոց հայոց ընտրեցեալ երիս կառաւարիչս»<sup>98</sup>: Այստեղ ավելացվում է նաև, որ «ձեռք քահանայից արգելեալ իցէ խառնիլ ի գործ յաշխարհականաց»<sup>99</sup>: Այս կնշանակի, որ կառավարությունը գործելու է ժողովրդի անունից՝ կրոնական իշխանություններից միանգամայն անկախ:

Պետության տնտեսական գործունեության ծրագիրը ներկայացված է եկամուտների և ծախսերի հիմնական ստորաբաժանումներով: Երկրի զինված ուժերի ծախսերը կազմում են բյուջեի շուրջ 94 տոկոսը<sup>100</sup>: Աղքատների պահպանման, որբերի ուսման և քուժման ծախսերը կազմում են 3,2 տոկոսը միայն:

Հետաքրքիր է, որ երկրի բյուջեի տարեկան եկամուտները գերազանցում են ծախսերին շուրջ 11 անգամ: Այդ առթիվ որպես բացատրություն ասված է, որ տնտեսված այս հսկայական գումարը մնում է «ի գանձարանի տանն հայոց վասն որ ոք հարկաւորութեան ապագայ ժամանակի»<sup>101</sup>:

Պետության պահպանման և նրա միջոցառումների իրականացման գլխավոր ֆինանսական աղբյուրը հարկերն են, ահա թե ինչու հարկային քաղաքականության խնդիրները լուսաբանվում են հանգամանորեն:

Նշելով պետության պարտավորությունները երկրի պաշտպանության ամրապնդման, պատերազմական կամ բնական աղետների դեպքում վնասների հատուցման, ժողովրդի բնականոն կյանքի և գործունեության ապահովման, բարեգործական և այլ կարգի հաստատությունների պահպանման հարցերում, Սահմանադրությունը գտնում է, որ բնակիչները պետք է կամովին և գոհունակությամբ հանձն առնեն «հատուցանել առ տունն հայոց, և պահպանել մեր, հարկ, մաքս, հաս, բաժինս, պատիւս և հնազանդութիւնս մեր ընդ օրինաց մերոց»<sup>102</sup>:

Այնուհետև թվարկվում են տնտեսական կյանքի տարբեր բնագավառների այն բոլոր գործառնությունները, որոնք ենթակա են հարկման: Նշվում է նաև զանձույթի շափը<sup>103</sup>:

Հարկերից բացի պետական գանձարանի եկամտի աղբյուր են նաև զրամատուգանքները, որոնք զանձվում են պետական օրինականության տարբեր տեսակի խախտումների դեպքում: Զանցառուները, եթե հարուստ են, պարտավոր են «հատուցանել տուգանս ի տունն աղքատաց, եթէ աղքատ մտնիլ ի բանտ»<sup>104</sup>:

Գրամատուգանքն, անշուշտ, անհամեմատ ավելի մեղմ պատիժ է, քան բանտարկությունը: Վերջինս մարդու արժա-

96 Նույն տեղում, էջ 298:

97 Նույն տեղում, էջ 147—148:

98 Շ. Շահամիրեան, Տեսրակ որ կոչի նշաւակ, էջ 7:

99 Նույն տեղում, էջ 12:

100 Շ. Շահամիրեան, Որոգայթ փառաց, էջ 303—304:

101 Շ. Շահամիրեան, Որոգայթ փառաց, էջ 413:

102 Նույն տեղում, էջ 369:

103 Նույն տեղում, էջ 370—381:

104 Նույն տեղում, էջ 364:

նապատվութիւնը վիրավորելուց բացի զրկանքներ և նյութական վնաս է պատճառում նրան: Բանտարկված աշխատավորը զրկվում է վաստակելու հնարավորութիւնից, իսկ նրա ընտանիքը մատնվում է սովի: Ինչպես ամենուրեք, այնպեսև հայկական առաջին Սահմանադրութեան մեջ որոշակիորեն արտահայտվել է բուրժուական հանրապետութեան օրենքների դասակարգային բնույթը:

«Նշուակ»-ի հայոց սնդուկի համար, անշուշտ հարկերն ու տուրքերը եկամտի աղբյուր լինել չէին կարող: Նրա հիմնական եկամուտները նվիրատվութիւններն ու կտակներն էին: Դրանցից բացի համայնքի կառավարութիւնը սնդուկի միջոցներով ծավալում է տնտեսական գործունեութիւն: Փոխատվութիւնից բացի սնդուկի միջոցներով «գնեցին տուն, և այգի ի մեջ ամրոցի Մադրասիս, անուամբ որբոց Մադրասիս Հայոց, տուն և այգի վարձու տացեն, տարեկան վարձն նոցա մուծանեն ի շահաւէտութիւն որբոց մերոց»<sup>105</sup>: «Որոգայթ»-ում պետութեան տնտեսական գործունեութեան այս ծրագրի տարրերը չկան, որովհետև Շահամիրյանին հայտնի էր, որ ձևավորված պետութեան եկամտի գլխավոր աղբյուրը հարկերն ու տուրքերն են:

ՀԵՆՐԻՐՈՐԳ ԳԼՈՒԽ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ԴՐՎԱԳ ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայաստանի հին և միջին դարերի տնտեսական պատմութիւնը տակավին չի ստեղծված: 20-ական թվականներին առաջին քայլերը կատարեց Քաղ. Ավդալբեգյանը իր մի շարք փոքրածավալ բայց արժեքավոր ուսումնասիրութիւններով:

<sup>105</sup> Շ. Շահամիրեան, Տետրակ ոչ կոչի նշուակ, էջ 37:

<sup>1</sup> Քաղ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտութիւններ, Երևան, 1969:

Սիմեոն Երևանցու գրական ժառանգութիւնը, հատկապես «Զամբուր» խիստ արժեքավոր սկզբնաղբյուր է ոչ միայն էջմիածնի, այլև Հայաստանի միջին դարերի տնտեսական պատմութիւնը ուսումնասիրելու համար: Գրքում նկարագրված տնտեսական հարաբերութիւններն ու քաղաքական իրադարձութիւնները բնորոշ են երկրին ամբողջութեամբ և անմիջականորեն կամ կողմնակի ճանապարհով լուսաբանում են հայ ժողովրդի այդ ժամանակաշրջանի տնտեսական պատմութիւնն ընդհանրապես:

XV—XVI դարերում թուրքական ցեղերի արշավանքների, պարսկական և օսմանյան պետութիւնների միջև մղվող տեւական պատերազմների հետևանքով հայ ժողովրդի համար սկսվում է տնտեսական քայքայման ու քաղաքական իրավազրկութեան մի ծանր շրջան: Այդ ժամանակների մասին Սիմեոն Երևանցին գրում է, որ Արարատյան դաշտի բնակավայրերի հետ միասին էջմիածինը «Իսպառ մնաց ի յամայութեան»<sup>2</sup>: Այս դրութիւնը երկրում շնչին փոփոխութիւններով, շարունակվում է մինչև XVII դարի կեսերը, երբ փոքրիշատե տեւական խաղաղութեան պայմաններում վերականգնվում է գյուղատնտեսութիւնը, զարգանում են արհեստներն ու առևտուրը: էջմիածնի տնտեսական վերելքն սկսվում է Մովսես Սյունեցի կաթողիկոսի եռանդուն գործունեութեամբ (1628—1632) և իր ծաղկմանը հասնում Սիմեոն Երևանցու կաթողիկոսութեան (1763—1780) ժամանակաշրջանում:

Սիմեոն Երևանցին ձեռներեց և գործունյա անձնավորութիւն էր: Նա օժման առաջին իսկ ամիսներից ծավալում է եռանդուն գործունեութիւն: Ընդարձակվում են վանքի կալվածքները, կառուցվում են գործանոցներ, տպարան, տնտեսական կառույցներ, կացարաններ, դպրոցի շէնքեր, ջրանցքներ և այլ բազմաթիվ շինութիւններ: Նրա օրոք վանքապատկան տնտեսութիւնը հարստացավ «ամենայնիւք հօգևորօք, և մարմնաւորօք, ներքսականօք և արտաքսականօք, բեռնակրօք և լծկանօք և կթելի անասնօք բազմապատիկ քան

<sup>2</sup> Սիմեոն Երևանցի, Զամբու, ի Վաղարշապատ, 1873, էջ 18:

առաջինն: Միաբանք շատ հանգիստ և ապահով յամենայնի  
ի յաւուրս սորա ոչ պակասեցան կերպակերպ արհեստաւորք և  
շինարարք ի յաթոռոյս»<sup>3</sup>:

Սիմեոն Երևանցին միաժամանակ XVIII դարի հայտնի  
քաղաքական դեմքերից մեկն էր: Կարելի է ասել, նա առա-  
ջին կաթողիկոսն էր, որ պաշտոնական հարաբերութիւններ  
սկսեց ուսական պետութեան հետ հատուկ պատվիրակու-  
թեան միջոցով. նրա խնդրանքը՝ Աստրախանի հայկական  
գաղութը էջմիածնի իրավասութեանը վերադարձնելու վերա-  
բերյալ, լուծվեց զրականորեն, կայսերական հատուկ հրո-  
վարտակով:

Շահամիրյանի մշակած Հայաստանի ազատագրման ծրա-  
գիրը զրավում է հասարակական մտքի ուշադրութիւնը:  
Սիմեոն Երևանցին բացասական վերաբերմունք ուներ այդ  
ծրագրի նկատմամբ: Նրա հեղինակները, գրում է կաթողի-  
կոսը, «չմտածելով գորպիսութիւնս ազգիս՝ թե ուր կան, ի  
ձեռս որոց, և որպիսի կերպիս» կազմել են իրենց ծրագիրը<sup>4</sup>:  
Պետք է հասկանալ, որ «Զի յերթեկութենէ թղթոցն ձերոց  
ձայն ինչ ի վերելանէ ասէ թեթևս և կամ թուղթն ձեր ի ձեռս  
տաճկաց անկանի, որ լինի վնաս ազգիս»<sup>5</sup>: Կաթողիկոսը այդ  
ժամանակաշրջանում հայ իրականութեան մեջ չէր տեսնում  
բուրժուական սահմանադրական կարգեր հաստատելու հնա-  
րավորութիւն և հայերի ազատագրման ուսումնական միջամտու-  
թեան հետ, որի նկատմամբ անվիճելի համակրանք ուներ:

էջմիածնի պատմութեան ուսումնասիրութիւնը հեղինակը  
հիմնավորում է ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնա-  
կան նկատառումներով: Ինչպես գրում է նա՝ «անցելովն  
խորտէ զներկայականսս և զգուշեցուցանէ զապա յականսս»<sup>6</sup>:

էջմիածնի պատմութիւնը կազմում է ամբողջ պատմա-  
կան Հայաստանի տնտեսութեան, մասնավորապես հայ եկե-  
ղեցու պատմութեան մի մասը, որը և հանգամանորեն շարա-  
դրված է Սիմեոն Երևանցու աշխատութիւնում: Հայաստա-  
նում քրիստոնեութեան տարածման ժամանակներից մինչև  
1443 թվականը հայ եկեղեցու պատմութեան հետ կապված  
իրադարձութիւնները նկարագրվում են ընդհանուր գծերով  
միայն, քանի որ մինչև այդ էջմիածնում «ոչ էր մնացեալ յի-  
շատակազիր մի, կամ արքունական, և կամ դատաւորական,  
կամ դապալայ, մլքոց և այլոց այսպիսեաց և կամ վախուպ--  
նամայ Հայերէն և կամ տաճկերէն»<sup>7</sup>: Այդ պատմութեան ըն-  
թացքում հեղինակը ընթերցողին անընդհատ հիշեցնում է, որ  
ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ եկեղեցու դժբախտութիւն-  
ների պիտավոր պատճառներից մեկը անմիաբանութիւնն է:  
Խոսելով միասնական հոգևոր կենտրոնի երկպառակտման և  
երկու կաթողիկոսութիւնների առաջացման ու նրանց միջև  
անհամաձայնութեան ու դրա ավերիչ հետևանքների մասին,  
Ս. Երևանցին գրում է. «Սու ոչ միայն կաթողիկոսութիւնն բա-  
ժանեցաւ այլ և զրեթէ թուր ազգ Հայոց յերկուս բաժանե-  
ցան յայնմ հետէ»<sup>8</sup>:

էջմիածնի տնտեսական պատմութեան մանրակրկիտ ու-  
սումնասիրութիւնը գրքում սկսվում է Գրիգոր Մակվեցու  
(1443—1455) ժամանակներից, որը խոշոր հողային կալ-  
վածքներ է ձեռք բերում և կարգավորում վանքի տնտեսու-  
թիւնը:

Իր պատմութիւնը Երևանցին սկսում է կալվածքների,  
ոռոգման ցանցի և տնտեսական կառույցների շինարարու-  
թեան նկարագրութեամբ, ցույց տալով ցանքատարածութիւն-  
ների, արոտավայրերի, այգիների, ջրանցքների, գործանոց-  
ների, անասունների ձեռք բերման հանգամանքները, բավա-  
կանին մանրամասներով: Գրքում բերված հարուստ նյութե-  
րից պարզվում է, որ էջմիածնի ունեցվածքը ձեռք է բերվել

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>4</sup> Գիվան հայոց պատմութեան, գիրք Ը, Թիֆլիս, 1908, էջ 575:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 578:

<sup>6</sup> Սիմեոն Երևանցի, նշված աշխատութիւն, էջ 1:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 53:

միջնադարյան կալվածատիրական տնտեսությանը բնորոշ ուղիներով:

Հայտնի է, որ վաղ և դարգացած միջնադարում եկեղեցական կալվածքների ընդարձակման մայրուղին նվիրատու-վուժյուններն էին<sup>9</sup>: Իսկ XIV դարից հետո եկեղեցու ունեցվածքի մեծ մասը ձեռք է բերվում գնումների միջոցով<sup>10</sup>, որոնք առավել մեծ չափերի են հասնում XVII—XVIII դարերում: Ֆեոդալական տնտեսությունների ունեցվածքի մի մասը ձեռք էր բերվում նաև բռնի միջոցներով: «Սահմանք քաջաց զենն իւրեանց» հայտնի սկզբունքը պահպանվել է ամբողջ միջին դարերի ընթացքում: Եվ թուրք ու պարսիկ իշխանավորները այդ սկզբունքով բազմիցս թալանել ու կողոպտել են էջմիածնի տնտեսությունը: Հենց միայն Վաղարշապատ գյուղը Գրիգոր Մակվեցի կաթողիկոսը ստիպված է եղել շորս անգամ գնել սեփականատիրական իրավունքով հանդես եկող բեկերից և նվիրել էջմիածնի վանքին՝ որպես նրա անձեռնմխելի սեփականություն: Երևանցին սրտի կսկիծով է նշում, որ Գրիգոր Մակվեցի կաթողիկոսից հետո «ի փոփոխմանէ այլև այլ բռնակալ իշխողաց երկրիս, և ի յարուցմանց պէս պէս ելուզակաց և ապստամբաց, և յարշաւանաց ի վերայ միմեանց մեծազօր թագաւորաց պարսից և օսմանցոց... Աթոս... ոչ միայն ի մլքատու գեղօրէիցն էր զրկեցեալ (զորս տաճիկը զաւթեալ էին), այլև շինութենէ, ի միաբանից, և յայլամենից հոգևոր և մարմնաւոր զարգուց և ի հարկաւորացն էր մերկացեալ»<sup>11</sup>: Անհրաժեշտ էր նորից վերականգնել այս ավերված տնտեսությունը՝ միևնույն մուլքատու գյուղերը, ցանքատարածությունները, այգիները, արո-

<sup>9</sup> Տե՛ս Ագաբանգեղոս, Պատմութիւն հայոց, Տիգրիս, 1909, էջ 409, 410, 424, 436, 440, 441, 4. Կոստանյան, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, 4—150 էջերում բերված 9—14 դարերի արձանագրություններ:

<sup>10</sup> Տե՛ս Սիմեոն Երևանցի, նշված աշխատություն, զլ. 13, 15, 16, 17, 18, 19:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 103:

տավայրերը նորից գնելու, բարձրատիճան իշխանավորներին կաշառելու կամ սիրաշահելու և այլ մեթոդներով:

Այդ հսկայական չափերի հասնող ծախսերի աղբյուրն, անշուշտ հայ աշխատավորության աշխատանքն էր, որի արդյունքը այլազգի բռնակալները, բացի անմիջականորեն կողոպտելուց, յուրացնում էին նաև էջմիածնի միջոցով: Հասկանալի է, որ վանական տնտեսությունն ամբողջությամբ պահպանվում էր աշխատավորների շահագործման հաշվին, որն իրականացվում էր «ֆեոդալական օրինականության» շրջանակներում: Բայց էջմիածինը հարստանում էր աշխատավորների հաշվին երբեմն նաև զարտուղի ճանապարհներով՝ դրա համար օգտագործելով իր դիրքն ու իշխանությունը, ինչպես նաև այլազգի կառավարիչների աջակցությունը: Այդ մասին պերճախոս վկայություններ կան նաև Սիմեոն Երևանցու մոտ: Հիշատակենք Ռաջափ փառայի 1724 թվականի հրամանը, որով ընթացք է տրվում Աստվածատուր կաթողիկոսի բողոքին՝ ուղղված գյուղացիների դեմ, որոնք «ոչ թողուն մեզ վայելել» գյուղի վարելահողերն ու արոտավայրերը: Տեղական իշխանությունները ճնշում են գյուղացիների ելույթը օրենքի անունից, ասելով թե՛ «ի յարքունի դեմքերն գրեցեայք են»<sup>12</sup>, Նույն փառայի հրամանով Քասախ գետի ջրի կես մասը հատկացվում է վանքին, մյուս կեսը թողնելով Վաղարշապատի և Աշտարակի բազմաթիվ գյուղերին, որից ստացած ջուրը գյուղացիներն անվանել են «մոր արտասուք»: Այնուհետև, Եշական և Ֆրանկանոց գյուղերի բնակչությունը «ի պատահմանէ իմեքէ և կամ ի յաւելի պահանջմանց հարկաց այլազգեաց ի նեղ անկեալ»<sup>13</sup> վանքից փող է խնդրում նրան մեկական մուլք (բերքի 1/10 մասը) ավելի վճարելու պայմանով: Պարզ է, որ այս դեպքում վանքը տնտեսական հարկադրանքի միջոցով կրկնապատկում է այդ գյուղերի աշխատավորության շահագործման աստիճանը՝ «օրինական», մեկ մուլքի փոխարեն գանձում 2 մուլք (2/10):

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 249:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 113:

էջմիածնի վանական տնտեսութեան գլխավոր ճյուղը գյուղատնտեսութեանն էր (գաշտավարութիւն և այգեգործութիւն), որը հիմնված էր սեփականութեան երկու ձևի վրա՝ մուլքադարական, երբ արտադրութիւնը կազմակերպւում էին գյուղացիները և վանքին (մուլքադարին) վճարում հասույթի 1/10 մասը, մյուսը սեփական կալվածքներն էին, որտեղ արտադրութիւնը վանքն էր կազմակերպւում և ինքն էլ տնօրինում էր ամբողջ եկամուտը: Էջմիածնի մուլքադարական հարաբերութիւնները ձևավորվում են XV դարի կեսերին, երբ Գրիգոր Մակվեցի կաթողիկոսը Սեյիդ բեկից «գնէ զղեղղանկ մուլքն գեղջս այսմիկ»<sup>14</sup>, այնուհետև ևս վեց գյուղ: XVII դարի երրորդ քառորդում վանքին մուլքատու են դառնում արդեն 23 գյուղ:

Վանքը ուներ նաև իր սեփական տնտեսութիւնը, որի ցանքատարածութիւնները կազմում էին շուրջ 600—700 հեկտար: Մոտավորապես այդքան, կամ քիչ ավելի տարածութիւն էին գրավում վանքի այգիները: Երևանցին հանգամանորեն նկարագրում է այդ կալվածքները՝ ցույց տալով, թե երբ և ինչ պայմաններում են ձեռք բերվել դրանք:

Արարատյան դաշտի գյուղատնտեսութեան համար բախտորոշ նշանակութիւն ունի ոռոգման սիստեմը, և Սիմեոն Երևանցին իր աշխատութեան մեջ հանգամանորեն շարադրում է էջմիածնի ջրային տնտեսութեան պատմութիւնը: Վանքի տնտեսութեան վերականգնման ժամանակներից սկսած, կաթողիկոսների ուշադրութեան կենտրոնում են եղել ոռոգման սիստեմի կառուցման ու ընդարձակման հարցերը: XVII դարի կեսերին Փիլիպոս կաթողիկոսը «մեծաւ աշխատութեամբ և դրամածախսութեամբ, բէրեալ զայն ջուրն (խոսքը Արագածից դեպի Ախուրյան գնացող հորդարուխ վտակի մասին է — Ն. Ք) արկանէ յայսկոյս լերինն՝ և խառնէ ի գետս մեր Քարձախ, որով ոռոգանի դաշտս մեր»<sup>15</sup>: Նույն

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 100 (նկատի ունի Վաղարշապատ գյուղի տասանորդը):

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 191:

ինքը Փիլիպոսը հանում է մի առու, որին նրա հաջորդ Հակոբ Ջուղայեցին միացնում է իր նոր կառուցած ջրանցքը, ստեղծում երեք ջրամբար: Մեծ դովեստով է պատմում Երևանցին նաև նահապետ կաթողիկոսի ջրաշինարարական գործունեութեան մասին, որը Սարվանլար գյուղի մոտերքում «ծակեաց զլեռնն ձորակին, ուր ընթանայ գետն Հրազդան, և ջաղխելով զվէմս, բանալով զխորափոր առուս մեծաւ աշխատութեամբ և անհամար դրամածախսութեամբ եբեր զջուր ի գետոյն Հրազդանի ի գեղս մեր ի յօգուտ այգեստանացն»<sup>16</sup>: Հեղինակին ոգևորում է նաև ազգութեամբ վրացի Սեֆի խանի և նրա կնոջ օրինակը, որոնք Մեծամորից տարած ջրանցքների վրա կառուցում են և իրենց անուններով կոչում Սեֆիաբաղ և Խաթունարխ գյուղերը: Ոռոգման այս խիտ ցանցը ապահովում էր վանքի հողերի բարձր բերքատվութիւնը և հնարավորութիւն տալիս մշակելու այնպիսի եկամտաբեր կուլտուրաներ, ինչպիսիք բրինձն ու բամբակն էին:

Էջմիածնի տնտեսութեան մեջ համեմատաբար մեծ չէր անասնապահութեան տեսակարար կշիռը: Պահվում էին զըլխավորապես բանող անասուններ՝ որպես քաշող ուժ, և միաբանութեան կարիքների համար փոքր թվով մթերատու անասուններ: Ընդ որում մեծ քանակութեամբ բանող անասուններ և անասնապահական մթերքներ ատացվում էին զանազան թեմերից տարին մեկ անգամ<sup>17</sup>: Պրոֆեսոր Ս. Պողոսյանի մոտավոր հաշվարկներով, էջմիածնի վանքի եկամուտը մուլքադարական գյուղերից և սեփական կալվածքներից հասնում էր տարեկան շուրջ 85—90 հազար ուրլու<sup>18</sup>:

Սիմեոն Երևանցու հիշատակարաններում, ինչպես նաև հաշվեմատյաններում եղած նյութերից պարզվում է, որ էջմիածնի տնտեսութիւնը ոչ թե կապալառուներն են վարել,

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>17</sup> Նույն տեղում, գլ. 7:

<sup>18</sup> Ս. Պողոսյան, Եկեղեցական հողատիրութիւնը Երևանի խանութիւնում 17—18-րդ դարերում և էջմիածինը որպես խոշոր կալվածատիրական տնտեսութիւն, Երևանի պետական համալսարանի գիտական աշխատութիւններ, Երևան 1940, հ. 13, էջ 177:

այլ կառավարիչները՝ կաթողիկոսի ընդհանուր տնօրինությամբ: Վանքի տնտեսությունում «հինգ հարիւր մարդ ավելի հաց ուտեն»<sup>19</sup>, որոնցից շուրջ 130—140 մարդ ծառայողներ էին: Այս անձնակազմի հիմնական խնդիրը տնտեսության լայնածավալ կալվածքների մշակման գործի կազմակերպումն էր, որը արտադրության պարզունակ գործիքների առկայության պայմաններում պահանջում էր հսկայական թվով աշխատողներ: Միջին դարերում խոշոր ֆեոդալական տնտեսություններում աշխատում էին ճորտերը՝ աշխատավճարի սկզբունքով: Էջմիածինը աշխատուժի այդ կարգի աղբյուր գրեթե չունի: Գյուղացիության արտատնտեսական կախումը էջմիածնից հիմնված էր մուլքադարանի հարաբերությունների վրա, ըստ որի մուլքադարան ստանում էր բերքի տասանորդը միայն, իսկ գյուղական համայնքի ներքին կյանքին միջամտելու իրավունք չունի: Բայց իրականում վանական տնտեսության աշխատանքների նշանակալի մասը կատարվում էր մուլքատու գյուղերի աշխատավորության միջոցով, երբեմն զուգորդվում ընչին բնամթերային վարձատրությամբ:

Էջմիածինն ունեցել է նաև իր ճորտերը, որոնք, սակայն, ամբացված չեն եղել հողին, ապրել են մեծ մասամբ քաղաքներում (Վրաստանում), եղել արհեստավորներ և առևտրականներ: Սիմեոն Երևանցին գրում է, որ «ճորտք այս ինքն հարկատու ծառայք սրբոյ Աթոռոյս»<sup>20</sup>: Այնուհետև ավելացնում. «Ի քաղաքն Թիֆլիզ Աստուածատուր կաթողիկոսն Համատանցի Զխախուտի որդի Յարութիւնն գնէ ի ճորտութիւն սրբոյ Աթոռոյս որդովքն և բոլոր ընտանեօքն»<sup>21</sup>: Ճորտերը, որոնց թիվը հասնում էր շուրջ 900 մարդու, գնվում, վաճառվում էին և անձնական կախման տեսակետից ոչնչով չէին տարբերվում սովորական իմաստով ֆեոդալական ճորտերից:

Անձնական կախման հարաբերությունները XVII—XVIII դարերում թուլացել էին, և էջմիածնի տնտեսությունը չէր

կարող միայն կոռային աշխատանքի վրա հիմնված լինել: Ֆեոդալիզմի դարգացման այս շրջանում խոշոր կալվածատիրական տնտեսություններում, մասնավորապես հայ վանքապատկան կալվածքներում լայն չափերով օգտագործվում էր վարձու աշխատուժը: Գյուղատնտեսական աշխատանքների համար վարձում էին մեծ թվով սեզոնային աշխատողներ, հիմնականում շրջակա գյուղերի շքավորներից, որոնց համար կողմնակի վաստակը սեփական սակավահող տնտեսության եկամուտների լրացման կարևոր աղբյուր էր: Բայց վանքը ուներ նաև մշակների մշտական կազմ: Երևանցին գրում է, որ Ղևոնդենց այգու համար վճարել են «քսան թուման դրամ, ճծ (150) մշակ»<sup>22</sup> և այլն: Հարյուր հիսուն մշակ ասելով անհրաժեշտ է հասկանալ, որ վանքի մշակները 150 մարդ-օր պետք է աշխատեին նախկին այգետիրոջ՝ Ղևոնդի որդի Հերոմի համար: Երևանցու հիշատակարանում եղած նյութերից պարզվում է նաև, որ վանքի մշտական մշակների թվում կային շատ արհեստավորներ, շինարար վարպետներ և բանվորներ: Այդ նյութերում, ցավոք, վարձու աշխատողների թվի և նրանց վարձատրության չափերի մասին տեղեկություններ չկան: Պրոֆեսոր Ս. Պողոսյանը Մատենադարանում պահպանվող հաշվեմատյանների տվյալների հիման վրա ցույց է տվել, որ էջմիածնի կալվածքների մշակման համար 1768 թ. ծախսվել է 35—40 հազար աշխատանքային օր, որոնց վարձատրության ընդհանուր գումարը կազմել է 353 թուման, հետևաբար մեկ աշխատանքային օրվա վարձը մոտավորապես միջին հաշվով եղել է 8—10 կոպեկ, որով կարելի է գնել 3—4 կգ ցորեն: Այսինքն՝ մշակների վարձատրությունը սահմանափակվել է ապրուստի նվազագույնով, որով նրանք մի կերպ պահպանել են իրենց թշվառ գոյությունը:

Ֆեոդալական խոշոր բնատնտեսություններում արտադրանքի զգալի մասը սեփական գործանոցներում էր վերամշակվում: Այդ առանձնահատկությունը բնորոշ էր նաև էջմիածնի վանական տնտեսությանը: Էջմիածնի ընդարձակ

19 Սիմեոն Երևանցի, նշված աշխատություն, էջ 135:

20 Նույն տեղում, էջ 209:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում, էջ 167:



կալվածքների կեսից ավելին խաղողի այգիներ էին, որոնց բերքի բաղաչի վրա ստեղծվել է խոշոր գինեգործական տրնտեսություն՝ տարեկան շուրջ 8,9 հազար դույլ գինու արտադրությամբ, որի մեծ մասն, անշուշտ, հանվում էր վաճառքի, որը վանքի գրամական եկամուտների կարևոր աղբյուրներից մեկն էր կազմում:

Վանքի գործանոցների շարքում աչքի էին ընկնում ջրաղացները: Սիմեոն Երևանցին թվարկում էր տարբեր ժամանակներում (1601—1766 թթ.) էջմիածնի կաթողիկոսների օրոք ձեռք բերված 38 ջրաղաց, որոնց թիվն, իհարկե, փոփոխվել է: Պարզ է, որ գործող ջրաղացներում վերամշակվում էր նաև շրջակա գյուղերի հացահատիկը:

էջմիածնի կալվածքների նշանակալի մասի արտադրանքը վերամշակվում էր համապատասխան գործանոցներում (գինգ): Վանքի շորս գործանոցների վերամշակած բրնձի մեծ մասը վաճառվում էր: Նշենք, որ վանքի շուրջ 600 հեկտար վարելահողի կեսից ավելին բրինձն ու բամբակն էին զբաղեցնում, որոնցից տարեկան ստացվում էր շուրջ 25000 ու եկամուտ: Բրնձի տարեկան բերքը կազմում էր ավելի քան 100 տոննա: Մեծ քանակությամբ բրնձի և բամբակի վաճառքի մասին մի շարք հաղորդումներ կան Երևանցու հիշատակարաններում: Բամբակը վերամշակվում էր վանքի սեփական բամբակազտիչ գործարանում, որի արտադրանքի մի մասն օգտագործվում էր թղթի արտադրության համար: Թղթի գործարանը և տպարանը կառուցվել են Երևանցու ջանքերով, հնդկահայ հարուստ վաճառական Գրիգոր Միքայելյանի նվիրատվությունների հաշվին:

Արդյունաբերական ձեռնարկություններից «Ջամբո»-ում հիշատակվում են նաև Վաղարշապատում երեք ձիթհան գործարանները, որոնցից յուրաքանչյուրի տարեկան արտադրանքը կազմում էր 7—8 տոննա: Առանձնապես քարձորակ էր քունջութի ձեթը, որը կրկնակի թանկ էր կտավհատի ձեթից:

էջմիածնի եկամտի գլխավոր աղբյուրներից մեկը դանազան երկրներում կատարվող տարբեր տեսակի գանձում-

ներն էին: Երևանցու աշխատության երեք գլուխներում թրվարկված են Թուրքիայի, Պարսկաստանի, Ռուսաստանի, Հնդկաստանի և այլ երկրների բազմաթիվ հայաբնակ քաղաքներ, մարզեր, գյուղեր, որտեղից կատարվում էին նվիրակային, թեմական և այլ բնույթի գանձումներ: Նվիրակային գանձումները (նվիրակային, հանգանակություններ, հոգեբաժին, կտակներ) էջմիածինը ստանում էր երեք տարին մեկ անգամ: Բացի գրանից նվիրակները հավաքում էին նաև թեմական կամ «առաջնորդական արդիւնսն»<sup>23</sup>, իսկ գրքի 7-րդ գլխում թվարկված են այն քաղաքներն ու մարզերը, որտեղից ամեն տարի Մայր աթոռն ստանում էր անասուններ, յուղ, պանիր, երկաթյա իրեր, բրդյա գործվածքներ, շորացրած մրգեր, հացահատիկ և այլն: Բնամթերային այս գանձումները միաժամանակ ցույց են տալիս, թե համապատասխան շրջաններում արտադրության որ ճյուղերն էին առավել զարգացած: էջմիածնի կողմից կատարվող զանազան բնույթի գանձումների թիվը անցնում էր քառասունից<sup>24</sup>: Ստացված եկամուտների չափի մասին պատկերացում կազմելու համար բավական է նշել, որ միայն Աստրախանի թեմի նվիրակային գանձումների գումարը տարեկան 2300 ու էր հասնում<sup>25</sup>:

Եթե նկատի ունենանք, որ էջմիածինն ենթակա նվիրակային վիճակների ու կրոնական թեմերի թիվը հասնում էր մի քանի հարյուրի, ապա կարելի է մոտավոր պատկերացում կազմել այդ աղբյուրներից ստացված եկամուտների չափի մասին: Գանձումները մեծիմասամբ պարտադիր հարկերի բնույթ ունեին, որոնք հաճախ բորբոքում էին բնակչության արդար զայրույթը վանքի գործակալների շարաշահումների դեմ: Այդ առթիվ ուշագրավ է ռուսական թեմերի նվիրակ առաջնորդ փառակեցի Բարսեղ վարդապետի պատմությունը, որին ժողովուրդը պահանջում է վճարել: Կայսրի կամքով 1749

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 48:

<sup>24</sup> Տե՛ս Գիվան հայոց պատմության, հ. գ. Թիֆլիս, 1894, էջ 825—826:

<sup>25</sup> Բ. Մ. Արությունյան, крупное монастырское хозяйство в Армении в 17—18 в. Ереван, 1940, стр. 105.

թվականին Գանձասարի վիճակից նոր նվիրակ է նշանակվում Ստեփանոս եպիսկոպոսը: Էջմիածինն այնուհետև 20 տարի զբկվում է այդ թեմերի եկամուտներից, մինչև որ Սիմեոն Երևանցու ջանքերով դրանք վերադարձվում են վանքին<sup>26</sup>:

Էջմիածնի եկամուտների ամենահարուստ աղբյուրներից մեկը նվիրատվություններն ու կտակներն էին: Աշխարհի տարբեր ծայրերում ցրված հայ հարուստներն ու վաճառականները էջմիածնին էին նվիրում կամ կտակում կալվածքներ, թանկագին իրեր, խոշոր գումարներ, որոնց շնորհիվ էջմիածինը մեծաթեք շարժական և անշարժ ունեցվածքի տեր էր դառնում բազմաթիվ երկրներում:

Ինչպես պարզվում է, էջմիածնի տնտեսական ու արտատրնտեսական գործունեությունից ստացված եկամուտները հարյուր հազարների էին հասնում: Ինքնին հասկանալի է, որ այդ եկամուտների նշանակալից մասը ծախսվում էր արտագրական նպատակների համար (կառուցումներ, արտադրության գործիքների, հումքի և նյութերի ձեռք բերում, աշխատողների բնամթերային և դրամական վարձատրություն և այլն): Այնուհետև, բնամթերային արտադրանքի նշանակալի մասը ծախսվում էր վանքի միաբանության ապրուստի համար (վանքում կերակրվում էր շուրջ 500 մարդ): Ունենալով փակ, բազմաճյուղ տնտեսություն, վանքը վերարտադրության համար անհրաժեշտ բոլոր տեսակի ծախսումներն ապահովում էր սեփական արտադրանքի միջոցով: Դրամական վճարումները մեծ գումարների շէին հասնում: Էջմիածնի տնտեսական պատմությունից պարզվում է մի բնորոշ առանձնահատկություն ևս: Խոշոր ֆեոդալական կալվածատիրական տնտեսություններն ընդհանրապես ունեցել են պարզ վերարտադրություն, իսկ էջմիածնի տնտեսությունը գրեթե անընդհատ ընդհարձակվել է: Ընդլայնված վերարտադրությունը բնորոշ է եղել էջմիածինը այլազգի բռնակալների կողմից բազմիցս կողոպտվելուց հետո անգամ: Եվ իրոք, Սիմեոն Երևանցու մեծարժեք պատմական հուշարձանը ակ-

26 Սիմեոն Երևանցի, նշված աշխատություն, էջ 49—50:

նառու կերպով ցույց է տալիս, որ վանքի տնտեսության եկամուտների մեծ մասը ծախսվել է ընդարձակ ցանքատարածություններ, այգիներ, բազմաթիվ ջրաղացներ, ձիթհաններ ձեռք բերելու, ջրանցքներ, գործարաններ, տնտեսական շենքեր, դպրոցներ կառուցելու, շուրջ երկու տասնյակից ավելի մուլքատու գյուղեր գնելու (այն էլ՝ երբեմն մի քանի անգամ) համար: Հեղինակը փառաբանում է իր նախորդների տնտեսական, շինարարական ջանքերը, որպեսզի «ոսկեպէս անուանք նոցին փառաւորեսցին մշտնջենապէս ի սուրբ աթոռոջս մէջ տաճարիս Աստուծոյս»<sup>27</sup>: Իսկ որոնք են նրանց այն գործերը, որ այդպիսի ջերմեռանդությամբ փառաբանում է հեղինակը:

Գրքում և ոչ մի անգամ չի հիշատակվում էջմիածնի կաթողիկոսների կրոնաբարոզական գործունեության մասին: Ամբողջ աշխատությունը նվիրված է նրանց տնտեսական, շինարարական գործունեության և ձեռք բերված արդյունքների օգտագործման պատմության լուսաբանմանը: Նրանց գործունեության մեջ կարևորը ոչ միայն արտադրության նյութական արժեքների ձեռք բերումն է, այլև դրանց պահպանումը այլազգի իշխանավորների հափշտակումներից: Ուստի և նրանք անխոնջ աշխատանք են կատարել ձեռք բերված ունեցվածքը և էջմիածնի իրավունքները օրինական փաստաթղթերով ձևակերպելու, շահերի և խաների արքունական վավերագրերով այդ ունեցվածքի անձեռնմխելիությունն ապահովելու ուղղությամբ, որը և հանգամանորեն ու մեծ ջանասիրությամբ լուսաբանել է Երևանցին իր աշխատության վերջին 5 գլուխներում:

Էջմիածնի ունեցվածքի մեծագույն մասը պարբերաբար հափշտակվել է այլազգի հարստահարիչների կողմից: Անընդհատ կրկնվող թուրք-պարսկական պատերազմական գործողությունները հաճախ ծավալվում էին Արարատյան դաշտում, և էջմիածնի ամբարները այդ գործերի մատակարարման հուսալի աղբյուր էին ծառայում: Բայց բռնակալ աստիճանավորները էջմիածնի հարստությունը տարբեր ձևերով էին յուրացնում նաև խաղաղ ժամանակներում: Այդ առթիվ պեր-

27 Նույն տեղում, էջ 3:

ճախոս վկայություններ կան Երևանցու աշխատություններում: Հայանի է, որ էջմիածնի տնտեսությունը հատուկ արտոնագրերով (մաղաֆություն) ազատվում էր հարկերից, բայց տեղական խաներն ամեն առիթով խախտում էին հնուց սահմանված կարգը և հարկ պահանջում վանքից: 1765 թվականին «երկրիս վեթի և դիվանագիրն (որ էր պիղծ Միրզա—Շեֆին),— պատմում է Միմենոն Երևանցին,— խնդրեաց ի մէնջ ծածկաբար զԱՃ (100) թուման, պատճառաւ ի Հաճն գնալոյ իւրոյ»<sup>28</sup>: Մերժում ստանալով, Միրզա Շեֆին էջմիածնի մաղաֆությունը հայտարարում է ապօրինի և սահանջում միանվագ վճարել անցած բազում տարիների հարկերը:

Բռնի մեթոդներից բացի, կային էջմիածնի հարստությունները հափշտակելու նաև բազմաթիվ «օրինական» և «սիրալիր» միջոցներ: Վանքը պաշտոնական հարկ էր վճարում զանձարանին տարեկան «զտասն և մեկ թուման զեօթն հազար և զհինգ հարիւր դիան»,— գրում է կաթողիկոսը: Տոն օրերին և հատկապես նովրուզին (նոր տարուն) խանին և նրա աստիճանավորներին մատուցած նվերների արժեքը հասնում էր ավելի քան քսան թումանի: Բացի այդ, խաները սահմանում էին խորամանկ սովորություններ՝ մեծ շքախմբերով հոկտեմբեր ամսին այցելում էին վանք՝ տոնախմբությունները շնորհավորելու պատրվակով: Խոշոր ծախսերից հետո՝ «մեծ ընծայ մի խանն առնույր, և դէվթէր մի ևս զրեալ առաքէր թէ՛ այս ինչ աղայի այս ինչ տուր և այս ինչ աղայի այս, ամենեցուն ըստ արժանաւոյն, որոց մինչև իյիսուն թումանն հասանէր գինսն տուեցելոցն: Միւս ևս ի պայրամին խանն զայր ի տեսութիւն մեզ, և մեկ ամանով ոսկի խնդրէր ի դնել առաջի իւր, և ապա առեալ բաժանէր բազմականացն, որ ընդամենն լինէր յիսուն կամ վաթսուն ոսկի»<sup>29</sup>:

Այնուհետև, խաներն ու աստիճանավորները էջմիածնից Լըբեմն «մուրհակաւ զպարտս խնդրէն, երբեմն ողորանօքն և

28 Նույն տեղում, էջ 149:

29 Նույն տեղում, էջ 151:

աղաչանօք խնդրեն թէ ղնադտս և զայլ իրս»<sup>30</sup>: Այս միջոցներով էջմիածնից կորզած հարստությունը տասնապատիկ անգամ ավելին էր, քան պաշտոնական հարկերի տարեկան գումարը:

Սրանք են ահա էջմիածնի հսկայական հարստությունների ծախսման ուղիները, որոնցից ամենաարդյունավետը շինարարական— արտադրական գործունեությունն էր: Ամենևին պատահական չէր, որ կաթողիկոսներից շատերը, ինչպես պարզվում է Երևանցու աշխատությունից, լուրջ ուշադրություն են դարձրել շինարարական, արտադրական աշխատանքներին, որով մեծապես նպաստել են արտադրողական ուժերի զարգացմանը, բնակչությանը ասպահովել կենսամիջոցներով: Նրանք լավ էին հասկանում, որ ստեղծված իրադրությունն մեջ այդ ճանապարհով միայն կարելի կլինի ժողովրդի հարստության մի մասը գոնե փրկել անխուսափելի կողոպուտից և ժառանգություն թողնել զալիք սերունդներին:

Հայաստանի տնտեսական պատմության մեջ էջմիածնի տնտեսության տեղը և դերը սովետահայ պատմագիտական գրականության կողմից գնահատվել է միակողմանիորեն: Հարցի լուսարանման ժամանակ շեշտվել է միայն այն իրողությունը, որ էջմիածինը եղել է խոշոր ֆեոդալական տրնտեսություն, որի հսկայական հարստությունները կուտակվում էին աշխատավորների շահագործման հաշվին: Մյուս կողմից, էջմիածինն իր կրոնա-քարոզչական գործունեությամբ դարեր շարունակ հասարակության միտքը մղել է հետադիմական ուղեգծերի վրա: Այս իրողության դեմ առարկելը կամ այն հերքելու փորձեր կատարելը անմտություն կլիներ: Բայց ասել, թե ֆեոդալական տնտեսությունը շահագործում է աշխատավորներին և հարստանում նրանց աշխատանքի հաշվին, դա կլինի սոսկ պատմական փաստի արձանագրում, բայց ոչ ամենևին նրա ունեցած դերի գնահատություն:

Բանն այն է, որ ֆեոդալական տնտեսությունն այլ կերպ գոյություն ունենալ չէր կարող, դա նրա պահպանման և զար-

30 Նույն տեղում:

գացման բնականոն ուղին էր: Երբ էջմիածնի վանքը հայկական գյուղեր էր գնում մուլքադարական իրավունքով, ապա դա դրական առաջադիմական երևույթ էր այն իմաստով, որ նրանցից ստացված եկամուտները վանքի կողմից օգտագործվում էին նաև շինարարական, արտադրական նպատակներով: Հիշենք, որ այդ գյուղերը գնվում էին պարսիկ խաներից ու թուրք բեկերից, որոնք կողոպտում էին հայ աշխատավորներին առավել բարբարոսական, հիրավի անմարդկային մեթոդներով և կուտակված հարստությունը վատնում անարտադրողաբար:

Ֆեոդալական տնտեսության շահագործողական էությունը բացահայտելու հետ միասին պետք է նաև բնութագրել նրա ունեցած տեղն ու դերը մեր ժողովրդի պատմության մեջ: Պատմական առաջընթացը դասակարգային հասարակության մեջ ինքնին հակասական պրոցես է: Արտադրողական ուժերի զարգացումը տեղի է ունեցել շահագործողական հարաբերությունների պայմաններում և հանդիսացել է դրանց ծավալման ու խորացման արդյունք: Եվ ֆեոդալական տնտեսությունները եղել են այդ զարգացման ընդհանուր շղթայի անհրաժեշտ օղակները: Այդ տեսակետից առանձնահատուկ է եղել էջմիածնի տնտեսության դերը, որը ստեղծված իրադրության պայմաններում, ինչպես փորձեցինք ցույց տալ, զարգացել է ընդլայնված վերարտադրության ուղիով և դրանով իսկ ավելի մեծ չափերով նպաստել պատմական առաջընթացին, աշխատանքով ու ապրուստի միջոցներով ապահովել շրջակա գյուղերի հայ բնակչությանը: Հարցի այս կողմն է, որ ըստ արժանվույն չի գնահատվել սովետահայ պատմագիտության կողմից:

Այնուհետև, էջմիածինը ընդարձակ տնտեսական կապերի ու հարաբերությունների մեջ է եղել շատ երկրների հետ, որը միաժամանակ մեծ չափերով նպաստել է բազմաթիվ հայ գաղթօջախների տնտեսական զարգացմանը: Սիմեոն Երևանցու ծավալուն հիշատակարաններում շատ հաճախ հանդիպում ենք փոլիցայագրերի և դրամական գործարքների մասին հիշատակությունների: Փոլիցայագրերը մուրհակի տիպի

դրամական փաստաթղթեր էին, որոնցով էջմիածինը հնարավորություն էր տալիս հայ առևտրականներին կանխիկ դրամ ստանալ համապատասխան քաղաքների նվիրակային գանձարկղներից:

Հատկապես անհրաժեշտ է նշել էջմիածնի տպարանի գործունեությունը, որը մեծ դեր է կատարել հայ մտավոր մշակույթի զարգացման գործում: Կրոնական բնույթի գրքերի հետ միաժամանակ էջմիածնի տպարանում հսկայական պատմագիտական գրականություն է տպագրվել և տարածվել: Էջմիածինը, լինելով հայ ժողովրդի ոչ միայն սոսկ կրոնական, այլև ընդհանրապես հոգևոր մշակույթի խոշոր կենտրոն, միաժամանակ անգնահատելի դեր է կատարել մեր ժողովրդի պահպանման գործում, այն ժամանակաշրջանում, երբ թուրքական ու պարսկական բռնակալները աղգածուլման և ցեղասպանության վայրագ քաղաքականությամբ ձգտում էին ոչնչացնել հայությունն ընդհանրապես:

XV—XVIII դարերի հայ տնտեսագիտական մտքին նվիրված այս ուսումնասիրությամբ ամբողջանում է միջին դարերի հայ տնտեսագիտական մտքի պատմությունը<sup>31</sup>: Աշխատության փոքր ծավալը և համեմատաբար ոչ հարուստ բովանդակությունը պայմանավորված է մեր երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի ուրույն պայմաններով: Օտար բռնակալների լծի ներքո կեղեքվող ժողովրդի մտավոր կյանքը նույնպես կաշկանդված է եղել, ուստի և համապատասխան աղբյուրների թիվը մեծ չէ: Այդ բացը կարելի է լրացնել ձեռագիր աղբյուրների ուսումնասիրությամբ: Պատահական չէ, որ սույն աշխատության հինգ գլուխներից երկուսի բովանդակությունը կաղմում են հայ գաղթօջախներում ստեղծված հրապարակախոսական և իրավագիտական գործերը:

31 Միջին դարերի վաղ և զարգացած շրջանների հայ տնտեսագիտական մտքի պատմությունը ներկայացված է հեղինակի «Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը վաղ միջնադարում», Երևան, 1973, և «Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը IX—XIV դարերում», Երևան, 1970, աշխատություններում:

Սոցիալ-տնտեսագիտական միտքը Հայաստանում  
XV—XVIII դարերում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատմատնտեսական ակնարկ . . . . .	5
Առաջին գլուխ.—Սոցիալ-տնտեսագիտական միտքը Մատրևոս Ջուղայեցու ձեռագրերում . . . . .	11
1. Մատթևոս Ջուղայեցու աշխարհայացքը . . . . .	11
2. Տնտեսագիտական գաղափարները	
ա) Նյութական բարիքների արտադրությունն ու շրջանառու- թյունը . . . . .	25
բ) Ապրանքի և փողի մասին . . . . .	40
Երկրորդ գլուխ.—Սոցիալ-տնտեսական երևույթների գնահա- տումները պատմագրության մեջ . . . . .	52
Երրորդ գլուխ.—Սոցիալ-տնտեսագիտական գաղափարները ի- րավագիտական գրականության մեջ . . . . .	76
Չորրորդ գլուխ.—Ազգային-ազատագրական շարժումների գա- ղափարախոսության սոցիալ-տնտեսագիտական բովանդակու- թյունը . . . . .	100
Հին գերարդ գլուխ.—Հայաստանի տնտեսական պատմության մի դրվագ Սիմեոն Երևանցու աշխատություններում . . . . .	132

Հրատ. խմբագիր Ժ. Բ. ԱՓԻՆՅԱՆ  
Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ  
Տեխ. խմբագիր Հ. Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ  
Սրբագրիչ Ա. Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ИБ № 623

Հանձնված է շարվածքի 22. 04. 1982 թ.: Ստորագրված է տպագրու-  
թյան 15. 10. 1982 թ.: ՎՅ 05998: Չափը 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>: Թուղթ. № 1:  
Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն: Պայմ. 7,98,  
տպագր. 9,5 մամուլ: Հրատ. հաշվարկ 6,8 մամուլ: Տպաքանակ 1500:  
Պատվեր № 485: Հրատ. № 5714: Գինը 1 ո. 10 կ.:  
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ:  
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, Барекамутян, 24 г.  
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան,  
Բարեկամության փ., 24:  
Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван,  
Барекамутян, 24.